




Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
նշ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

6618. 175-6

ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԻ

VIII-ՐԴ ՊԼԵՆՈՒՄԻ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՑԵՐԵՎԱՆ 1927

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԿԿ (Բ) ԿԵՆՏԿՈՍԻ ԱԳԻՏ ԲԱԺՆԻ


LIBRARY
OF THE
BIBLIOTHEQUE
NATIONALE
PARIS

3K 97



ԿՈՄՍՈՒՆԻՍՏԱԿԱՆ
ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԻ
VIII-Ի ԴԼԵՆՈՒՄԻ
ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

10624
A II
23275



ՀԱՅՄՈՆԻԳՐԱՖԻ I ՏՄԱՐԱՆ
ՊԱՏ. 4054 ԳՐԱՌ 282 Բ.
ՏԻՐԱԺ 1000

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՅԵՎ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՎՏԱՆԳԻ ՄԱՍԻՆ

Կոմունիստական Ինտերնացիոնալի Գործկոմի անցյալ տարվա
դեկտեմբերին կայացած 7-րդ ընդլայնած պլենումն իմպերիալիս-
տական նոր պատերազմի վտանգն ազդարարեց բանվոր դասակար-
գին : Այդ ժամանակվանից հետո Չինաստանում և Անգլիայում տե-
ղի ունեցած իրադարձություններն ամբողջովին հաստատեցին Կո-
մունիստական Ինտերնացիոնալի Գործկոմի կանխատեսածը : Չորք
կենտրոնացնելով Չինաստանում, ոմբակոծելով նրա քաղաքները,
միջազգային կապիտալը փաստորեն պատերազմ է սկսել Չինաս-
տանի աշխատավոր մասսաների դեմ, վորոնք իրենց ազատագրու-
թյան համար են կռվում : Չինաստանի խորհրդային ներկայա-
ցուցչության վրա կատարված հարձակումը, վոր դործել էր Չան-
Յո-Լինը Լոնդոնի դրդումներով և կապիտալիստական բոլոր կա-
ռավարությունների դիվանագիտական մարմնի աջակցությամբ,
Լոնդոնի խորհրդային առևտրական ներկայացուցչության վրա
կատարված հարձակումը և դրանից բղխած խղումն անգլո-խոր-
հրդային հարաբերություններին—դրանք բոլորն էլ պատերազմ
հրահրող չարամիտ գործողություններ են :

Ավելի քան յերբ և իցե արթուն պիտի կենա համայն աշխարհի
բանվոր դասակարգը : Բոլոր յերկրների կոմունիստներն ավելի պի-
տի սեղմեն իրենց շարքերը և իրենց բոլոր ուժերը պետք է գումա-
րեն հանդեպ Չինաստանում արդեն սկսված և ԽՍՀՄ դեմ պատ-
րաստվող պատերազմի :

ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՊԱՏԵՐԱԶՄԻ

1914—18 տ. տ. համաշխարհային պատերազմն ամբողջ յերկ-
րագնդի աշխատավորության համար ստեղծեց ամենադաժան և
ավերիչ պատերազմների մի շրջան, գաղութային ամենատանձա-
րակ և անողոք կողոպուտ և ամենակոպիտ բռնություններ բան-
վոր դասակարգի հանդեպ : 10 միլիոն սպանված և 19 միլիոն ին-
վալիդ ու հաշմանդամ, տնտեսական միջոցների հսկայական վատ-
նում, համաշխարհային տնտեսական կապերի խանգարում յերկար
ժամանակով, ընկնող վալյուտա, ժողովրդական մասսաների աղքա-

սացում, ամեն տեղ գլուխ բարձրացնող ներքին ռեակցիա, կապի-
տալի կատաղի արշավանք բանվոր դասակարգի վրա, բալկանա-
ցրած Յեվրոպա, կապիտալիստական յերկրների համաշխարհային
պատերազմից հետո ավելի սուր բնույթ ստացած հակամարտու-
թյուն—ահավասիկ 1914—18 տ. տ. պատերազմի արդյունքները:

Պատերազմը վերջանալուց անմիջապես հետո սկսվում է «փոքր
պատերազմների» շրջանը, պատերազմների, վորոնք մղվում են
սահմանները հաստատելու համար:

Այդ «փոքր պատերազմներն» էլին՝ Գերմանիայի և Լեհաստա-
նի պատերազմը Վերին Սիլիզիայի համար, Ֆինլանդի գինված գրա-
վումն իտալական Փաշխտների կողմից, հուլյն-թրքական պատե-
րազմը Ջմյուռնիայի համար և բալկանյան պետությունների ուղ-
մական ընդհարումները: Վենդերիայում պրոլետարական դիկտա-
տուրա հաստատվելու հետևանքն է լինում կապիտալիստական
Չեխիայի և Ռումինիայի հարձակումը Վենդերիայի վրա: Միևնույն
ժամանակ կապիտալիստական աշխարհն իր ուժերն է հավաքում
Խորհրդային Ռուսաստանի պրոլետարական հեղափոխությունը
խեղդելու համար: Սկսվում է 1918—19 տ. տ. ինտերվենցիան,
վորը հետագայում վերածվում է մի պատերազմի, վոր մղում եր
Լեհաստանն ընդեմ Խորհուրդների յերկրի: Դրան հաջորդում է
Ռուրի գրավումը ղենքի ուժով, ապա Ֆրանսիայի դադութային
արշավանքը՝ Մարոկկոյում ապստամբած ռիֆերի ու դրուզների
դեմ: Ֆրանսիական իմպերիալիստների Սիրիայում մղած պատե-
րազմով լրանում է այն տասնամյակը, վոր անցել է 1914—18 տ. տ.
մեծ պատերազմից հետո: Հետպատերազմյան ամբողջ շրջանը լի
է իմպերիալիստական փոխադարձ պայքարով և մասնակի պա-
տերազմներով, վոր մի նախերգանք է նոր մեծ պատերազմների:

Պրոլետարական Ռուսաստանը ծանր հարված հասցրեց հա-
մաշխարհային կապիտալիզմին: Գաղութների ազգային հեղափո-
խական շարժումները նոր ճեղքվածք են առաջ բերում համաշ-
խարհային կապիտալիզմի որդանիզմում: Այս յերկու գործոննե-
րի ներկայությունը, դրա հետ միասին նաև կապիտալի հարձակ-
ման դեմ համաշխարհային բանվոր դասակարգի կողմից ցույց
առվող դիմադրությունը, արդեն անհնար են դարձնում կապի-
տալիստական կարգերի կայունությունը: Պատերազմից հետո յե-
կող տարիները կապիտալիզմի խիստ ուժեղ «փտումի» տարիները
յեղան: Համաշխարհային կոնյունկտուրայի տատանումները կոր-
ցրել են իրենց նախասպառազմյան պարբերական բնույթը. ճրգ-

նաժամերը ծագում են համաշխարհային տնտեսութեան մերթմեկ, մերթ մյուս բեկում, չափազանց կարճատև ու տենդային վերելքները փոխարինվում են յերկարատև դեպրեսիաներով: Աշխարհի բաժանումը, — վորը պատերազմից հետո իմպերիալիստական գիշատիչների ձեռքով կատարվեց, — նոր և կատաղի մրցակցութեան և հասունացող կոնֆլիկտների աղբյուր դարձավ իմպերիալիստական պետութիւնների միջև:

Համառ կռիվ և տեղի ունենում այն շրջանների համար, վորոնք հում նյութերի աղբյուր կամ ոտարերկրյա կապիտալի ներմուծման ասպարեղ են հանդիսանում: Կապիտալիստական պետութիւնները մաքսային նոր պատնէշներով միմիանցից բաժանվեցին, սեղմելով ապրանքաշրջանառութեան հին ուղիները: Խոշորագույն կապ. պետութիւնների լայն մասսաների սպառման կրճատումը, գաղութների և անդրովկիանյան յերկրների հասունացած աղգային արդյունաբերութիւնը, — յերկրներ, վորոնք առաջ վորպէս ոտարերկրյա ապրանքների սպառման շուկաներ էին ծառայում, համաշխարհային կապիտալիզմի առջև չափազանց սուր կերպով շուկայի հարցն են դնում: Շուկայի համար մղվող կռիվն այնպիսի կատաղի ձևեր և ընդունում, վորպիսին նախապատերազմյան կապիտալիստական տնտեսութեանը յերբեք ծանոթ չէ յեղել: Իսկ այդ տնտեսական կռիվն իր հետեից գինոված ընդհարումներ և բերում:

Վերջին տարիների հարարերական համաասրակչութիւնը, — վորը հաստատվել է՝ մի կողմից իմպերիալիստական պետութիւնների միջև, մյուս կողմից իմպերիալիստական պետութիւնների և ԽՍՀՄ ու ազատագրվող գաղութների (Չինաստան) միջև, — ավելի ու ավելի խախտվում է բացահայտ ռազմական կոնֆլիկտներով, վորոնք ցույց են տալիս, թե այդ համաասրակչութեան վերջը մոտեցել է և նոր իմպերիալիստական պատերազմի պայմանները դարգացել են: Ամենուրեք, յերկրագնդի վրա պայթուցիկ նյութերի կուտակումներ են կատարվում, վորոնք առաջին իսկ կայծից կարող են բռնկվել: Իտալո-հարավսլավյան կոնֆլիկտը, իտալական իմպերիալիզմի ադրեսսիվութիւնը Ալբանիայում, նրա սպառնալիքը Թուրքիային, իտալիայի և Ֆրանսիայի լարված հարարերութիւնները, լեհ-գերմանական տնտեսական պատերազմը, անգլո-ֆրանսիական հակամարտութիւնը Փոքր Ասիայում, Մեծ Բրիտանիայի կռիվն այն ճանապարհների համար, վորոնք տանում են դեպի աֆրիկական գաղութները, նրա

կոխվր Միջերկրական ծովի վրա գերիշխելու համար, Միացյալ-Նահանգների ագրեսիվ դերը Խաղաղ Ովկիանոսում, Մ.-Նահանգների կողմից Նիկարագուան ճնշելը, վորով ճանապարհ և հարթվում Մեքսիկայի ու Հարավային Ամերիկայի ստրկացման համար, ճաշոնական իմպերիալիզմի կողմից Ասիայի Ժողովուրդների դեմ ստեղծված սպառնալիքը—այս բոլորը վերահաս պատերազմի արյունոտ գրքի միայն առանձին էջերն են։ Սակայն կասկածից դուրս և, վոր ներկա բոլեյին խաղաղության գործին ամենից շատ սպառնացող գործոնը Մեծ Բրիտանիան և հանդիսանում։ Միջազգային դրությունը բնորոշող նոր յերևույթն այն և, վոր Մեծ Բրիտանիան նորից հեզեմոնիա յե ձեռք բերել յեվրոպական գործերում։ Նրա ձեռքին և դանվում միջազգային և գաղութային քաղաքականության նախաձեռնությունը, նա յե կարողվարում Ադգերի Լիգան, ներկա բոլեյին, Ընդհանրապես, նա յե ղեկավարում Չինաստանի և ԽՍՀՄ դեմ ուղղված միասնական ճակատը։

ԽՍՀՄ ՅԵՎ ՉԻՆԱՍՏԱՆԸ ՎՈՐՊԵՍ ՊԱՏԵՐԱԶՄԻ

ՀԱՆԳՈՒՅՑԱՅԻՆ ԿԵՏԵՐ

Կապիտալիստական պետությունների միջև գոյություն ունեցող բոլոր ներհակությունները հետին տեղն են բռնում հիմնական այն ջրբաժան կետի համեմատությամբ, վորն ամբողջ աշխարհը բաժանում և յերկու բանակի—մի բանակում—ԽՍՀՄ և հեղափոխական Չինաստանը, մյուսում—ամբողջ կապիտալիստական աշխարհը։ Չինաստանը և ԽՍՀՄ—սրանք ամբողջ միջազգային դրության յերկու հանգույցային կետերն են։ Այստեղ և, վոր այժմ ամենից շատ են կուտակվում պատերազմի ամպերը։ Չինաստանը և ԽՍՀՄ, վորոնք Ասիայի մեծագույն մասը և Յեվրոպայի կես մասն են կաղմում, վորոնք չոգտադործված տնտեսական ուսուրդներ և հարյուրավոր միլիոն բնակչություն ունեն,—հում նյութերի այս յերկու անսպառ շտեմարանները, այս յերկու լայնածավալ շուկաները—միջազգային կապիտալի համար կյանքի և մահվան հարց են։ Պայքարը այդ յերկու շուկաների համար կշարունակվի այնքան, մինչև վոր համաշխարհային պրոլետարիատը վերջ չտա միջազգային բուրժուազիայի տիրապետությանը։

Չինական հեղափոխությունը հսկայական նշանակություն ունի համաշխարհային պրոլետարիատի համար։ Չինական հեղափոխության բանվորազյուղացիական ուղու հաղթությունը հզոր

խթան կհանդիսանաւ համաշխարհային բանվորական շարժման
և, առաջին հերթին, անգլիական բանվոր դասակարգի հեղափո-
խականացման համար: Հեղափոխականացումն առաջավոր կապի-
տալիստական յերկրներում կհասնէր շտեմնաժամ քարձության:
Ամբողջ աշխարհում որչեկտիվ—հեղափոխական պայմաններ կբո-
ւանդեմէյին խորը դիտակցված մասսայական շարժումներէ հա-
մար:

Այն դեպքում, յերբ պրոլետարիատը անգոր գտնվի իմպերիա-
լիստական թուր հեղափոխական Չինաստանի վրէժ արձակելու,
իմպերիալիստներէ հաղթությունը Չինաստանում այն նշանա-
կությունը կունենա, վոր, առաջին՝ նորից կապիտալիստական
իրավակարգը ժամանակավորապէս կկայունանա ամբողջ աշխար-
հում, յերկրորդ՝ իմպերիալիստական յերկրներում մոլեգին ուեակ-
ցիա կսկսվի բանվոր դասակարգի դեմ և յերրորդ՝ իմպերիալիս-
տական բոլոր հարձակում կգործի ԽՍՀՄ վրա:

Այդ պատճառով իմպերիալիստներէ կողմից շինական հեղա-
փոխությունը ճնշելու դեմ մղվող կռիվը միաժամանակ յեվրո-
պական, ամերիկյան, ճափոնական բանվոր դասակարգի ինքնա-
պաշտպանության կռիվն է ընդեմ կապիտալի հարձակման, նը-
րանց կռիվն է ընդեմ յեվրոպական պատերազմի, նրանց կռիվն է
հանուն իրենց սեփական յերկրի սոցիալական հեղափոխության
հաջողության:

ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ԴԱՐԱՇՐՁԱՆԸ

Իմպերիալիստական քաղաքականության նոր փուլը բնորոշ-
վում է նրանով, վոր կապիտալիզմը պատրաստվում է «փոքր պա-
տերազմներից» անցնելու «մեծ պատերազմների»: Չինաստանում
տեղի ունեցող պատերազմը, վոր իր ձևերով հիշեցնում է 18—19
թ. թ. խորհուրդների յերկրում կատարված ինտերվենցիան,
սկիզբն է դնում «մեծ պատերազմների» շրջանին: Իմպերիալիս-
տական ուժերի կողմից Չինաստանում կատարվող ինտերվեն-
ցիան, միջազգային իր նշանակությամբ, մեծ պատերազմն է
արդեն: Դա մեծ պատերազմ է, վորովհետեւ մղվում է Անգլիայի
գլխավորությամբ իմպերիալիստական մեծագույն պետություն-
ների կողմից՝ ընդեմ 400 միլիոն չին աշխատավորության: Այդ
պատերազմի հետ անմիջականորեն կապված է 4 յերկրամասի
հակառակորդը՝ Ասիայի, Յեվրոպայի, Ամերիկայի և Ավստրալիա-
յի վիճակը: Նա անխուսափելիորեն նոր պատերազմներ կծնի,

յեթե չխեղդվի իր սաղմում: Այդ պատերազմը արդեն սկսում է վերածվել մի այլ պատերազմի, վոր ուղղված է Խորհրդային Միության դեմ: ԽՍՀՄ դեմ անգլիական պաշտպանողական մամուլի դործածած լեզուն հիշեցնում է պատերազմող պետության ռազմական լեզուն:

Այնպիսի դործողություններ, ինչպիսիք են Պեկինի Խորհրդային դեսպանատան վրա կատարված հարձակումը, դիվանագիտական սուբհանդակներին դերելը, Լոնդոնի ատկտրական ներկայացուցչության վրա դործված հարձակումը—դրանք բոլորն ել դեպքեր են, վորոնց՝ կապիտալիստական պետությունների միջև ընդունված միջադգային հարաբերությունների ասպարիզում պատասխանում են պատերազմի սաղմ պարունակող ռեպրեսսիաներով:

Միմիայն Խորհրդային կառավարության խաղաղ սկզբունքների վրա հիմնված քաղաքականությունն է, վոր մինչև այժմ վրկել է Անգլիայի և ԽՍՀՄ աշխատավոր մասսաներին հակա-Խորհրդային այդ պատերազմից, վոր այնուամենայնիվ նյութվում է Մեծ Բրիտանիայի կողմից՝ սխտեմատիկ պրովոկացիայի միջոցով:

Սակայն այդ պատերազմն սպառնում է տարածվել ամբողջ Ասիայում և Խաղաղ-ովկիանոսյան շրջանում: Ինքն ըստ ինքյան հասկանալի չէ, վոր Չինաստանի հեղափոխությունը բանվորադյուղացիական ուղիով ընթանալու դեպքում, իմպերիալիստները կատաղի փորձեր պիտի կատարեն խեղդելու Չինաստանի աշխատավոր մասսաների հաղթական շարժումը և հեղափոխական այն շարժումները, վորոնք դրա հետևանքով պետք է ծաղեն շնդկաստանում, Փրանսիական շնդկաշինում, Ինդոնեզիայում, Ֆիլիպյան կղզիներում և Կորեյայում:

Դա մի յերկարատև մեծ պատերազմ կլինեի, իմպերիալիստական խոչորագույն յերկրների միացյալ բլոկի պատերազմն ընդդեմ Ասիայի ապստամբած աշխատավոր մասսաների՝ հեղափոխական Չինաստանի գլխավորությամբ: Մյուս կողմից—չինական հեղափոխություն պարտությունն ավելի ևս կսրեր Անգլիայի, Ճափոնիայի և Միացյալ Նահանգների հակամարտությունները Չինաստանում և անխուսափելիորեն Խաղաղ-ովկիանոսյան պատերազմ կառաջացներ իմպերիալիստական պետությունների միջև: Չինաստանում տեղի ունեցող պատերազմի հետ սերտորեն շաղկապված է ԽՍՀՄ ողակման քաղաքականությունը, վոր ինտենսիվ

յեղանակով առաջ և տարվում յեվրոպական և ասիական յերկրա-
մասերի աշլ կետերում: Անգլիական դիվանագիտությունն ան-
դուլ կերպով աշխատում և մերձբալթյան հակախորհրդային Ֆր-
րոնտ ստեղծելու, վոր ձգվելու յե Ֆինլանդիայից մինչև Ռումի-
նիա՝ Լեհաստանի վրայով: Նա փորձում և այդ Ֆրոնտին միացնել
նաև Լիտվային՝ այնտեղ ևս Փաշխտական հեղաշրջում կազմա-
կերպելով:

Փաշխտական Իտալիայի ոժանդակությամբ, նա ձգտում և
ամրացնել Բալկաններում, հակախորհրդային կոալիցիայի մեջ
դրավելով և Հունգարիային:

Դրանով նա ձգտում և դանուբյան յերկրների բաժանանին
յայն հակախորհրդային Ֆրոնտ ստեղծել:

Հակախորհրդային Ֆրոնտում ամենաակտիվ դերերից մեկը
Լեհաստանը պետք և խաղա, բայց պատերազմի դեպքում ան-
հրաժեշտ և նրա թիկունքը ապահովել: Անգլիական իմպերիա-
լիզմի բոլոր ջանքերն ուղղված են այն բանի շուրջը, վոր Գեր-
մանիային իր ազդեցության շրջանի մեջ առնի և կարգավորի Լեհ
գերմանական հարաբերությունները ԽՍՀՄ դեմ ընդհանուր պայ-
քար մղելու համար: Ահա թե վորն և Գերմանիայի «արևմտյան»
որենտացիայի և Լոկարնոյի քաղաքականության վողջ միտքը, և
արդեն վերջին ժամանակներս Անգլիան ձգտում և իր համար ա-
պահովեցնել և Ֆրանսիայի համագործակցությունը՝ ԽՍՀՄ ո-
ղակման դործում: Միջին Ասիայում, Աղվանիստանում, Պարս-
կաստանում, Մերձավոր Արևելքում, Թյուրքիայում, Հեռավոր
Արևելքում ամեն տեղ Անգլիան ԽՍՀՄ դեմ հյուսում և ամենա-
բարդ ինտրիգների մի խիտ ցանց:

Անգլիական դիվանագիտությունը փորձում և միջազգային
տնտեսական կոնֆերենցիան ոգտագործել ԽՍՀ Միության տըն-
տեսական բլոկադայի համար: Միաժամանակ ԽՍՀՄ սահմանակից
յերկրներում, առանձնապես Լեհաստանում և Ռումինիայում, պա-
տերազմի տենդային պատրաստություններ են տեսնվում:

ԹԻԿՈՒՆՔԻ ԱՄՐԱՑՈՒՄԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՄԱՐ

Կոմիներնի Գործկոմի վերջին ընդլայնած պլենումից հետո
մի շարք յերկրներում տեղի յեն ունեցել այնպիսի դեպքեր, վո-
րոնք չափազանց ցուցադրական են ռազմական պատրաստու-
թյունների այն միջավայրի համար, վորի մեջ են ապրում բո-
լոր խոշոր կապիտալիստական յերկրները: Բոլոր յերկրներում

այժմ մենք նկատում ենք ուսակցիայի ամրացում և բանվոր դասակարգի ճնշման համար ձեռք առնված տերորիստական-Ֆաշիստական մեթոդների ավելի կամ պակաս շափուով միջազգայնացում: Ներքին ուսակցիային զուգընթաց ընթանում և արտաքին ագրեսիվությունը: Վորպեսզի կարողանա պատերազմ մղել, կապիտալիզմը պետք է իր թիկունքը «խաղաղացնի»: Ժամանակակից պատերազմի բնույթը պահանջում է ֆրոնտում գործող մարդկանց ահագին մասսաների հետ միասին ունենալ և հսկայական գործարանային բանակներ, վորոնք պետք է սպասարկեն պատերազմի ահռելի մեքենան:

Այդ մեքենաները պետք է դառնան պատերազմի պտուտակները, նրանցով պետք է սպանվի պայքարելու կամքը, նրանց արհամիտութեան կազմակերպությունները պետք է դառնան պատերազմի ամբողջ մեխանիզմը շարժող հիմնական լծակներից մեկը:

Ահա, այստեղից է ծագում արհմիությունների «պետականացման» փորձերը, նրանցից՝ տասնյակ տարիների համառ պայքարի ընթացքում ձեռք բերված տարրական իրավունքների խլելը:

Այդ մտքով առաջին հերթին անհրաժեշտ է մատնացույց անել Մեծ Բրիտանիայի վրա: Նա այժմ համաշխարհային ուսակցիայի գլուխ է կանգնած:

Անգլիական կապիտալը ճնշելով հանքագործերի գործադուլը, միջազգային բուրժուազիային հարձակման անցնելու ազդանշանը տվեց:

Ջինաստանի դեմ տեղի ունեցող պատերազմը, ԽՍՀՄ դեմ հարձակման անցնելը, Նիկարագուայի վրա կատարված հարձակումը, անգլիական հանքագործերին հասցրած հարվածն—այդ բոլորը միևնույն շղթայի ողակներն են կազմում:

Անգլիայում գործադուլի իրավունքը փաստորեն վերացվում է: Արհմիությունների վերաբերյալ նոր որոնքը ձգտում է զրկել սրբեկտարիատին պատերազմի դեպքում վոչ միայն պայքարի այնպիսի զենքից, ինչպես ընդհանուր գործադուլն է, այլև ընդհանրապես գործադուլի իրավունքից: Կառավարությունը կարող է ամեն մի գործադուլ, նույնիսկ խաղաղ ժամանակն անգամ, ասորին նի հայտարարել:

Իտալիայում, բանվոր դասակարգի համար ամենադաժան տերորի միջոցառում, ուֆոբիստական առաջնորդների ոգնությամբ այնպիսի միջոցների յե ձեռնարկվում, ինչպես արհեստակ-

ցական միությունների պետականացումն է, վորն իրականում աշխատավոր մասսաների ինքնուրույն կազմակերպությունների լիակատար լուծարք է նշանակում: Այն, ինչ վոր բուրժուազիան չէր վստահանում կատարել համաշխարհային պատերազմի ընթացքում, այժմ մեր աչքի առջև կատարվում է Ֆաշիզմի միջոցով:

«Քաղաքացիական խաղաղության» սլոգանիկան հանգում է իր տրամաբանական վախճանին: Վերջապես, Ֆրանսիայում ընդունվում է «ազդի սպառնադինման» որենքը, վորի ելությունը վոչ ալլ ինչ է, յեթե վոչ մի հրեշալին միլիտարիզացիայի որենք, վորը ներս է թափանցում քաղաքական կյանքի բոլոր ծակոտիները:

Այդ նոր որենքի համաձայն պատերազմի դեպքում, ամբողջ ազգաբնակչությունը թե՛ մայր յերկրում է թե դադութներում գորահավաքի յե յենթարկվում առանց սեռի և հասակի խտրության: Ձեռնարկություններում աշխատող բանվորները հավասարեցվում են զինվորներին: Ռազմականացվում են պրոֆմիությունները, ինչպես և բոլոր աստղիացիաները: Այդպիսով վերացվում է գործադուլի իրավունքը: Գործադուլին մասնակից ամեն մի անձնավորություն յենթարկվում է ռազմադաշտային դատարանին:

Ճամփոնիայում ռազմականացվում են զպրոցները, դաժան որենքներ են սահմանվում պատերազմի ժամանակ գործադուլ անող բանվորների դեմ:

Գերմանիայում վերացվում է գերմանական հեղափոխության նվաճումներից մեկը—ութ ժամյա բանվորական որը—և նոր որինադներ են մշակում գործադուլի դեմ: Ֆաշիստներն աստիճանաբար թափանցում են պետական և վարչական ապարատի մեջ:

Լեհաստանում բանվորական դասակարգի դեմ գլուխ բարձրացրած սեակցիան իր մեթոդներով գերազանցում է ցարիզմի կառավարական մեթոդներին: Վոչնչացվում են բելոռուսների և մյուս ազգային փոքամասնությունների ազգային կազմակերպությունները: Բարոյական անկում ստեղծելով և կաշառատվության դիմելով, Պիլսուդսկին ազենատուրաներ է հաստատում ամենուրեք, վորոնց նախատակն է ապահովել ռազմադաշտի թիկունքը ազգային փոքրամասնությունների կողմից՝ ԽՍՀՄ դեմ պատերազմ ծագելու դեպքում:

Նույն մեթոդներով էլ Ռումինիան է ամրացնում իր թիկունքը Բեսարաբիայում: Այս բոլոր ձեռնարկումներն էլ մոբիլիզացիայի միևնույն պլանի առանձին մասերն են:

Խոչոր դեր են կատարում այդ պլանի մեջ բուրժուազիայի զինված խմբերն ևս: Մինչև 1914 թվի համաշխարհային պատերազմ

մը, կապիտալիստական աշխարհում այնքան մեծ ծավալ չեն ստացել բուրժուազիայի զուտ դասակարգային հակահեղափոխական բանակը: Մասսայական շարժումների դեմ պայքարելիս կապիտալիզմը մինչև այդ պատերազմն ոգտադործում էր «սկետական» որդանները՝ իր մշտական բանակը, վոստիկանությունը, ժանդարմերիան: Պատերազմից հետո ավելի սուր բնույթ ստացած դասակարգային պայքարը ջնջեց բուրժուազիայի «դեմոկրատիզմի» վերջին մնացորդներն ևս: Կապիտալն ամենուրեք ստեղծում է իր մարտական կազմակերպությունները, վորոնց թիվը մի շարք յերկրներում գերազանցում է կանոնավոր բանակի չափը:

Այդ ջոկատների նսլատակն է «խաղաղ» ժամանակ պաշտպաններքին ուեակցիան, իսկ պատերազմի ժամանակ՝ ինչպես և նրա վերջանալուց հետո՝ հուսալի մշտական պահեստի ուժի դեր կատարել ծագելիք հեղափոխական շարժումների դեմ, վորպեսզի կարելի լինի մասսաներին պատերազմի քչել մորթիղացիայի ժամանակ, վորպեսզի իմպերիալիստական նոր պատերազմի դեպքում պատրաստի կադր կազմեն նրանք ժամանակակից բանակների համար:

Կապիտալիստական թիկունքի ամրացման գործում խոշոր գործոն է հանդիսանում նաև այն աշխատանքը, վոր կատարում են կանանց մեջ նացիոնալիստական կուսակցությունները և ֆաշիստական կազմակերպությունները: Վերջիներս հաշվի յեն առնում կանանց մասսայի խոշոր դերը պատերազմի ժամանակ՝ թե տրետեսական ասպարատի մեջ (զինագործարաններ, յերկրագործություն, տրանսպորտ և այլն) և թե ադմինիստրացիայում:

Իմպերիալիստական ամեն մի պատերամ մի պատերազմ և բանվոր դասակարգի և աշխատավոր մասսաների դեմ: Նա բուրժուազիայի ամենակատաղի դիկտատուրայի ճանկն է գցում աշխատավորությունը: Պատերազմը «վերացնում» է բոլոր ադատությունները, նա բազմիցս ուժեղացնում է բանվոր դասակարգի պայքարը ճնշող և խեղդող ասպարատը: Բայց Սորհրդային Միության դեմ մղվելիք պատերազմը մի ուրույն սլատերազմ է լինելու: Վերջինս հանդիսանալու յե մի պատերազմ, վոր անմիջականորեն ուղղված պիտի լինի բանվոր դասակարգի և կոմունիզմի դեմ՝ ընդհանրապես վողջ յերկրագնդի վրա և ամենից առաջ Յեվրոպայում: Բուրժուազիան ներկայումս էլ արդեն աշխատում է դալիք պատերազմի ուղին հարթել և ապագայի խոչընդոտները վերացնել՝ բացառիկ որենքներ սահմանելով կոմունիստական կուսակցությունների դեմ: Բուրժուազիան պիտի ձգտի ֆիդիքապես վոչնչաց-

անլու պրոլետարական ամենասերտիվ կադրերը: Այդ պարզորոշ ապացուցում է այն կռիվը, վոր արդեն իսկ մղում է բուրժուազիան կոմունիզմի դեմ: Չինաստանում նա խեղդում է գնդակահարում և կոմունիստներին Չան-Ֆո-Լինի և Չան-Կայ-Շիի ձեռքով, Իտալիայում և Լատինական Ամերիկայում նա դավադրաբար սպանում է նրանց մութ անկյուններում: Նա գնդակահարում է նրանց Բալկաններում՝ Ռումինիայում և Բուլղարիայում, Լեհաստանում և Լիտվայում: Չոխո-Սլովակիայում նա կոմունիստներին դատի յեյենթարկում, մեղադրելով նրանց լրտեսության մեջ: Փրանսիայում նա հալածանքի յեյենթարկում կոմունիստներին՝ իբրև ոտար պետությունների ագենտների: Գերմանիայում և Հունգարիայում ևս հալածանք սկսելով կոմունիստների դեմ, բուրժուազիան տասնյակներով աքսորում է նրանց տաժանակիր աշխատանքի: Յեվ յեթե առհասարակ իմպերիալիստական պատերազմների ժամանակ բուրժուազիան վռաքի տակ է տալիս պատերազմի բարբարոս յեղանակները, սահմանափակող բոլոր «միջազգային համաձայնությունները», պարզ է, վոր ավելի ևս իմպերիալիստական բնույթ կրող մի պատերազմում՝ Սորհրդային Միության և գաղութներում ապստամբող ժողովուրդների դեմ իր մղած դասակարգային պատերազմում, նա ամենասոսկալի միջոցներ պիտի գործադրի աշխատավոր մասսաներին բնաջինջ անելու համար:

Բանվորական մասսաներն այժմ իսկ պարզ կերպով պիտի գիտակցեն բուրժուազիայի ռազմական պատրաստությունների հակահեղափոխական բնույթը:

ՄԻԼԻՏԱՐԻԶՄԻ ԱՃՈՒՄԸ

Թիկունքն ամրացնելու համար գործադրված այս բոլոր ձեռնարկումների հետ միաժամանակ, մոբիլիզացիայի յեն յենթարկվում պատերազմի Ֆրոնտի բոլոր ռեսուրսները: Որեցոր ուժեղանում է միլիտարիզմը, աճում են պատերազմական բյուջեները (պատերազմական ծախսերը համարյա կրկնապատկվել են): Սոսկալի չափերի յե հասել պատերազմական ինդուստրիան: Ներկայիս կապիտալիստական բանակները, արդեն ոգտագործած լինելով մարդկային բոլոր ազբյուրները, իրենց ամբողջ ուշադրությունը կենտրոնացնում են ռազմական մեքենայի տեխնիքական կատարելագործման վրա: Բանակները հզփացել են գնդացիներով, սոսկալի չափերի յե հասնում թնդանոթների հեռաձգությունը, ուժեղանում է սավառնակների բեռնունակությունը, ուժեղանում է ռումբերի

ուծն ու պայթյունի շառավիղը, դործադրվում են անհատական տանկեր, նորանոր դաղեր են հայտնադործվում, հրկիղիչ հատուկ նյութեր են պատրաստվում, վորոնք կարող են աչրել վոչնչացնել ամբողջ դորագնդեր և գիվիղիաներ: Բախտերի ոլոգիական պատերազմի համար հատուկ միկրոբներ են մշակվում, վորոնք տարափոխիկ հիվանդություններ պիտի տարածեն թշնամու բանակի մեջ և այլն: Ապագայի պատերազմը—մեքենայացրած մի պատերազմ է լինելու: Յուրաքանչյուր յերկիր պիտի վերածվի մարդկային ցեղի վոչնչացման մի հսկայական դործարանի: Մեքենայացրած սպանության մեջ վճռական դեր պիտի կատարի մոտորը: Ռազմական տեխնիկան հասել է իր դարգացման դադաթնակետին—այդ իսկ պատճառով կապիտալիստական պետություններն ստիպված պիտի լինեն մարդկային ահագին զանգվածներ նետել ոազմական դործողությունների վայրերը: Հենց այդ նպատակով է, վոր կապիտալիստական պետությունները վերակազմում են իրենց բանակները՝ թե՛ մեծացնելով մշտական կադրերը և թե՛ ամբողջ ադգաբնակությունը միլիտարիզացիայի յենթարկելով: Միևնույն ժամանակ Ֆրոնտի և թիկունքի տարրերությունը պիտի վերանա՝ շորհիվ ավիացիայի լայն դործադրության, նորադույն ոումբերի ավերիչ հատկությունների և թնդանոթի հեռաձգության:

Ապագա պատերազմի հետևանքները կդերազանցեն այն բոլոր արհավիրքները, վորոնց մասնակից է յեղել աշխատավորությունը 1914—18 թ. թ.: Այդ իսկ պատճառով ահագին կարևորություն է ստանում այդ դերը, վորը վիճակված է բանվոր դասակարգին և նրա կազմակերպություններին, և ամենից առաջ պրոֆմիություններին, առանց վորոնց պատերազմն անհնարին է: Նրանց հակակովը պատերազմի դեմ, միացած բանակի հակառազմական հեղափոխական պայքարին, ճակատադրական հետևանք կունենա իմպերիալիստական շտաբների համար:

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԻԴԵՈԼՈԳԻԱԿԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ.

1914—18 թ. թ. պատերազմից հետո Յերկրորդ Ինտերնացիոնալի և Ամստերդամի ամենադլխավոր Ֆունկցիան բնորոշվում էր այն հանգամանքով, վոր նրանք միջադդային բուրժուազիայի ադիտացիայի մի բաժանմունքն էյին հանդիսանում, մի բաժանմունք, վորի պարտականությունն էր՝ արդարացնել կապիտալիստական դադրելի կարգերը: Կապիտալի և սոցիալ դեմոկրատիայի միջև աշխատանքի բաժանում էր հաստատվել: Կապիտալիզմն սպառա-

զինվում էր պատերազմներին համար տեխնիկական պատրաստու-
թյուններ տեսնելով, սոցիալ-դեմոկրատիան էլ հող էր պատրաս-
տում այդ պատերազմներին համար խղեոլողիկ ճանապարհով: Այդ
խղեոլողիկ նախապատրաստումը յերկու դժուր էր ընթանում:

ա) Նախ և առաջ սոցիալ-դեմոկրատներն աշխատում էին ար-
դարացնել իմպերիալիստների միջև մղվելիք պատերազմը: Հել-
ֆերդինգի թեորիան, վորի համաձայն ուլտրա-իմպերիալիզմը
«սոցիալիստական» մի եպոխա չէ, յերբ խոշոր տրեստների միա-
ցումն ու «դեմոկրատիայի սկզբունքները» փոխադրվում են ար-
տաքին քաղաքականության ասպարեզը—համապատասխանում էր
սոցիալ դեմոկրատական կուսակցությունների պրակտիկային,
վորի արտահայտություններն էին՝ հողուտ Ազգերի Լիգային
մղված այն պրոպագանդան, վոր նա պատերազմի առաջն առնելու
ընդունակ մի որդան է, Վիլսոնիզմի, Դաուեսի ծրագրի և Լոկար-
նոյի պաշտպանումը և այլն: Այդ քաղաքականությամբ, սոցիալ-
դեմոկրատիան թմրեցնում էր մասսաների զգոնությունը, նրանց
իլլյուզիաներ ներշնչելով, թե պատերազմների շրջանն անցել է
արդեն:

բ) Սոցիալ-դեմոկրատիան միևնույն ժամանակ ակտիվ կերպով
պատերազմ էր պատրաստում ԽՍՀՄ աշխատավոր մասսաների և
գաղութների դեմ: Այդ նախապատրաստության առանձին մո-
մենտները հետևյալներն էին.—Յերկրորդ Խնտերնացիոնալի Մար-
սելի կոնգրեսում ընդունված այն բանաձևը, վորի համաձայն
«համաշխարհային բայլչեիզմը» (պրուլետարական հեղափոխու-
թյուններն ու գաղութները) խաղաղությանն ամենից ավելի սպառ-
նացող մի վտանգ է, խարերայական, սոոր պրոպագանդան ԽՍՀՄ
«կարմիր իմպերիալիզմի» և նրանում կատարվող սոցիալիստական
շինարարության դեմ, «գրանատային» կամպանիան և վերջապես
Յերկրորդ Խնտերնացիոնալի վերջին բանաձևը, վորով նա նոր լո-
զունդ է հայտարարում, թե Փաշիզմի դեմ պայքարելու համար
անհրաժեշտ է վերջ տալ բայլչեիզմին:

Նույնպես դավաճանական և բացահայտորեն հակահեղափո-
խական բնույթ է կրում անարխիստների ու սինդիկալիստների լի-
դերների բռնած դիրքը: Պրուլետարական առաջնորդների «դիկտա-
տուրայի» և ԽՍՀՄ տնտեսական ու քաղաքական կենտրոնացման
դեմ կոխվ մղելու վարագույրի տակ, նրանք բուրժուազիայի հետ
դասակարգային գործակցություն էին հաստատում յերկրագնդի
պրուլետարական այն միակ պետության դեմ պատրաստվող հար-

ձակման գործում, վոր ամեն կողմից շրջապատված է իմպերիա-
լիստական թշնամիներով:

Դավաճանական այդ կամսականիայի նպատակն էր՝ արդարաց-
նել այն «չեզոքությունը», վոր սոցիալ դեմոկրատները պիտի
պահպանեն ԽՍՀՄ դեմ կապիտալիստական յերկրների մղած պա-
տերազմի ժամանակ, մի «չեզոքություն», վոր Բրեյտանիայի բե-
րանով առաջարկում էին սոցիալ դեմոկրատները գերմանական
բանվորությանը:

Մինչև ուղի ու ծուծը խարդախ գերմանական սոցիալ-դեմոկ-
րատները շատ լավ են ըմբռնում, վոր այդպիսի «չեզոքություն»
չի՛ կարող լինել, վոր Գերմանիայի քիմիական արդյունաբերու-
թյունը հավանորեն պիտի սպասարկե ԽՍՀՄ դեմ կռվող պետու-
թյուններին, վոր գերմանական տրանսպորտը պիտի սպասարկե
նրանց՝ Անգլիայից և Իտալիայից արկեր փոխադրելով, վոր գեր-
մանական բանվորին, ինչպես և այլ յերկրների պրոլետարիատին
պիտի ստիպեն աշխատել Խորհրդային Միության աշխատավոր-
ների դեմ մղվող պատերազմի ոգտին:

Սակայն յերբ գերմանական սոցիալ-դեմոկրատիան չեզոքու-
թյուն է քարոզում իր ներկայիս դիրքը գերմանական իմպերիա-
լիզմին համապատասխանելու պատճառով, Յերկրորդ Ինտերնա-
ցիոնալի մյուս կուսակցությունները, ինչպես որինակ ՊՊՄ-ն է
(լեհ-սոցիալիստական կուսակցություն), իրենց բուրժուազիայի
և կալվածատերերի հետ միասին, ԽՍՀՄ դեմ ուղղված պատե-
րազմի դրդիչներն են հանդիսանում: Սոցիալ-դեմոկրատիայի
բռնած գիծն ամեն տեղ էլ ընթանում է իր աղգային բուրժուա-
զիայի շահերի հունով: Սակայն վերջին ժամանակներս սոցիալ-
դեմոկրատների եվոլյուցիան նոր գիծ է հայտարարում: Այդ նոր
գիծն այն է, վոր նա մի քանի յերկրներում ավելի հեռու յե գնում,
քան իր կառավարության իմպերիալիստական քաղաքականության
պաշտպանությունը: Նա իր ձեռքն է վերցնում բուրժուազիայի
իմպերիալիստական քաղաքականության և սպառազինության գոր-
ծի նախաձեռնությունը: Այն դիրքը, վոր բռնել են Ֆրանսիական
սոցիալիստները՝ Պոլ Բոնկուերի միջոցով պատերազմական նոր ո-
րենք սահմանելով, սոցիալ-դեմոկրատների այդ նորագույն «եվո-
լյուցիայի» ամենացայտուն որինակներից մեկն է:

Այսպես կոչված «ուլլտրա-ձախակողմյանների» կատարած դե-
րը ևս փոքր չեր պրոլետարիատին դեմոկրալիզացիայի յենթարկելու
գործում:


Յեթե ԽՍՀՄ դեմ մղված կամսականիայի հանդեպ սոցիալ-դե-

մոկերատիան արձագանքում եր բուրժուազիային, սոցիալ դեմոկրատներին եւ արձագանքում էլ յին ծայրահեղ ձախերը: Ներկայումս, յերբ ԽՍՀՄ վրա սխառաստովող հարձակումը կատարելապէս աւերահալաւ ե դառնում, յերբ Սկոտլանդ-Յարդի պրոֆեսսիոնալ կողոստիչներն ավերի յեն մատնում Լոնդոնի խորհրդային ներկայացուցչութեան չենքերը, բոլորովին պարզ ե «ծայրահեղ-ձախերի» աշխատեման որչեկտիվ իմաստն ու որչեկտիվ նշանակութեանը: Հակախորհրդային կամպանիան ցույց ե տալիս, վոր այդ ունեւորատներն այն տարրերն են հանդիսանալու, վորոնք կազմաւորուծելու յեն խորհրդային թիկունքը պատերազմի դեպքում: Քանի վոր այդ ֆրակցիան վորձ ե կատարում միջազգային բնույթ ստանալ, նա հանդիսանում ե այն տարրը, վոր կազմաւորուծում ե պատերազմների դեմ կոմիսներնի մղած պայքարը: —

Յերկրորդ ինտերնացիոնալի ու Ամստերդամի չինական հարցի հանդեպ բռնած դիրքը նույնքան դաժաճանական ե յեղել, վորքան ԽՍՀՄ հանդեպ: Յերկրորդ ինտերնացիոնալը մատը մատին չխփեց, վորպէսզի արդելք հարուցանի Չինաստանում ստարերկրյա դորքեր կենտրոնացնելու գործին: Նրա առաջնորդները ցինիկաբար ե լիտիաբար կողմնակից են հանդիսանում Չինաստանի դեմ մղված պատերազմին: Թոմասի նման լիդերները, յեթե մի վորեւե հարցում համաձայն չեն իրենց կառավարութեան չինական քաղաքականութեան հետ, դա միայն այդ հարցում, վոր կառավարութեանը շատ քիչ դորք ե ուղարկում Չինաստան, Թոմասի կարծիքով պետք ե ավելի շատ ուղարկել:

Յերկրորդ ինտերնացիոնալի մյուս լիդեր Մակդոնալդը հայտարարել եր, թե Չինաստանում Անգլիայի շահերը պաշտպանելու համար, անհրաժեշտ ե, վոր «սետալմենտում» պատշաճ չափով զինվորական ուժեր լինին: Յերկրորդ ինտերնացիոնալը Շանհայի գնդակահարութեաններից հետո բացարձակ կերպով աջակցում ե չինական Գալիֆե Չան-կայ-Շիին: Չինական պրոլետարիատի այն վորձերը, վորով նա աշխատում ե իր հեղեմոնիային յենթարկել ազգային-հեղափոխական շարժումը, կատաղի դիմադրութեան ե հանդիպում միջազգային սոցիալ-դեմոկրատիայի կողմից:

Նմանապէս հանցագործ ե ստոր ե այն դիրքը, վոր բռնել ե պատերազմի հարցի հանդեպ սոցիալ-դեմոկրատների այսպէս կոչված «ձախ թեր» (Ոտտո Բաուեր, Պաուլ Լեի ե ուրիշները): սոցիալ-դեմոկրատիայի այդ թեր Չինաստանի դեմ արդեն սկսված պատերազմի հանդեպ իր հայտարարած հանցագործ պասսիվութեանը սքողում ե վերացական ճոռոմարանութեաններ անելով իմ-



պերիալիստական պատերազմի վտանգի մասին : Հելֆերդինգի հետ միասին , նրանք պաշտպանում են այն վնասակար իլլյուզիան , թե իմպերիալիզմն ինքն ըստ ինքյան վտանգավոր չէ , սակայն նա վրտանգավոր է դառնում , յերբ նրան միանում է ռեակցիան :

ԽՍՀՄ դեմ մղած իրենց պայքարի համար նրանք ոգտադործում են բամբասանքների նույն այն թունալից գենքը , վոր գործադրում է սոցիալ-դեմոկրատիայի աջ թևը :

Սոցիալ-դեմոկրատիայի այդ ձախ թևը ամենավտանգավորն է , վորովհետև նրա լիդերները իրապես քողարկում են աջ սոցիալ-դեմոկրատների դիրքը «ձախ» ֆրազներով : Նրանք կրիտիքական մոմենտներում միշտ ել փրկում են աջակողմյաններին ու բուրժուազիային՝ բանվորներին խաբելով . նրանք դյուրացնում են բուրժուազիայի իմպերիալիստական ծրագրերի իրագործումը :

Կոմունիստական կուսակցությունները չեն կարող հրաժարվել միասնական ճակատի տակտիկայից այն պայքարի ասպարիզում , վոր նրանք մղում են հեղափոխական Չինաստանում տեղի ունեցող իմպերիալիստական ինտերվենցիայի դեմ և Խորհրդային Միության հետ խաղաղություն պահպանելու համար : Ընդհակառակը , այդ պայքարի համար անպայման անհրաժեշտ է , վորքան կարելի չէ լայնորեն կիրառել միասնական ճակատի տակտիկան , անհրաժեշտ է թե բանվորների , դյուրացիների ու ճնշված ժողովուրդների լայնազույն մասսաներին մոբիլիզացիայի յենթարկելու և թե պացիֆիստական իլլյուզիաները մերկացնելու համար :

Միևնույն ժամանակ չպետք է մոռանալ յերբեք , վոր սոցիալ-դեմոկրատական այսպես կոչված «ձախ» առաջնորդները , ինչպես են Գերմանիայում Պաուլ Լեին և Ֆրանսիայում Բրակեն , անգլիական բանվորական կուսակցության այնպիսի ներկայացուցիչները , ինչպես Մեքստոնը և Ուիտլին և պրոֆչարթման այնպիսի «ձախ» առաջնորդներ ինչպիսիք են Պերսեն ու Հիքսը—կոմունիզմի ամենավտանգավոր թշնամիներն են բանվորական շարժման ասպարիզում : Կոմկուսը պարտավոր է ամենասուր քննադատության յենթարկել սոցիալ-դեմոկրատիայի օպպոզիցիայի նույնիսկ ամելի անկեղծ լիդերներին և մերկացնել նրանց խաբերայական դերը բանվորների նկատմամբ , քանի վոր այդ լիդերները տատանվում և շաղակրատում են միայն , և չեն համաձայնում կտրել իրենց կազմակերպչական կապերը սոցիալ-դեմոկրատիայի դեկավարությունից : Սակայն միևնույն ժամանակ ձախ սոցիալիստական և մյուս ձախ (որինակ , անարխո-սինդիկալիստական) բանվորներին նվաճելու և հեղափոխական պրոլետարական միասնական ֆրոն-

տին կցելը յերբեք այնքան կարևոր խնդիր չի հանդիսացել, ինչ-
պես ներկա դրության ժամանակ :

ԶԻՆԱԹԱՓՄԱՆ ՅԵՎ ՊԱՅԻՖԻԶՄԻ ՄԱՍԻՆ

Իմպերիալիստական պատերազմի ուժեղ պատրաստություննե-
րի պայմաններում բուրժուական կառավարությունները և մանր-
բուրժուական պացիֆիստները՝ զինաթափման վերաբերյալ խո-
սակցություններն ամենամեծ կեղծավորությունն ու ծաղրանքն են
հանդիսանում (ծովային սպառազինությունները սահմանափակե-
լու վերաբերյալ 1921 թ. կնքված Վաշինգտոնի համաձայնության
փաստացի խղումը, «զինաթափման» մասին Կուլիջի արած առա-
ջարկության տապալումը, Ազգերի Լիգայի ժնեյան կոնֆերեն-
ցիայի տապալումը 1927 թ. մարտին) : Կոմունիստները պետք է
ամեն կերպ մերկացնեն զինաթափման լոզունգի կեղծ, ուսկիցիոն-
րնույթը, այն լոզունգի, վորն առաջադրվում է բուրժուազիայի
և նրա գործակալների կողմից—հանձինս սոցիալ դեմոկրատների՝
կապիտալիստական կարգերի գոյության և պահպանման պայման-
ներում : Այդպիսի լոզունգ պաշտպանելը միայն այն ցնորքներն է
տարածում, թե իբր կարելի չե պատերազմը վոչնչացնել, առանց
վոչնչացնելու կապիտալիզմը : Սպառազինության կրճատման և
ռազմական ծախսերի կրճատման վերաբերյալ բուրժուազիայի ու
սոցիալ դեմոկրատների կողմից արվող վոչ մի առաջարկություն
նվազեցնել չեն կարող իմպերիալիստական դարաշրջանի պատե-
րազների վտանգը :

Միակ յերկիրը, վորն արդեն գործնականում իր բանակի թիվը
կրճատել և հասցրել է մինիմալ չափերի—այդ Խորհրդային Միու-
թյունն է : Գոյություն ունեցող բոլոր պետությունների մեջ նա
միակ կայուն հենարանն է խաղաղության համար : Հոկտեմբերին
ծնունդ առնելով իմպերիալիստական պատերազմի դեմ կռիվ մղե-
լու նշանաբանի ներքո, ԽՍՀՄ 10 տարվա ընթացքում յեվրոպա-
կան իմպերիալիստների վզին կախված մի ծանր քար է յեղել,
վորը նրանց խանգարել է աշխատավոր մասսաներին միմիանց դեմ
հանել : Այդ դերը ԽՍՀՄ կարող է ասպագայում նույնպես կատա-
րել, յեթե նրա քաղաքականությունը պաշտպանություն գտնի
միջազգային բանվոր դասակարգի կողմից : ԽՍՀՄ զինաթափման
ձգտող քաղաքականությունը՝ մի պետության քաղաքականու-
թյուն է, վորտեղ պրոլետարիատն իշխանությունն իր ձեռքումն
է պահում, նոր հասարակության հիմք դնելով, հասարակու-
թյուն, վորը բացասում է պատերազմները :

Այդ պատճառով զինաթափման հարցում ԽՍՀՄ բռնած դիրքի նկատմամբ համաշխարհային պրոլետարիատի վերաբերմունքն սկզբունքորեն այլ պետք է լինի, քան զինաթափման վերաբերյալ կապիտալիստական պետությունների կեղծավոր նախագծերի նրկատմամբ:

Անկասկած, 1914—1918 թ.թ. մեծ խմբերիալիստական պատերազմը տեսած միլիոնավոր աշխատավորությունը պատերազմ չէ ուղղում: Դեռևս շատ թարմ են պատերազմում ստացած նրանց վերքերն ու սպիները: Այդ բանվորները պատրաստ են անկեղծությամբ կռվելու պատերազմի դեմ, սակայն նրանք, սոցիալ-դեմոկրատների կողմից խաբվելով, տակավին պարզ ուղիները չեն նշմարում ու դեռևս իրենց վտարների տակ ամուր հեղափոխական հող չեն դրում: Այդտեղ է թաքնված մշուշապատ պացիֆիզմի աղբյուրը. պացիֆիզմ, վորով տակավին հիվանդ է բանվոր դասակարգը: Այդ պացիֆիզմը վոչ մի առնչություն չունի բուրժուական պացիֆիստների, տերտերների և այլ շառլատանների դիտավորյալ խաբեյության հետ, վորոնց ձգտումն է հարթել ու գունավորել կապիտալիստական հասարակության մեծ խորդ ու բորդությունները:

Պացիֆիզմի այդ յերկու տեսակների միջև տարբերություն պետք է դնել: Յեթե բայլչեիկ կոմունիստները պատրաստ են համբերությամբ բանվորներին բացատրելու նրանց սխալները և նրանց քաշելու դեպի «միասնական բանվորական ճակատ»՝ բանվոր դասակարգի ավանդարդի հետ միասին, կռվի ընթացքում նպաստելով, վորպեսզի բանվորների այդ խավերն ազատվեն իրենց սխալներից, — ապա ուրեմն նրանք առանձնապես անողոք պետք է լինեն «առաջնորդները» վերաբերմամբ, վորոնք պրոլետարիատի մշուշապատ պացիֆիստական տրամադրություններն օգտադործելով, այդ պացիֆիզմը ձևակերպում են վորպես «դիրք», «տեսակետ», և նրան այս կամ այն կեղծ սկզբունքային հիմնավորումն են տալիս:

«Բանվոր դասակարգին հիմարացնելու ձևերից մեկը, — գրել է Լենինը 1915 թ. պատերազմի ժամանակ — պացիֆիզմն է և խաղաղության վերացական քարոզը:

Կապիտալիզմի ժամանակ, հատկապես նրա խմբերիալիստական շրջանում, պատերազմներն անխուսափելի յեն: Ներկայումս խաղաղության պրոպագանդ անել, առանց միաժամանակ մասսաներին հեղափոխական գործողությունների կոչ անելու, նշանակում

և միայն ցնորքներ տարածել, պրոլետարիատին փշագնել բուրժուազիայի մարդասիրության նկատմամբ վատահուժյուն ներշնչելով և պրոլետարիատին խաղալիք դարձնել պատերազմող յերկրների դադանի դիվանագիտության ձեռքին» (Լենին, 13-րդ հատ. 5-րդ հոդվ. «Պացիֆիզմը և խաղաղության լողուններ») :

Պացիֆիստական այդսիսի խառնափնթորոզների թվին, վորոնք «խաղաղության քարոզ» են կարգում առանց մասսաներին հեղափոխական դործողությունների կոչ անելու,—պատկանում է, առաջին հերթին, անգլիական անկախ բանվորական կուսակցությունը, վորը վոչ մի դործնական քայլ չարեց անգլիական բանվոր դասակարգին, զինվորներին ու նավաստիներին՝ իմպերիալիստների դեմ կռվելու համար մորելիզացիայի յենթարկելու :

Անկախ բանվորական կուսակցությունը սխառմատիկորեն մերժում էր կոմկուսի հետ միասնական ճակատ կազմելը : Նա դատապարտում էր ոտարերկրյա իմպերիալիստների դեմ չինական աշխատավորական մասսաների կողմից կատարվող «բռնություն» և զինված կռիվը : Նա մարտնչում էր «բանակցությունների» համար, վորպեսզի դրանով կասեցնի Չինաստանի ազգային հեղափոխական շարժման հետագա զարգացումը :

Պակաս մնասակար չե նաև այդ «սոցիալիստական պացիֆիզմի» մի ուրիշ տեսակը : Այդ՝ յուրահատուկ, կրոնական, միստիկ «հակամիլիտարիզմ» է, վորը կապված է Լենսբերիի անվան հետ և վորը պաշտպանություն է գտնում անկախ բանվորական կուսակցության կողմից :

«Սոցիալիստական պացիֆիզմը» սահմանափակվում է պատերազմական վարկերի դեմ քվեարկելով, քարոզ կարդալով, վորպեսզի մարդիկ անհատական և կոլլեկտիվ կերպով զինվորական ծառայությունից ու պատերազմի նպատակի համար զենք փոխադրելուց հրաժարվեն : Սակայն այդ խմբակն ալելի ու ալելի յե բանվորական կուսակցության ազդեցության տակ ընկնում զենքերը ցած դնելով բրիտանական իմպերիալիզմի առջև :

Այդ կեղծ-սոցիալիստական պացիֆիզմը վտանգավոր է նրանով, վոր բանվորների մեջ ցնորք է ստեղծում, թե սոցիալ-դեմոկրատիան, թեկուզ նրա պացիֆիստական մասը, պատրաստ է կռվելու պատերազմի դեմ : Իսկ իրականում պատերազմի դեմ կռվելու իսկական մատասյական մեթոդների հարցը նա միայն մթազնում է :

ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ
ՊԱՅՔԱՐԻ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԸ

Պատերազմների վերաբերյալ հարցերի այն ձևակերպությունը, վոր տվել է ընկ. Լենինը, վորոշում է կոմունիստական կուսակցությունների տակտիկան սլատմական մի ամբողջ եպոխայի համար, վոր լի յե իմպերիալիստական սլատերազմներով: Մի շարք լողուններ, ինչպիսիք են՝ «սայքար սլատերազմի դեմ», «իմպերիալիստական սլատերազմը քաղաքացիական սլատերազմի վերածել», «իր կառավարության (բուրժուական) սլարտությունը իմպերիալիստական սլատերազմի մեջ» — մինչև այժմ մնում են իբրև իսկական հեղափոխական ինտերնացիոնալիզմի կլասիկ որինականեր:

Լենինիզմին ենք սլարտական, վոր սլատերազմի հարցը սլատմական կոնկրետ ձևակերպում է ստացել և նրա հետեյալ յերեք տիպն է սահմանվել՝ սլատերազմներ իմպերիալիստական սլետությունների միջև, ազգային հեղափոխական սլատերազմներ իմպերիալիզմի դեմ, վորոնց թվում նաև գաղութային սլատերազմներ (Չինաստան) և յերրորդ, կապիտալիստական հակահեղափոխության սլատերազմները սլրուետարական հեղափոխության և կառուցվող սոցիալիզմի յերկրների դեմ: Կոմինտերնը սլետք է միայն ավելի կոնկրետացնի վերջին յերկու տիպի սլատերազմների վերաբերյալ այն ընդհանուր ձևակերպումը, վոր լիակատար կերպով տվել է բայլչեվիզմը իմպերիալիստների միջև տեղի ունեցող սլատերազմների նկատմամբ:

Բայլչեվիզմը նախ և առաջ հրաժարվում է սլատերազմի հարցը թեթեվամտորեն ձեվակերպելուց: Ընկ. Լենինը ընդհանուր դիրեկտիվներ տալով Հաագայի կոնֆերենցիայի ուս սլատգամավորությանը, նախազգուշացնում էր, վորսլետի վերջինս ավելի լուրջ վերաբերմունք ցույց տա այն միջոցներին, վորոնք սլետք է մշակվեն սլատերազմի դեմ սլայքարելու համար: Նա հանձնարարում է հաշվի առնել այն ուեալ սլայմանները, վորոնց մեջ ծնունդ է առնում սլատերազմը, հաշվի առնել վերջինիս գաղտնի նախապատրաստումը, նրա անսպասելի կերպով սկսվելը «վերահաս սլատերազմի հանդեպ իրենց հեղափոխական անվանող բանվորական սովորական կազմակերպության» անդորությունը և ապա այն փաստը, վոր «ալիստավորության ահագին մեծամասնությունը՝ ամբողջ ինֆորմացիան իր ձեռքում սլահող բուրժուազիայի ճնշման սլատճառով, հայրենիքի սլաշտսլանության հարցը սլիտի լուծի հողուտ իր բուրժուազիայի» և ալին:

«Պատերազմը բոյկոտի յենթարկելը—գրում է ընկ. Լենինը—հիմար Ֆրազ է» : Բայլշէիզմը 1914 թ. պատերազմի փորձով յերեան բերեց դավաճանությունն այն անձանց, վորոնք պատերազմի դեմ պայքարելու համար լուրջ և համառ պատրաստություններ տեսնելու փոխարեն, բավականացան դադարկահնչյուն Ֆրազներով միայն :

Ինչպէս հայտնի յէ, Լենինն ու Ռոզա Լյուքսեմբուրգն Եյլն Բազելի կոնգրեսի բանաձևի այն ուղղումի հեղինակները, վորն աջարկում էր պատերազմ ծագելու դեպքում աշխատել, «վոր ավելի շուտ կապիտալիստական հիմունքները ցնցվեն այնպէս, ինչպէս տեղի յեր ունեցել կոմունայի ժամանակ և Հոկտեմբերին» (ընդհանուր գործադուլ և 1905 թ. դեկտեմբերին (Մոսկվայի ապստամբությունը)» : Բայլշէիզմը կռիվ էր մղում նաև անարխո-սենդիկալիզմի և Երվեյդի հին ուսմունքների դեմ, վորոնք ընդհանուր գործադուլի և մորիլիզացիան սաբոտաժի յենթարկելու մասին ճանկում, քաղաքական վռչ մի քայլ չարեցին, վորպէսզի պատրաստ լինեյին պատերազմի դեմ պայքարելու, վորպէսզի բոլորովին անդոր չլինեյին պատերազմ հայտարարված մոմենտին : Համաշխարհային պատերազմը ցույց տվեց, վոր այդ տեսակ «հեղափոխությունների» վերաբերմամբ արված ամենավատ յենթադրություններն անգամ իրավացի էյին :

Լենինի կողմից «իմպերիալիստական պատերազմը քաղաքացիականի վերածելու» հարցի այս կերպով դնելը, մի հարց, վորը հետազոյում ուսական հեղափոխության փորձի հիման վրա ստուգվեց, կարելի յէ վերածել հետեյալ հիմնական սկզբունքներին՝

1) Հեղափոխության հաջողության համար ամենից առաջ հարկավոր է, հեղափոխության սխտուացիայի առկայությունը, վորն առաջ և գալիս իմպերիալիստական կառավարությունների կողմից կրած մի շարք անհաջողությունների և պարտությունների հետեւանքով, ասել է, տիրապետող դասակարգերի կողմից անհնար է լինում անփոփոխ պահելու իրենց տիրապետությունը, վերին շերտերի այս կամ այն ճգնաժամը, ճնշված դասակարգերի սովորականից դուրս ավելի սրված կարիքն ու խղճուկ դրությունը և վերոհիշյալ պատճառների շնորհիվ մասսաների ակտիվության բարձրացումը :

2) Բայց հեղափոխության հաղթական յելք ունենալու տեսակետից վերևում հիշված որեկտիվ պայմանները բավական չեն : Ան-

հրաժեշտ է, վոր այդ նրեկտիվ պայմաններին միանան և սուբյեկտիվ պայմանները, այն է, «հեղափոխական դատակարգի ընդունակությունը հեղափոխական մասսայական գործողություններ կատարելու, վորոնք պետք է այնքան ուժեղ լինեն, վոր ընկճեն իրենց կառավարութունը, վորը ճգնաժամի միջոցին անգամ, յերբեք չի ընկնում, յեթե նրան գետին չփռեն» (Լենին «Յերկրորդ Ինտերնացիոնալի սնանկացումը») :

3) Հեղափոխական դատակարգը, բացի սրանից, պետք է ունենա նաև փորձված բայլչեվիկական շտաբ, վորն ընդունակ լինի այդ դատակարգի հեղափոխական մասսայական գործողությունները պատրաստել և կազմակերպել :

Այդ շտաբը հեղափոխական մասսայական յեւույթներ կազմակերպելու նախապատրաստական ժամանակաշրջանում պետք է ոգտագործի ամեն մի «լեզալ» հնարավորություն և առանց դադար առնելու պետք է մասսաների մեջ իմպերիալիստական պատերազմի դեմ պրոպագանդա մղի՝ այն (իմպերիալիստական պատերազմը) քաղաքական պատերազմի վերածելու լողունդի տակ :

Ըստ այսմ Լենինը հաշվի յեր առնում և այն հանգամանքը, վոր այդ ագիտացիան իշխող դատակարգերի կողմից պետք է համառ դիմագրության հանդիպի :

«Վոչ միայն պատերազմի ժամանակ, ասում եր նա, այլև անտարակույս քաղաքական դրության ամեն մի սրման դեպքում, դեռ չխոսելով մասսաների վորեւի հեղափոխական գործողության մասին, նույնիսկ ամենաազատ բուրժուական յերկրի կառավարությունն սպառնալու յե լեզալ կազմակերպությունները ցրելով, դատակարգերը ճնշելով, առաջնորդներին ձերբակալելով և այլ նմանորինակ գործնական քայլեր կատարելով : Ի՞նչ անել :

Յեւ Լենինն այդ հարցին պատասխանում եր, վոր լեզալ բանվորական կուսակցության ղուգընթաց «անհրաժեշտ է այն լրացնել անլեզալ սոցիալ դեմոկրատական, այժմ պետք է կարդալ՝ կոմունիստական, անլեզալ կազմակերպության աշխատանքով, միևնույն ժամանակ չհանձնելով և վոչ մի լեզալ դիրք» (Լենին, «Յերկրորդ Ինտերնացիոնալի սնանկությունը») :

Միաժամանակ Լենինը խիստ քննադատության է յենթարկում այն անձանց, վորոնք փորձում էին սխալերազմի դեմ մղվելիք պայքարի հարցն անձնական, ինդիվիդուալ հարցի փոխել, ինչպես սարտաժն է, կամ ռազմական պահակությունից հրաժարվելը : «Վոչ թե պատերազմը սարտաժի պետք է յենթարկել, վոչ թե առանձին

անհատական յեղույթներ են հարկավոր, այլ մասսայական պրոպագանդ և պետք, վորը պատերազմը քաղաքացիական պատերազմի վերածի»:

Նա կարծես թե նախատեսնում է միլիտարիզացիայի այն հրեշավոր սխտեմը, վորը տիրապետող դասակարգերը մտադիր են ֆրանսիայում իրադործել համաշխարհային պատերազմի սկզբից 13 տարի հետո:

«Այսոր իմպերիալիստական բուրժուազիան միլիտարիզացիայի յե յենթարկում վոչ միայն ամբողջ ժողովուրդը, այլ և յերիտասարդությունը: Վաղը նա կձեռնարկի, թերևս, և կանանց միլիտարիզացիայի գործին»: (Հատոր 12, էջ 452): Յե՛վ նա խորհուրդ է տալիս բանվոր դասակարգին. «Քեզ հրացան կտան, վերցրու այն լավ սովորիւ ռազմական գործը: Այդ գիտությունը պրոլետարների համար անհրաժեշտ է վոչ թե նրա համար, վորպեսզի կրակ բանան իրենց յեղբայրների, ուրիշ յերկրների բանվորների դեմ, ինչպես այդ արվում է ներկա պատերազմի ընթացքում և ինչպես նրանց խորհուրդ են տալիս սոցիալիզմի դավաճանները, այլ նրա համար, վորպեսզի պայքարի իր սեփական յերկրի բուրժուազիայի դեմ, և վորպեսզի վերջ տրվի շահագործմանը, մուրացիկությանը և պատերազմներին վոչ միայն լավ բարեմաղթությունների միջոցով միայն»:

Ի՞նչպիսի հետեւություններ պետք է անեն սրանից կոմունիստական կուսակցությունները ներկա քաղաքական սխտեմացիայից (դրությունից):

Պատերազմի դեմ մղվելիք պայքարի ծանրության կենտրոնը բայլչեմիզմը մասսայական շարժման, մասսայական պայքարի կողմն է փոխադրում:

Աշխատել մասսաների մեջ—գործարաններում, արհմիություններում, գյուղում, բանակում—ահա ի՞նչ պետք է անեն կոմունիստները թե՛ պատերազմից առաջ և թե՛ նրա ընթացքում, վորպեսզի այն քաղաքացիական պատերազմի վերածեն:

Այն դժվարադույն պայմանները, վորոնք ծառանում են բանվորական կազմակերպությունների առաջ պատերազմի շնորհիվ, պարտավորեցնում են կոմունիստական կուսակցություններին ամեն բոլե պատրաստ լինել:

Կոմունիստները պարտավոր են պայքարելու պատերազմի դեմ վոչ միայն այն դեպքում, յերբ նա սկսվի և յերբ կառավարական տերրորը մասսաներին ժամանակավորապես կձգմի, այլ ամենից առաջ նրա նախապատրաստման շրջանում:

Համառ կերպով կառուցելով իր անլեզու ապարատը՝ ուղղը-
ված պատերազմի դեմ, ինչպես մինչպատերազմյան ժամանա-
կաշրջանում, այնպես և նրա տեղի ունենալու ժամանակը, կո-
մունիստական կուսակցությունները պարտավոր են չսահմանա-
փակվել միմիայն գաղտնի աշխատանք վարելով, այլ նրանք
պարտավոր են առաջին իսկ հնարավորության դեպքում հեղա-
փոխական գրավման ճանապարհով իրագործել իր ագիտացիայի
ազատությունը և մասսաներին փողոց դուրս հանել՝ իմպերիա-
լիստական պատերազմը քաղաքացիականի վերածելու նպատակով
պայքարելու, ինչպես և պրուլետարիատի կողմից իշխանությունը
գրավելու, բուրժուազիային տապալելու և պրուլետարիատի գիկ-
տատուրա հաստատելու համար:

Բայց և իկները չեն կարող պատերազմի դեմ պայքարելու
սրբորեն միմիայն ընդհանուր գործադուլի հարցի վերածել:
Ընդհանուր այն գործադուլը, վորը զինված ապստամբության չի
վերածվում, ի վիճակի չէ միայնակ իմպերիալիստական պատե-
րազմը վիժեցնելու: Իր հաջող իրագործման համար գործադուլ-
ապստամբությունը, այսինքն քաղաքացիական պատերազմը պա-
հանջում է, վոր հեղափոխական սխուռացիա լինի, ունենան հե-
ղափոխական դասակարգերի մասսայական գործողություններ
կատարելու ընդունակություն, ուժեղ ղեկավար շտաբ հանձնի:
Կոմունիստական կուսակցության և սխտեմատիկ կերպով հա-
մառ աշխատանք կատարեն, վորն ի վիճակի լինի մինչև վերջն
տպահովել տիրապետող դասակարգերի դեմ պատրաստվող ա-
սրստամբության հաջողությունը:

Այդ իսկ պատճառով Յերկրորդ Ինտերնացիոնալի խղճալի
հերոսների խոսքերը «պատերազմին պատասխանել ընդհանուր
գործադուլ պատրաստելով» կամ դատարկ խոսքեր են և կամ դի-
տումնավոր խաբեյություն: Պատերազմի դեմ մղելիք պայքարը,
այդ մի անհատի ահա չէ, նա բանվոր դասակարգից հսկայական
զոհարերություններ և մի ամբողջ շարք մասսայական գործո-
ղություններ և պահանջում (ցույցեր, ռազմական գործարան-
ներում գործադուլներ և այլն), վորոնք վերջանում են միայն
պրուլետարիատի հաղթական ապստամբությամբ: Կոմունիստական
կուսակցությունները պետք է գործ դնեն իրենց բոլոր ջանքերը,
վորպեսզի ավելի լայն կերպով ծավալեն այդ մասսայական յե-
լույթները, ավելի և ավելի վճռական կերպով առաջ ընթանան
դեպի ընդհանուր գործադուլը: Կոմիստերնր գիտակցում է, վոր

չատի դժվար և լինելու գործադուլը իրականացնելն այն դեպքում ,
յեթե յերկու իմպերիալիստական պետությունների միջև պատե-
րազմ ծագի , բայց և այնպես , անտարակույս , անհրաժեշտ և ,
վոր բոլոր յերկրների կոմունիստական կուսակցությունները
մշտապես պրոպագանդա և ագիտացիա մղեն հոգուտ ընդհանուր
գործադուլի , ինչպես մինչ պատերազմը , այնպես ել պատերազմի
ժամանակ : Սակայն այդ դեպքում չի կարելի ուշադրության
դառնել և այն հանգամանքը , վոր հեղափոխական սիտուացիայի
դարգացումից և կախված , թե յերբ կարելի կլինի ընդհանուր
գործադուլի լողունդ հռչակել , ասել և , յերբ իրական հնարա-
վորություն կլինի ընդհանուր գործադուլ անելու :

Ընդհանուր գործադուլի ընթացքում կոմունիստները պետք և
ամեն կերպ աշխատեն գործադուլը զինված ապստամբության
վերածելու :

Չինաստանի և ԽՍՀՄ դեմ մղվող պատերազմն այդ վոչ թե
սովորական իմպերիալիստական , այլ կրկնակի իմպերիալիստա-
կան պատերազմ և : Այն պայմանները , վորոնց մեջ այդ պատե-
րազմն ընթանում և , իսկ ԽՍՀՄ վերաբերյալ նա պետք և ընթա-
նա , յեթե պատերազմ ծագելու լինի , բոլորովին այլ են , քան
1914 թվի պայմանները :

Առաջին այդ պատերազմն առանձնահատուկ պատերազմ և ,
վորովհետև նա բացարձակ կերպով դասակարգային պատե-
րազմ և : Վոչ թե իմպերիալիստները կռվում են ժողովուրդների
ոժանդակությամբ , այլ իմպերիալիստների պատժողական եքս-
պեդիցիաները արշավում են բանվորների և գյուղացիների վրա ,
նրանց ճնշելու համար : Այդ հանգամանքը , չատ պարզ կերպով
դիտակցում և կապիտալիստական յերկրների ամեն մի ազնիվ
աշխատավոր :

Յերկրորդ , «հայրենիքի պաշտպանության» ֆեդիշն իմպե-
րիալիստական յերկրների վերաբերմամբ , առանձնապես ներկայիս
Չինաստանի դեմ մղվող պատերազմի ընթացքում , միանգամայն
կորցրել և իր նշանակությունը : Վոչ մի խելքը գլխին մարդ չի
հավատա , վոր Չինաստանն սպառնում և Մեծ Բրիտանիայի կրղ-
յիների վրա հարձակում կատարելու : Այդ պատճառով ել բուր-
ժուազիան և նրա լակեյները «հայրենիքի պաշտպանության» լո-
ղունդի փոխարեն առաջադրում են այնպիսի սովեստություններ ,
ինչպես գույքի , շահերի , պրեստիժի , դրոշակի և բայլելիզմի
դեմ քաղաքակրթության պաշտպանությունն և և այլն և այլն :

Յերրորդ, բանվորական մասսաները 1914-18 թ. թ. արյու-
նոտ փորձն ունեն։ Այդ փորձն ունի և պրոլետարիատի առաջա-
պահ—կոմունիստական կուսակցությունը։ Նրանք հաշվի չեն առ-
նում պատերազմ մղելու դործում բուրժուազիայի պրյոմները և
նրանք, թեև թույլ կերպով, բայց և այնպես այդ ուղղությամբ
արդեն զինված են։

Զորրորդ, և վերջապես 1914 թ. իմպերիալիստական պատե-
րազմի համեմատությամբ պրոլետարիատի ավանդարդը, առաջա-
պահը կազմակերպված է և կոմունիստական կուսակցությունները
միացված են կոմունիստական ինտերնացիոնալի շարքերում, մի
հանգամանք, վոր 13 տարի սրանից առաջ գոյություն չի ունեցել։

Այդ իսկ պատճառով պատերազմի դեմ պայքարելու հնարա-
վորություններն ավելի շատ են քան 1914-1918 թ. թ.

Ահա, այդտեղից ել հետևություններ պետք է արվեն կոմու-
նիստական կուսակցության համար։ Ներկա Չինաստանի, ԽՍՀՄ
դեմ վարվող կրկնակի իմպերիալիստական (ԽՍՀՄ-ի վերաբեր-
յալ հեռանկարային ե այդ) պատերազմի ընթացքում, այդ պա-
տերազմը վարող կապիտալիստական յերկրների բանվորները
պետք է լինեն, ինչպես և ամեն մի իմպերիալիստական պատե-
րազմի ընթացքում, իրենց պետությունների վերաբերմամբ հար-
վածողների և տապալողների դերում։

Յեթե յերկու իմպերիալիստական յերկրների սովորական
պատերազմի ընթացքում բանվորները, վորոնք արտահայտվում
են հոգուտ իրենց կառավարությունների պարտության, չեն կա-
րող պատերազմող կողմերից մեկի հաղթության կողմնակից լի-
նել, ապա Չինական հեղափոխության կամ ԽՍՀՄ դեմ մղվող
կրկնակի իմպերիալիստական և կրկնակի հակա-հեղափոխական
պատերազմի ընթացքում նրանք պարտավոր են ակտիվ կերպով
պայքարել հոգուտ Չինաստանի և ԽՍՀՄ աշխատավոր մասսաների։

Յեղբայրացման լողունգը, վորը բայլչեիկների կողմից դուրս
է նետվել իմպերիալիստական պատերազմի զինվորների համար,
իր ուժի մեջ է մնում և ներկայիս համար, վորպես
իմպերիալիստական բանակներում և նավատորմիղներում տար-
վելիք հակամիլիտարիստական աշխատանքի ամենակարե-
վոր լողունգներից մեկը։ Բայց, պահպանելով իր նշանա-
կությունը և առաջին հերթին յերկու իմպերիալիստական պե-
տությունների իրար միջև տեղի ունեցող պատերազմի վերաբեր-
յալ, այդ լողունգն իմպերիալիստների կողմից հեղափոխական

Զինաստանի կամ ԽՍՀՄ դեմ մղելիք պատերազմի ընթացքում պետք է միացվի իմպերիալիստների բանակների զինվորների կողմից պատեհ մոմենտներին հեղափոխական զորքերի կողմն անցնելու կոչի հետ։ Պրոլետարիատը պետք է պայքարի ձեռքի տակ ունեցած բոլոր միջոցներով, վորպեսզի իմպերիալիստների կողմից Զինաստանը խեղդելուն խոչընդոտ հանգիստանա։ Փոխադրողների և ռազմական ինդուստրիայի բանվորների գործադուլը, ընդհանուր գործադուլը և այլն, այդ բոլորը միջոցներ են, վորոնց պարտավոր է դիմելու միջազգային պրոլետարիատը, վորպեսզի պաշտպանի հեղափոխական Զինաստանը և ԽՍՀՄ։

Պատմությունը միջազգային բանվոր դառնալարդին կոմունիստների կողմից պատերազմի դեմ մղած պայքարի բաղձաթիվ որինակներ և տալիս։

Ամենից առաջ այդ ուսում բայլչեիկների փորձն է 1914-1918 թ. թ. իմպերիալիստական պատերազմի ընթացքում, գերմանական սպարտակյանների հակալական փորձը, 1918-1919 թ. թ., դանադան յերկրների բանվորների պայքարը ինտերվենցիայի ժամանակաշրջանում, Ֆրանսիական նավաստիների ապստամբությունն Ուկեսսայում, հարավ-սլավական և ավստրիական ընկերների փորձը, վորոնք 1919 թ. պայքարում էին Հունգարիայում կատարվող ինտերվենցիայի դեմ, 1920 թվին Անգլիայում տեղի ունեցած գործողությունների կոմիտեների փորձը, լեհ-խորհրդային պատերազմի ընթացքում, Անգլիայի, Գերմանիայի և Իտալիայի բանվորների կողմից զենքերի տեղափոխությունը իսպանիայում, լեհական բանակների թիկունքում լեհական բանվորների և գյուղացիների սպարտիզանական գործողությունները, Ռուսի փորձը բանակում անլեզալ աշխատանք կազմակերպելու և ռազմական գրավման դեմ պայքար մղելու, այն փորձը, վորը ձեռք է բերել Ֆրանսիական կոմունիստական կուսակցությունը և կոմունիստական յերիտասարդությունը Մարոկկոյում և Սիրիայում մղված պատերազմի ընթացքում։

Վերջապես, Յերիտկոմիտեերնի չափազանց հարուստ փորձը։

Զինաստանի դեմ մղվող ներկա պատերազմի ընթացքում այդչափ հարուստ փորձի ոգտագործումը կոմիտեերնի սեկցիաների ամենատարրական սպարտականությունն է։

ԶԻՆԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1. ԶԻՆԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Կոմիտեերնի Գործկոմի պլենումն արձանագրում է, վոր վերջին անցքերն ամբողջապես հաստատեցին Կոմիտեերնի տեսակետը չինական հեղափոխության վերաբերյալ և փայլուն կերպով արդարացրին Լենինի գուշակությունը՝ նրա միջազգային դերի մասին:

Չինական մեծ հեղափոխությունն ավելի ու ավելի հսկայական կարևորություն ունեցող մի Ֆակտոր է դառնում, ուղղված միջազգային իմպերիալիզմի վողջ սխտեմի և նրա գլխավոր համաշխարհային կենտրոնների դեմ:

Այս պատճառով իմպերիալիզմին ուղղակի ոժանդակություն է ցույց տալիս այն քաղաքականությունը, վոր վարում են սոցիալ-դեմոկրատիան և Ամստերդամի Ինտերնացիոնալը: Այդ մի քաղաքականություն է, վորը քողարկում ու մթաղնում է ինչպես չինական հեղափոխության, այնպես և իմպերիալիստական ինտերվենցիայի իմաստը, այդ՝ պլատոնական լողունքների ու պացիֆիստական կիսամիջոցների քաղաքականություն է, վորն առանց քաշվելու արդարացնում է չինական հեղափոխության դեմ սկսված դաճական պատերազմը (Թոմաս, Մակդոնալդ և Ընկ.):

Կոմիտեերնի Գործկոմն արձանագրում է, վոր չինական հեղափոխության հսկայական միջազգային նշանակությունն և՛ ավելի յե աճում շնորհիվ այն բանի, վոր իմպերիալիստների կողմից չին ժողովրդի դեմ սկսված հակահեղափոխական ու խեղդիչ պատերազմի և Չինաստանում իմպերիալիստական զորքեր կենտրոնացնելու հետ միասին (ոտարերկրյա նավատորմներ, հետեւազոր, Մանջուրիայի փաստական ոկուպացիան ճափոնացիների կողմից, կարևորագույն նավահանգիստների փաստական գրավումն Անգլիայի և Միացյալ Նահանգների կողմից և այլն) պրովոկացիոն յելույթներ են տեղի ունենում ԽՍՀՄ դեմ և ուժեղ կոնֆլիկտներ են հասունանում հակաչինական ճակատի զարգացման տվյալ շրջանում միացած իմպերիալիստների միջև:

Այս պատճառով պատերազմի իդեոլոգիական պատրաստման գործում ակտիվ մասնակցող սոցիալ-դեմոկրատիայի ստոր ու լաիքը ընդհանուր դերով և նրա սոցիալ-իմպերիալիզմը քողարկող բուրժուական պացիֆիզմով միայն կարելի չե բացատրել այն կոնկրետ դիրքը, վոր սոցիալ-դեմոկրատիան ու Ամստերդամի ինտերնացիոնալի առաջնորդներն են բռնել չինական հեղափոխության հարցում:

Կոմիներնի Գործկոմն այն կարծիքին է, վոր այն կուսակցություններն ու կազմակերպությունները, վորոնք իրենց բանվորական են անվանում և ամենավճռական պայքար չեն մղում Չինաստանում տեղի ունեցող ինտերվենցիայի դեմ, վորոնք քրոնացնում են բանվոր դասակարգի զգոնությունը և պասսիվություն են քարոզում այս հարցում, — այդպիսի կուսակցություններն ու կազմակերպություններն որչեկտիվորեն (իսկ յերբեմն և սուբյեկտիվորեն) ոգնում են իմպերիալիստներին: Նրանք վոչ միայն ոգնում են իմպերիալիստներին չին բանվորներին ու գյուղացիներին խեղդելու և դրանով իսկ իմպերիալիստական սխտեմն ամրապնդելու գործում, այլև աջակցություն են ցույց տալիս նրան ինչպես ԽՍՀՄ դեմ պատերազմ նյութելու, այնպես և ընդհանրապես համաշխարհային պատերազմներ պատրաստելու գործում:

Կոմիներնի Գործկոմը միաձայն իր սեկցիաների վրա պարտականություն է դնում ամենաակտիվ կերպով աջակցություն ցույց տալ չինական հեղափոխությանը և ամենաակտիվ կերպով պայքար մղել Չինաստանում կատարվող ինտերվենցիայի դեմ՝ մասսաներին մորիլիզացիայի յենթարկելու, և զորք, զենք, ռազմամթերք ու պատերազմական այլ պարագաներ ուղարկելու դեմ մասսայական հակահերգործում կազմակերպելու միջոցով:

Կոմիներնի Գործկոմն իր բոլոր սեկցիաներին պարտավորեցնում է պրոլետարիատի և ընդհանրապես աշխատավորության ամենալայն մասսաներին բացատրելու չինական հեղափոխության միջազգային իմաստն ու նշանակությունը և այն կապը, վոր կոմ Չինաստանում տեղի ունեցող հակահեղափոխական ինտերվենցիայի, նոր պատերազմներ, առաջին հերթին ԽՍՀՄ դեմ պատրաստելու և բանվոր դասակարգի դեմ սկսված ներքին արշավի միջև (արհմիությունների վերաբերյալ որինազիծն Անգլիայում, ռազմական որենքները Ֆրանսիայում, Փաշխատական տերրորն Իտալիայում և այլն):

Կոմիտեներն Քործկոմն այն կարծիքին է, Վոր սրա հետ միա-
սին անհրաժեշտ է համառ աշխատանք կատարել մերկացնելու
սոցիալ-դեմոկրատիայի ու Ամստերդամի Ինտերնացիոնալի քա-
ղաքականությունը, Վորոնք սաբոտաժի յեն յենթարկում՝ իմպե-
րիալիստներին ու նրանց կառավարություններին ակտիվ կերպով
հակադդելու համար ձեռնարկվող ամեն մի քայլ:

2. ԱԶԳԱՅԻՆ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԿՐԻՋԻՍԸ ՅԵՎ ՉԻՆԱՍՏԱՆՈՒՄ ՏԻՐՈՂ ՆՈՐ ԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Կոմիտեներն Քործկոմն արձանագրում է, Վոր չինական հե-
ղափոխության անցքերի ընթացքը հաստատեց նրա շարժիչ ուժերի
այն գնահատականը, Վորը արվեց վերջին (7-րդ) ընդլայնած պլե-
նումում:

Կոմիտեներն Քործկոմը մասնավորապես արձանագրում է,
Վոր անցքերի ընթացքն ամբողջապես արդարացրեց 7-րդ ընդլայ-
նած պլենումի այն պրոգնոզը, Վոր բուրժուազիան անպայման հե-
ռանալու յե աղգային-հեղափոխական միասնական ճակատից և
անցնելու յե հակահեղափոխության կողմը:

Այս պրոցեսսն իր արձանագրությունը գտավ նրանով, Վոր
Չան-Կայ-Շին և մի շարք այլ գեներալներ հակահեղափոխական
հեղաշրջում կատարեցին, Նանկինի կառավարություն կազմվեց և
աջ գոմինդանականներն անջատվեցին ու գոմինդանի դրոշի տակ
հիմնեցին իրենց սեփական հակահեղափոխական կազմակերպու-
թյունը:

Չան-Կայ-Շիի հեղաշրջումն ընդհանուր քաղաքական նոր կա-
ցություն է հիմնական դասակարգային ուժերի նոր դասավորու-
թյուն է ստեղծում Չինաստանում: Չան-Կայ-Շիի հեղաշրջումը
դասակարգերի վճռական վերախմբավորում է նշանակում և այս
պատճառով Կոմիտեներն տակտիկան պետք է յելակետ ընդունի
հենց այս նոր կացությունը:

Չան-Կայ-Շիի կամ աջ գոմինդանականների հետ կոմպրոմիսի
գալու գնով տակտիկա ստեղծելու ամեն մի փորձ՝ կնշանակեր վոչ
այլ ինչ, յեթե վոչ ուղղակի կապիտուլյացիա Չան-Կայ-Շիի առ-
ջև և բացահայտ դավաճանություն չինական հեղափոխության շա-
հերին:

Բուրժուազիայի և նրա ռազմական առաջնորդ Չան-Կայ-Շիի
դավաճանության պատճառը մի կողմից բանվոր դասակարգի ու
գյուղացիության ծավալվող մասսայական շարժումն ու չինկոմ-

կուսակցութեան հաջողութեաններն ելին, իսկ մյուս կողմից միջազգային իմպերիալիզմի միացյալ ուժերի որ-որի վրա ազդեցիվ դարձող ճնշումը:

Յերկուշ կրելով հեղափոխական դասակարգային պահանջներն ու լողուններն ի տակ առաջ ընթացող մասսայական շարժման դարգացումից, ազգային բուրժուազիան անխուսափելիորեն պետք է իմպերիալիստներն ու միլիտարիստներն հետ դործարք կնքելը գերադասեր և դերադասեց հեղափոխական սլայքարի հետագա դարգացումից: Դրանով իսկ ազգային բուրժուազիան դուրս յեկավ ազգային հեղափոխական Ֆրոնտից և ացնավ հակահեղափոխութեան բանակը: Չնայելով մասնակի պարտութեանը և Չան-կայ-Շիի ու Լնկ. հակահեղափոխութեանը, հեղափոխութեանը թեմակոխեց իր դարգացման բարձր շրջանը, բուրժուազիայի, մանր բուրժուազիայի, գյուղացիութեան և պրոլետարիատի բլոկը դարգացավ և դարձավ պրոլետարիատի, գյուղացիութեան ու մանր-բուրժուազիայի բլոկ, պրոլետարիատի որեցոր աճող ղեկավարութեամբ:

Չինական հեղափոխութեան դարգացման անցած ետապը բնորոշվում է յերկու բանակի գոյութեամբ. մի կողմից ոտարերկրյա իմպերիալիզմի, Ֆեոդալ միլիտարիստներն և խոչոր բուրժուազիայի կոմպրոդորական խավերի բանակը, իսկ մյուս կողմից՝ ազգային-հեղափոխական բուրժուազիայի, գյուղացիներն, արհեստավորներն և բանվորներն բանակը: Այս ետապը յերկու բանակը յերեք դարձնելու տենդենց ունեն. նա ազգային բուրժուազիային առանձնացրեց ու նրան հակադրեց պրոլետարիատի, արհեստավորներն ու գյուղացիներն «ձախ բլոկին»:

Ներկա մոմենտը բնորոշվում է հենց այս յերեք բանակի գոյութեամբ. Չան-կայ-Շին արդեն զնդակահարում է բանվորներին և գյուղացիներին, բայց գեոկոս կռվում է հյուսիսային միլիտարիստներն գեմ:

Սակայն, սլայքարի վողջ տրամաբանութեանն այս յերեք բանակը յերկու յե դարձնում, բայց արդեն նոր յերկու բանակ, վորքան խոչոր բուրժուազիան (Չան-կայ-Շիի, Բայ-Ցուն-Չի և Լնկ. գլխավորութեամբ) անխուսափելիորեն ավելի և ավելի յե մոտենում Ֆեոդալական ռեակցիային և ոտարերկրյա իմպերիալիզմին, ըստ վորում այս պրոցեսն արագանալու յե:

Չինական հեղափոխութեան կրիզիսը և սոցիալ դասակարգային ուժերն ներկա զուգակցումը ցույց են տալիս և ապացուցում այն, վոր բուրժուական դեմոկրատական հեղափոխութեան ավարտումն

ընդեմ Ֆեոդալիզմի (այս հաշվում և ագրարային հեղափոխու-
թյունը) և նամանավանդ պայքարի ավարտումն ընդեմ իմպերիա-
լիզմի՝ կարող են իրագործել միայն հակահեղափոխական դարձած
բուրժուազիայի դեմ մղելիք պայքարում։ Հետևողական ազդային
ազատագրական պայքարը վոչ միայն կոնֆլիկտ չի առաջացնում
բանվորների ու գյուղացիների մասսայական շարժման ծավալման
կամ ագրարային հեղափոխության պահանջների հետ, այլ ուղղա-
կի ժողովրդական վարի ամենալայն խավերի մասսայական շարժ-
ման աճում և յենթադրում իմպերիալիզմի ուղղակի տապալման
ուղղությամբ։

Կոմիսներնի Գործկոմն այն կարծիքին և, վոր հեղափոխու-
թյան արդեն անցած չըջանում ազդային բուրժուազիայի հետ բլոկ
կազմելու տակտիկան միանգամայն ճիշտ և յեղել։ Այս տակտիկա-
յի պատմական արդարացում և ծառայում թեկուզ հենց միայն
հյուսիսային արշավանքը, վորի հետևանքը յեղավ այն, վոր ամե-
նուրեք բանվորների ու գյուղացիների մասսայական շարժումը ծա-
վալվեց, արհմիությունները, գյուղացիական միություններն ու
կոմիտեները և, վերջապես՝ չինական կոմկուսակցությունն աճե-
ցին։

Կոմիսներնի Գործկոմն այն կարծիքին և նամանավես, վոր նա-
խագահությունը ճիշտ և վարվել, միաժամանակ դիրեկտիվներ
տալով այն մասին, վոր Չան-Կայ-Շիին մերկացնեն, կառավարու-
թյան ու գոմինդանի ապարատում կարևորագույն ստրատեգիական
դիրքերը գրավեն, աջ գոմինդականներին մեկուսացնելու ուղղու-
թյուն բռնեն, միշտ հենվեն մասսաների վրա և այլն, և այլն։

Կոմիսներնի Գործկոմը հավասարապես հավանություն և տա-
լիս նախագահության այն դիրքին, վոր նա բռնեց Չան-Կայ-Շիի
հեղաշրջումից անմիջապես հետո և վորը մատնանշված և հեղաշր-
ջումից անմիջապես հետո Կոմիսներնի հրապարակած կոչի մեջ։

Կոմիսներնի Գործկոմը մի անգամ ևս չեչտում և, վոր Չան-
Կայ-Շիի հեղաշրջումը և նրանով արտահայտվող ռադիկալ գաղա-
կարգային վերախմբավորումը վողջ հետագա տակտիկայի այն յեղ-
ման կետ և հանդիսանում, վորը բացասում և ազդային-ազատա-
գրական շարժմանը դավաճանած ու հակահեղափոխության ակտիվ
ուժ դարձած բուրժուազիայի հետ կոմպրոմիսի գալը և նրա հետ
միություն կամ համաձայնություն կնքելը։

Կոմիսներնի գործկոմն արձանագրում և, վոր սոցիալ-դեմո-
կրատիայի ու Ամստերդամի՝ չինական հեղափոխության «ներքին»

Հարցերում բռնած գիծն անմիջականորեն բղխում է նրա վերաբերմունքից դեպի իմպերիալիզմի քաղաքականությունը Չինաստանում: «Չախ» սոցիալ-դեմոկրատները, խոսքով «պաշտպանելով» Շանհայի բանվորներին, գործնականում սոցիալիստական հեղափոխությունը բուրժուական դեմոկրատականից չինական պարսպով զուտելով, ու պայքարելով չինական հեղափոխական պրոլետարիատի ավանգարդի դեմ, դեմ են դուրս գալիս պրոլետարիատի հեղափոխական ազգային հեղափոխության մեջ և, հետևաբար, հոգուտ բուրժուական-իմպերիալիստական բլոկի:

Պաշտոնական սոցիալ-դեմոկրատիան և Ամստերդամն որ-որի վրա ավելի յեն Չան-Կայ-Շիին պաշտպանելու կուրս վերցնում, նրանք ավելի մեծ չափով են մերձեցում ստեղծում այն դեղին «բանվորական» կադմակերպությունների հետ, վորոնց փորձում է կադմակերպել հակահեղափոխությունը հեղափոխական արհմիությունների փոխարեն: Մեղադրելով կոմունիստներին չինական ազգային-հեղափոխական շարժումը պառակտելու մեջ (աջ սոցիալ-դեմոկրատներ) և կեղծավորաբար ու լրբաբար մեղադրելով նրանց չին պրոլետարիատի հատուկ շահերը բավարար չափով չպաշտպանելու մեջ («ձախ» սոցիալ-դեմոկրատներ), միջազգային մենչևիզմը գործնականում ուղղակի դաշնակիցն է դառնում վոչ միայն տարերկյա իմպերիալիզմի, այլ և նրա չինական գործակալության — բանվոր դասակարգի դահիճների նանկինյան ավազակախմբի:

3. ՉԻՆԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՀԱԿԱՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՈՒԺԵՐԸ

Կոմինտերնի Գործկոմն արձանագրում է, վոր մի շարք բուրժուական հակահեղափոխական հեղաշրջումները (Շանհայում, Նանկինում, Կանտոնում և այլն) նշանակում են չինական հեղափոխության մասնակի պարտություն և հակահեղափոխական բլոկի ուժերի վորոշ աճում:

Սակայն, Կոմինտերնի Գործկոմը սխալ է համարում այն տեսակետը, վոր իբրև թե այդ պարտությունը վճռական նշանակություն ունի հեղափոխության վողջ բախտի համար:

Այս տեսակետն արդեն սխալ է հենց միայն այն պատճառով, վոր հեղափոխության հիմնական սպառնալիքը չինական բուրժուազիան է համարում, առանց նրան կապելու իմպերիալիզմի ուժերի հետ, և միևնույն ժամանակ թերազնահատում է աշխատավորական մասսաների հզոր ու տարերային շարժումը:

Չան-Կայ-Շիի բոլոր միացյալ ուժերը կճգմվեյին հաղթական հեղափոխական բանակների կողմից, յեթե հակահեղափոխության գլխավոր հենակետները չպաշտպանվեյին միջազգային իմպերիալիզմի ուժերով, վորոնք գործողություններ են կատարում բոլոր մեթոդներով և իրենց գործակալներն ունեն ազգային-հեղափոխական Ֆրոնտի տատանվող տարրերի շրջանում:

Կոմիսներնի Գործկոմն իր բոլոր սեկցիաներին պարտավորեցնում է՝ բացատրել բանվոր դասակարգին և գյուղացիությանն այն հիմնական փաստը, վոր Չինաստանի համարյա թե բոլոր կարևորագույն արդյունաբերական կենտրոնները փաստորեն գրաված իմպերիալիստական զորքերն են հենց, վոր գլխավոր հակահեղափոխական ուժն են հանդիսանում Չինաստանում:

Համեմատաբար թույլ չինական բուրժուազիան չեր կարող խոչոր սպառնալիք ստեղծել չինական հեղափոխական մասսաների համար, յեթե նա ուղղակի և անուղղակի կերպով պաշտպանություն չգտներ ոտարերկրյա ինտերվենցիոնիստների կողմից: Այս վերջինները կենտրոնացնում են իրենց զինված ուժերը, բլոկադայի յեն յենթարկում նավահանգստները մեկուսացնում են հեղափոխության կենտրոնները, Ֆինանսավորում են հակահեղափոխական բանակները, փորձում են քայքայել հեղափոխության բանակները, շարունակ դիվանագիտական ճնշում են գործադրում, պաշտպանում են բուրժուական դավադիրներին հեղափոխական կառավարության տերիտորիայում, ոտարերկրյա և տեղական բուրժուազիայի կողմից արտադրության, առևտրի ու վարկի սարսուծ են կազմակերպում և այլն, և այլն:

Հատկապես հարկավոր է նշել իմպերիալիստների այն կատաղի ջանքերը, վորոնց նպատակն է բանվորների ու կոմունիստների ջարդ կազմակերպել, գյուղացիական շարժումը ճնշել և ԽՍՀՄ մեկուսացնել:

Պակայն, հեղափոխության մասնակի պարտությունը դիմականդնում է նրա զարգացման բարձր շրջանի անցնելը և այն, վոր սկսվել է մասսաների ավելի ինտենսիվ համախումբը: Գյուղացիական շարժման աճումը, զինված ուժերի կազմակերպումն ապստամբական ջոկատներում, մի շարք հաղթություններ, վոր տարել են այս տարերայնորեն կազմակերպվող ուժերը դավաճան գեներալների վերաբերմամբ, չնայելով հակահեղափոխության կատաղի տերրորին, բանվոր դասակարգի կազմակերպությունների պահպանումը, կոմկուսակցության և ձախ Գոմինդանի անընդհատ

աճումը, — այս բոլորը կարևոր սիմպտոմներն են շինական հեղափոխության հետագա զարգացման ու խորացման:

Ուխտանի կառավարությունը և ձախ գոմիշդանն իրենց հիմնական տենդենցով քաղաքային ու գյուղական մանր-բուրժուական մասսաների և պրոլետարիատի բլուկ են: Չնայելով առանձին գեներալների, գեներալների խմբերի, գոմիշդանի «ձախ թևի» առանձին քաղաքական գործիչների կամ նրանց խմբավորումների հնարավոր և նույնիսկ անխուսափելի հետագա դավաճանությանը, դասակարգային պայքարի զարգացումն անխուսափելիորեն պետք է վռտքի հանի մասսաներին, վորոնց շարժումը գալիք հաղթանակների գրավականն է:

Այս պատճառով Կոմիտեների Գործկոմը խորապես սխալ է համարում շինական հեղափոխության ներկա կրիզիսի վերաբերմամբ յեղած լիկվիդատորական այն տեսակետը, վորն ասում է, թե հեղափոխությունը վճռականապես պարտվել է և նոր միջադպյին կացություն է ստեղծվել: Եյապես սխալ լինելով, այդ տեսակետը չի կարող պրոլետարական շարքերը կազմալուծելու գենք չծառայել, մի կազմալուծում, վորն առանձնապես վնասակար է հենց այժմ, յերբ կամքի ու գործողության հատուկ միասնականություն է պահանջվում Կոմունիստական Ինտերնացիոնալի և հեղափոխական պրոլետարիատի կողմից:

4. ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՈՒ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՄԱՍՍԱՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՅԵՎ ԶԻՆԱԿԱՆ ԿՈՄԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ:

Չինական հեղափոխության առաջ ծառացած հսկայական դրժվարությունները և՛ առաջին հերթին, այն դժվարությունները, վորոնք կապ ունեն իմպերիալիստների միացյալ ուժերի զինված և այլ միջամտությունների, ինչպես և անխուսափելի դավաճանությունների ու տատանվող սոցիալական խմբավորումների կողմից թշնամու բանակն անցնելու հետ, պայքարի այնպիսի պայմաններ են ստեղծում, վորոնք հեղափոխության հաղթական զարգացման համար պահանջում են պայքարի ասպարեզ գրավել աշխատավորության հսկայական մասսաներ: Միայն այս մասսաներին ափսիսվ պայքարի մասնակից անելը կարող է մի այնպիսի ուժ ստեղծել, վորը կջախջախի և՛ ներքին հակահեղափոխությունը և՛ իմպերիալիստական ինտերվենտներին, կհաղթահարի Չինաստանի բաժանումն իմպերիալիստ-

ների միջև, վերջ կտա Ֆեոդալական հարաբերությունների մնացորդներին, կապարտի բուրժուական—դեմոկրատական հեղափոխությունը և հող կստեղծի Չինաստանի դարգացումը սոցիալիզմի ուելսերի վրա դնելու համար:

Մասսաներին պայքարի ասպարեզ կարելի չե գրավել միայն գյուղում ագրարային հեղափոխություն սկսելու, իսկ քաղաքում բանվոր դասակարգի կարիքներն ու նրա քաղաքական պահանջները բավարարելու պայմանով: Հարուստներին տրվող հողավարձի միանգամայն վոչնչացման, հողերի բաժանման, կալվածատերերի, մանդարինատի, վանքերի և այլ արտոնյալ հաստատությունների բոլոր հողերի գրավման, ստրկացուցիչ գործարքների արգելման, չքավոր գյուղացիների պարտքերի վոչնչացման, վաշխառվական կապիտալին տալիք հարկերի վճռական իջեցման և նրանց լուծն ավելի ունևոր խավերի վրա դնելու վերաբերյալ լոգունդները պետք է կենսագործվեն Չինաստանի ամբողջ տերիտորիայում ու ամենից առաջ Ուխանի կառավարության տերիտորիայում և պետք է մասսաներին վռտքի հանեն բուրժուական դավաճանների ու հյուսիսային միլիտարիստների դեմ:

Ագրարային հեղափոխություն, վորը պարունակի իր մեջ հողի գրավում ու ազգայնացում—այս է չինական հեղափոխության նոր ետապի հիմնական, ներքին, սոցիալ—տնտեսական բովանդակությունը: Ներկայումս հիմնական խնդիր է ագրարային հարցի «պլեբյական» հեղափոխական լուծումը տասնյակ և հարյուր միլիոնավոր գյուղացիների կողմից՝ վարից, ըստ վորում կոմկուսակցությունը պետք է չարժման գլուխ անցնի և ղեկավարի այն:

Ըստ այսմ կոմկուսակցությունը պետք է կառավարության ներսում ևս այնպիսի քաղաքականություն վարի, վոր նպատակ ագրարային հեղափոխության ծավալմանը և իրեն կառավարության կողմից: Զարգացման տվյալ շրջանում հենց այս միայն կարող է իրականում տվյալ կառավարությունը բանվորա—գյուղացիական հեղափոխության կազմակերպչական—քաղաքական կենտրոն և պրոլետարիատի ու գյուղացիության հեղափոխական—դեմոկրատական ղիկատատուրայի որդան դարձնել: Մյուս կողմից, վարից և վերից վարելիք միայն այսպիսի քաղաքականության հիման վրա հնարավոր է իսկական հուսալի ղինված մասեր կազմակերպել և ամբողջ բանակը վերակազմակերպել հեղափոխական հաստատ հիմքերի վրա:

Քաղաքներում անհրաժեշտ է աշխատել բանվորական մասսաների նյութական մակարդակը բարձրացնելու, նրա իրավական

գրությունն ինչպէս գործարանում, այնպէս և ընդհանրապէս հասարակական կյանքում մճռականորեն բարելաւելու, ամբողջ այն որենսդրությունն արմատապէս մոռնալու, մոռնալու քանի որ իրավագուրի «դասի» գրության մեջ և դնում, Տ ժամյա բանվորական որվա լողունքը կիրառելու, աշխատավարձը բարձրացնելու, բանվորական կազմակերպությունների իրավունքները ճանաչելու և այլն:

Սրա հետ միասին անհրաժեշտ և արագ, համարձակ և մճռական կերպով վարել բանվորներին ու գյուղացիներին, առաջին հերթին կազմակերպւածներին ու ավելի գիտակիցներին մասսայորեն սպառազինելու քաղաքականություն: Այս քաղաքականությունն անհրաժեշտ և վարել մոռնալ անհրաժեշտ հաստատակամությամբ:

Կոմիտեներն Պորժկոմն այն կարծիքին և, մոր չինկոմկուսակցությունը պետք է իր բոլոր ջանքերը լարի, մոր և՛ անմիջականորեն, և՛ ձախ գոմիշդանականների հետ դաշինք կնքած ամենայնեռանդուն աշխատանք կատարի մասսաներին մօրիլիզացիայի յենթարկելու և կազմակերպելու ուղղությամբ. պետք է ամենայնեռանդուն կերպով բանվորներին համախմբել կուսակցության մեջ, պետք է քաղաքում ու գյուղում ամենայնեռանդուն կերպով աշխատավոր մասսաներին համախմբել գոմիշդանի մեջ, մորը հարկավոր է ամենատարագ թափով մասսաների ամենալայն կազմակերպություն դարձնել—այս և չինական կոմկուսակցության գլխավոր անելիքը ներկա մոմենտում:

Կոմիտեներն Պորժկոմը չինկոմկուսակցության անշեղ ուշադրությունն և հրավիրում բանվորներին ու գյուղացիներին ամեն տեսակ մասսայական կազմակերպությունների, ինչպէս՝ արհմիությունների, գործադուլային կոմիտեների, գործարկոմների, բանվորական դրութիւնների, գյուղացիական կոմիտեների, գյուղացիական միությունների, բատրակների կազմակերպությունների, զինված գյուղացիական դրութիւնների ամբողջման ու ընդլայնման, ինչպէս և քաղաքային մանր-բուրժուազիային, մանր-արհեստավորներին, տնայնագործներին և նման այլ խավերի կազմակերպման անհրաժեշտության վրա: Այս բոլոր կազմակերպություններում անհրաժեշտ է պրոպագանդ մղել գոմիշդանի մեջ մտնելու ոգտին, այս վերջինը դարձնելով հեղափոխական մանր բուրժուական դեմոկրատիայի և բանվոր դասակարգի հզոր մասսայական կազմակերպություն:

Կոմիտեներն Պորժկոմը կտրականապէս ժխտում է ազգային

հեղափոխութեան խնդիրները պրոլետարիատի դասակարգային պայքարի խնդիրներին հակադրելը :

Նա այն կարծիքին է, վոր նման հակադրումը, վորը նկատ-վում է ինչպես ծայրահեղ—ձախ յեմքրոպական խմբավորումներում, այնպես է սոցիալ-դեմոկրատիայի շարքերում, վոչ այլ ինչ է, յեթե վոչ դեմոկրատական շինական հեղափոխութեան մեջ պրո-լետարիատի հեղեմոնիայից հրաժարում, իբրեւ թե բանվորական ցեխով շէինայի ոգտին, վորը քաղաքականապես ոպպորտունիզմի յերանգավորումներից մեկն է հանդիսանում և պրոլետարիատին դարձնում է դեմոկրատական բանակի պոչը : Մինչդեռ բուրժուա-զիայի՝ հակահեղափոխութեան բանակն անցնելուց հետո պրոլե-տարիատն ավելի և ավելի յե վողջ ազգային—հեղափոխական շարժ-ման ճանաչված հեղեմոնը (դեկտման ու առաջնորդը) դառնում : Չինական հեղափոխութեանը չի կարող հետապնդում ծավալվել ու հաղթանակել, յեթե վողջ դեմոկրատական հեղափոխութեան մեջ՝ մի հեղափոխութեան, վորը կարելի յե ավարտել միայն բուր-ժուազիայի դեմ պայքար մղելով, բանվոր դասակարգի, վորպես այդ հեղափոխութեան առաջնորդի, դերը չուժեղանա :

5. ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԳՈՄԻՆԴԱՆԸ

Չինական կոմկուսակցութեանը կը կարողանա իրագործել իր առաջ դրված խնդիրները, վորչափով նա, վորպես բանվոր դա-սակարգի ավանգարդ, կունենա իր սեփական քաղաքական դեմքը, մի դեմք, վորը տարրերովելու յե նույնիսկ ամենաձախ մանր-բուր-ժուական հեղափոխականների քաղաքական դեմքից :

Կոմկուսակցութեանը քաղաքական ամեն տեսակ պարագանե-րում յերբեք չպետք է լուծվի վոչ մի քաղաքական կազմակերպու-թեան մեջ : Նա պետք է ինքնուրույն ուժ լինի, նա մի հատուկ դա-սակարգի, պրոլետարիատի, ամենահետեւողական և ամենահեղա-փոխական դասակարգի կազմակերպութեանն է յերկրում : Այս պատճառով կոմկուսակցութեանը չպետք է իր ձեռքերը կաշկանդի իր տեսակետների մասին պրոպագանդ մղելու և մասսաներին իր դրոշի տակ համախմբելու գործում . նա չպետք է հրաժարվի հե-ղափոխական մանր-բուրժուական դեմոկրատիայի տատանումները ու տարուբերումները քննադատելու իր իրավունքից : Ընդհակա-ռակը, միայն այդպիսի քննադատութեանը մանր-բուրժուական հեղափոխականներին դեպի ձախ կմղի և կապահովի բանվոր դա-սակարգի հեղեմոնիան հեղափոխական պայքարում :

Սակայն, չինկոմկուսակցութեան ինքնուրույնութիւնն ամենեւին չի կարելի բացատրել աշխատելու, վոր նա ինքնամփոփ է և մեկուսացած պրոլետարական աշխատավորական խավերից, առաջին հերթին գյուղացիութիւնից: Այս տեսակետից կոմիւնիստերն Փորձկոմն ամենայն վճռականութեամբ ժխտում է գոմինդանից դուրս գալու պահանջը կամ աշխատի դիրք բռնելը, վոր եյապես անխուսափելիորեն այդպիսի վախճանի յե բերում: Ներկայումս «առայժմ գոմինդանից հարկավոր չե դուրս գալ» լոզունգն առաջադրելը նույնպէս հիմարութիւն է, ինչպէս յեթէ առաջադրելու լինենք գոմինդանից դուրս գալ լոզունգը, վորովհետեւ ընթացիկ մոմենտը պրոլետարական կուսակցութիւնից հենց պրոլետարիատի դեկավար դերի ապահովում է պահանջում գոմինդանի ներսում: Չինաստանում գոմինդանը կազմակերպման հենց այն սպեցիֆիկ չինական ձեւն է, վորտեղ պրոլետարիատն անմիջականորեն համագործակցում է մանր-բուրժուազիայի ու գյուղացիութեան հետ: Տվյալ պայմաններում, պրոլետարիատը չի կարող յերկրում հեզեմոն դեր ունենալու պահանջ անել, քանի դեռ կոմկուսակցութիւնը, բանվոր դասակարգի կուսակցութիւնը, հեզեմոն դեր ունենալու պահանջ չի արել գոմինդանի ներսում:

Կոմիւնիստերն Փորձկոմն այն կարծիքին է, վոր գոմինդանի, վորպէս հեղափոխական շարժման յուրահատուկ կազմակերպչական ձեւի, թերագնահատման քաղաքականութիւնը գործնականում այն հետեւանքը կունենար, վոր գոմինդանի դրոշն աջերի ձեռքը կընկներ. հենց այն պատճառով, վոր գոմինդանի դրոշը չափազանց ծանրակշիռ քաղաքական մի ֆակտոր է յերկրում, բուրժուական լիզերները Չան-կայ-Շիի գլխավորութեամբ աշխատում են գոմինդանի դրոշի տակ ընթանալ: Կոմկուսակցութեան տակտիկան վոչ թէ այն պիտի լինի, վոր քողարկի Չան-կայ-Շիի այս քաղաքական մանյովըրը, վոր անխուսափելի կլինէր գոմինդանից դուրս գալու կուրս վերցնելու դեպքում, այլ այն, վոր մերկացնի բուրժուական քաղաքագետներին, վորպէս ազգային հեղափոխութեան գործին, գոմինդանին, սոււնյութսենիզմի հակաիմպերիալիստական տրագիկաններին դավաճանողներին և իմպերիալիստներին բանակն անցնողներին:

Կոմիւնիստերն Փորձկոմը սխալ է համարում այն տեսակետը, վորի համաձայն ազգային-ազատագրական (հակաիմպերիալիստական) հեղափոխութիւնը «վերջացել է» և «սկսվել» մի ուրիշ, դասակարգային, գյուղացիական և բանվորական հեղափոխութիւնը: Չան-կայ-Շիի հեղաշրջումից հետո նույնիսկ լայն մաս-

սաների համար պարզվեց, վոր ազգային—ազատագրական հեղափոխությունը կարող է զարգանալ միայն բանվոր դասակարգի հեղեմոնիայի ներքո: Յեւ հենց այս պատճառով գոմինդանի դրոշը, ազգային ազատագրական պայքարի դրոշը, չի կարելի զիջել այդ պայքարին դավաճանողներին:

Կոմիներնի Գործկոմն այն կարծիքին է, վոր յելնելով մասսայական շարժման համարձակ ու վճռական ծավալման խնդրից, Չինաստանի կոմունիստական կուսակցությունը պետք է նույնպիսի համարձակությամբ ու վճռականությամբ աշխատի գոմինդանը դարձնել իսկական մասսայական մի այնպիսի կազմակերպություն, վորն իր մեջ ընդգրկի քաղաքի ու գյուղի աշխատավոր բնակչությանը:

Կոմիներնի Գործկոմն այն կարծիքն է, վոր Գոմինդանի առաջ ծառացած խնդիրները պահանջում են համապատասխան ձևով նրանց հարմարեցնել և նրա կազմակերպչական ձևերը: Անհրաժեշտ է հնարավորին չափ արագ կերպով վերակազմակերպել գոմինդանը. նրան մասսաներին ևս ավելի մոտեցնելու ուղղությամբ, անհրաժեշտ է ամենալայն չափերով բանվորներ, գյուղացիներ և արհեստավորներ մտցնել նրա մեջ, կոլլեկտիվ կերպով ընդունել բանվորական, գյուղացիական, զինվորական և արհեստավորական կազմակերպություններին (արհմիություններ, դործարկոմներ, գյուղացիական կոմիտեներ, գյուղացիական միություններ, արհեստավորներին ապահովագրական կազմակերպություններ, բանակային կազմակերպություններ, գյուղացիական «կարմիր նիզակներ», պարտիզանական ջոկատներ, նրանց հակահեղափոխական տարրերից մաքրելու պայմանով, բանվորական դրոշմաններ և այլն), գոմինդանի տեղական ու կենտրոնական ղեկավար ինստանցիաների լիակատար ընտրականություն և այլն և այլն:

Գոմինդանն իսկական մասսայական, իսկական ընտրական և իսկական հեղափոխական դեմոկրատական կազմակերպություն դարձնելու այսպիսի վճռական կուրս վերցնելու դեպքում միայն նախադրյալներ կստեղծվեն դեմոկրատական հեղափոխության ամրացման ու հաղթական զարգացման համար Չինաստանում:

Միայն այսպիսի կուրս վերցնելու դեպքում մաքսիմալ հակամիջոցներ կստեղծվեն ձախ գոմինդանականների տատանվող խրմբակների հնարավոր ու անխուսափելի նահանջման (ինչպես այս պատահեց Կանտոնում) և դեներալների ու այլ ռազմական լիզերների դավաճանությունների դեմ: Կոմկուսակցությունը պարտա-

վոր և ժամանակին հայտնաբերել ամեն մի տատանում Չան-կայ-
Շիի կամ իմպերիալիստների հետ դաշինք կնքելու ուղղությամբ
և համապատասխան կոնկրետ միջոցներ ձեռք առնել ինչպես ազի-
տացիայի ու սլրոպադանդի, այնպես և կազմակերպչական ձեռ-
նարկումների գծով:

Չինական կոմկուսակցությունը, պահպանելով ու զարգացնե-
լով հանդերձ իր կուսակցական կազմակերպությունը, պետք է մե-
ծապես ազդի գոմինդանի աշխատանքի վրա: Այս խնդիրը նա կը-
կարողանա իրագործել միայն այն դեպքում, յերբ լիապես կզի-
տակցի իր դասակարգային սլրոլետարական դիրքը, կպահպանի իր
իդեոլոգիական ու քաղաքական դիժը, կուժեղացնի ու կամրացնի
իր կազմակերպությունը, կուսակցության ղեկավարությանը մաս-
նակից կանի բանվոր կոմունիստներին, կուսակցության ազդեցու-
թյունը կուժեղացնի բանվորների ու գյուղացիների լայն մասսա-
ների վերաբերմամբ և նրանց շրջանում կուսակցության հեղինա-
կությունը կբարձրացնի:

Կոմինտերնի Գործկոմը նշում է, վոր չինական կոմկուսակ-
ցության մեջ մի շարք տատանումներ են նկատվել հենց այս կե-
տում, վոր կուսակցությունը գոմինդանի լիդերներին քննադատու-
թյան յենթարկելիս միշտ բավարար չափով հաստատակամություն
չի հայտնաբերել, վոր կուսակցության ներսում յերբեմն վորոշ
յերկյուղ է նկատվել մասսայական շարժման ծավալման հանդեպ,
առաջին հերթին գյուղացիության մեջ ծայր առած այն շարժման
հանդեպ, վորը նպատակ ուներ հողերը գրավել, կալվածատերերին
վտարել և այլն:

Այս տատանումները, վորոնք հատկապես վնասակար են հե-
ղափոխության ներկա ետապում, ցույց են տալիս, վոր Չինաստանի
կոմկուսակցության վորոշ ընկերներ բավարար չափով սլարդ չեն
ըմբռնել Կոմինտերնի գիժը չինական հեղափոխության հարցում:

Կոմինտերնի Գործկոմն անհրաժեշտ է համարում չինկոմկու-
սակցության շարքերում լայն կերպով լուսաբանել վերևում մատ-
նանշված սխալներն ու տատանումները, առանց վորի անխուսափե-
լիորեն ուժեղանում է չինական հեղափոխության արմատական
հարցերում յեղած վորոշ տատանումների վտանգը: Չինկոմկու-
սակցությունը, վորպես բանվոր դասակարգի կուսակցություն,
պետք է անցնի գյուղացիների ազրարային շարժման գլուխը և ա-
մենատանինա կերպով սլայքարի այդ շարժման թափը նեղ շրջա-
նակների մեջ դնելու ամեն տեսակի վորձերի դեմ:

Կոմինտերնի Գործկոմը խորը հաստատակամություն է հայտ-

նում, վոր յերիտասարդ շինկոմկուսակցությունը, վորը հսկայա-
կան աճում է ցույց տալիս և արդեն հեղափոխական հերոսության
որինակներ է տվել, արագ կերպով կշտկի այս սխալները, վորոնք
բացատրվում են անցքերի ծայր աստիճան բարդությամբ և Ձի-
նաստանի կոմունիստական շարժման նոր լինելով:

6. ՈՒՆԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ, ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՈՒ ԲԱՆԱԿԻ ՀԱՐՑԵՐԸ ՅԵՎ ՁԻՆԿՈՄԿՈՒՍԱԿՅՈՒԹՅԱՆ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ:

Կոմիւնտերնի Գործկոմը սխալ է համարում այն տեսակետը,
վորը թերազնահատում է Ուխանի կառավարությունը և փաստո-
րեն ժխտում նրա խոշորագույն հեղափոխական դերը: Ուխանի
կառավարությունը և ձախ գոմինդանի գլուխն անցածները իրենց
դասակարգային կազմով վոչ միայն գյուղացիների, բանվորների
և արհեստավորների, այլև միջակ բուրժուազիայի մի մասի ներ-
կայացուցիչներ են: Այս պատճառով Ուխանի կառավարությունը,
լինելով ձախ գոմինդանի կառավարություն, դեռևս պրոլետարիա-
տի ու գյուղացիության դիկտատուրա չէ, բայց գտնվում է դեպի
այդպիսի դիկտատուրա տանող ուղիի վրա և պրոլետարիատի հաղ-
թական դասակարգային պայքարի դեպքում, կորցնելով իր ու-
ղիվալ-բուրժուական ուղեկիցներին, հաղթահարելով մի շարք դա-
վաճանություններ, անխուսափելիորեն զարգանալու յե դեպի այդ-
պիսի դիկտատուրա ստեղծելու կողմը:

Կոմիւնտերնի Գործկոմն այն կարծիքն է, վոր Ձինաստանի
կոմկուսակցությունը պետք է ամենայնուհետև մասնակցություն
ցույց տա Ուխանի «ժամանակավոր հեղափոխական կառավարու-
թյան» աշխատանքներին: Այդպիսի մասնակցությունից հրաժար-
վելը կամ անորոշ ու սկեպտիկ վերաբերմունք ցույց տալը նրան,
ըստ ձևի չափազանց «ուղիվալ հեղափոխական» լինելով, իրական-
ում կրկնում է ոուս մենչևիկներին 1905 թվին գործած սխալները,
յերբ նրանք հնարավոր չհամարեցին մասնակցել ժամանակավոր
հեղափոխական կառավարության մեջ և դերադասեցին «ծայրա-
հեղ ձախ ուղիւղիցիա» լինել, գործնականում քարշ գալով լիբերալ
բուրժուազիայի պոչից:

Մենչևիկների բռնած դիրքի համար ընտրոշ եր հենց այն, վոր
նրանք հրաժարվեցին հեղափոխական կառավարության մեջ մաս-
նակցելուց և մասնակցություն բերին հակահեղափոխական կոալի-
ցիաներին:

Ուխանի հեղափոխական կառավարության մեջ մասնակցելը
վոչ մի առնչություն չունի Յեվրոպայի բուրժուական-սոցիալիս-

տական կոալիցիաների հետ, վորովհետև Ուխանք գործնականում հեղափոխական պատերազմ է մղում իմպերիալիստների, Ֆեոդալների, իսկ այժմ և սեփական յերկրի բուրժուազիայի նշանակալից մասի դեմ:

Կոմիներնի Գործկոմն այս պատճառով այն կարծիքին է, վոր կոմկուսակցությունը պետք է ամենայնուհետև կերպով աշխատի կառավարության կենտրոնական և տեղական օրգաններում, քրննադատության յենթարկելով նույնիսկ իր ամենամոտ դաշնակիցների բավականաչափ կայուն շլիները և ապահովելով կառավարական քաղաքականության կուրսի ճշտությունը:

Կոմիներնի Գործկոմը չինական կուսակցության հատուկ ուշադրությունն է հրավիրում այն բանի վրա, վոր հենց ընթացիկ մոմենտում, ավելի քան յերբեք, անհրաժեշտ է ամենասերտ կապ պահպանել հեղափոխական կառավարության և ժողովրդական մասսաների միջև: Միայն այս ամենասերտ կապի հիման վրա, վորն առաջին հերթին իրագործվելու յե գոմինդանի միջոցով, միայն մասսաների վրա հենվելու վճռական կուրս վերցնելով հնարավոր կլինի ավելի և ավելի ամրացնել հեղափոխական կառավարության հեղինակությունը և նրա, վորպես հեղափոխության կազմակերպիչ կենտրոնի, դերը:

Չինկոմկուսակցության անելիքը պիտի լինի՝ ապահովել Ուխանի կառավարական իշխանության այսպիսի կուրսը: Առանց այս խնդիրն իրագործելու, առանց մասսայական շարժումը ծավալելու, առանց ագրարային հեղափոխության և բանվոր դասակարգի դրությունը վճռականապես բարելավելու, առանց գոմինդանն աշխատավոր մասսաների իսկական ամենալայն կազմակերպություն դարձնելու, առանց արհմիությունների հետագա ամրացման ու կոմկուսակցության աճեցման, առանց ամենասերտ կապ հաստատելու Ուխանի կառավարության ու մասսաների միջև՝ հնարավոր չէ հեղափոխությունը հաղթական վախճանի հասցնել:

Կոմիներնի Գործկոմն այն կարծիքին է, վոր միայն այսպիսի տակտիկան է արդարացնում կոմունիստների մասնակցությունը կառավարության մեջ: Առանց սրան այդ մասնակցությունը կընդուներ վերնախավային կոմբինացիաների ու պոլիտիկական հաշիվների բնույթ, վորոնց պետք է դեն նետի ինքը՝ կյանքը, դասակարգային մեծ պայքարի ընթացքը: Կուսակցության աշխատանքի և մասսաների շրջանում կատարվող աշխատանքի միջև շարունակ կապ պահպանելը չինական կոմկուսակցության անբասիր պարտականությունն է:

Կոմիտեերնի Գործկոմն այն կարծիքին է, վերջ ներկա պայ-
մաններում հեղափոխականորեն նպատակահարմար է գոմինդանը
լայն դեմոկրատիզացիայի յենթարկել նրա միջոցով հնարավորին
չափ ավելի լայն մասսաներ ընդգրկել և ամենաարագ կերպով
զարգացնել բանվորական ու գյուղացիական մասսայական կազ-
մակերպությունների բոլոր տեսակները: Ձի կարելի անտեսել
չինական հեղափոխության զարգացման սպեցիֆիկ առանձնա-
հատկությունը, մի զարգացում, վորն ստեղծել է այնպիսի
յուրահատուկ մի կազմակերպություն, ինչպես հեղափոխա-
կան գոմինդանն է, վորից անմիջականորեն ընտրվում է
կառավարության կազմը: Մասսաների լայն ընդգրկումը գո-
մինդանի կողմից, նրա ղեկավար մարմինների ընտրությու-
նը նույն այդ մասսաների կողմից և այդ ընտրական կազ-
մակերպությամբ ազդային հեղափոխական կառավարություն
կազմելը,—ահա աշխատավոր մասսաների և հեղափոխական
իշխանության միջև գոյություն ունեցող այն հատուկ ձևը,
վորը համապատասխանում է չինական հեղափոխության ներ-
կա շրջանին: Ուխանի տերրիտորիայի տարբեր նահանգներում
տիրող խայտաբղետ դրությունն սկզբնական շրջանում պայմանա-
վորում է տեղական իշխանության կազմակերպման բազմատեսակ
ձևեր («գյուղացիական կոմիտեների» ու «միությունների» իշ-
խանությունը գյուղում, գոմինդանի կոմիտեների իշխանությու-
նը և այլն): Տեղական իշխանության կազմակերպելու հարցում
կոմունիստների հիմնական անելիքը պիտի լինի նրա կազմելուն ու
աշխատանքներին մասնակից անել աշխատավորության ստվարա-
գույն խավերը, հարյուր-հազարավոր ու միլիոնավոր բանվորների
ու գյուղացիների:

Կոմիտեերնի Գործկոմը ներկա մոմենտում աննպատակահար-
մար է համարում բանվորական ու գյուղացիական պատգամա-
վորների խորհուրդների լողուններ, վորը վոչ այլ ինչ է (Ուխանի
տերրիտորիայում), յեթե վոչ խորհրդային իշխանություն հռչա-
կելու լողունը:

Չինական հեղափոխության զարգացման տվյալ շրջանում
բանվորների, գյուղացիների, և զինվորների պատգամավորների
խորհուրդների անմիջական կազմակերպման լողուններ կնշանակե-
ր անխուսափելի յերկիշխանություն, Ուխանի կառավարությունը
տապալելու կուրս, այդ կնշանակեք մասսաներին ու պետական
իշխանությունը կազմակերպելու գոմինդանական ձևի վրայով

ցատկել և անմիջապէս ձեռնարկել խորհրդային իշխանության կազմակերպման Չինաստանում, վորպէս պրոլետարական դիկտատուրայի պետական ձև:

Հեղափոխության հետագա զարգացման դեպքում, վորը պետք է ազդանշանի դեմոկրատական հեղափոխությունը սոցիալիստականի վերափոխելու սկիզբը, անհրաժեշտ է լինելու հիմնել բանվորների, գյուղացիների ու գինվորների պատգամավորների խորհուրդներ, և խորհուրդներ կազմակերպելու լոզունգը կդառնա կուսակցության կենտրոնական լոզունգը:

Կոմիներնի Գործկոմը նմանապէս այն տեսակետին է, վոր ներկայումս հատկապէս սուր կերպով է դրվում բանակի վերակազմակերպման, բացարձակապէս հավատարիմ հեղափոխական զորամասեր կազմակերպելու բանվորների և բանվորական ու գյուղացիական կազմակերպությունների կապի, բանակի բնակազմի ապահովման, բանակը վարձկան լինելուց հեղափոխության կանոնավոր բանակ դարձնելու և մի շարք այլ հարցեր: Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել հեղափոխական գյուղացիներից ու բանվորներից բացարձակապէս հուսալի զորամասեր կազմելու, կոմունիստներին և կայուն ձախ գոմինդանականներին բանակի մեջ մտցնելու, բանակը հեղափոխական տարրերից մաքրելու և բանվորական գվարդիա ստեղծելու վրա:

7. ՆԵՐԿԱ ՄՈՄԵՆՏՈՒՄ ՁԻՆԱՍՏԱՆՈՒՄ ՏԱՐՎՈՂ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

Չինական կոմկուսակցությունը կանգնած է աննախընթաց բարդ խնդիրների առաջ: Այդ խնդիրներն են, իմպերիալիստների ու միլիտարիստների դեմ մղվող պայքարի և ազդային բուրժուազիայի դեմ մղվող պայքարի միախառնումը, իմպերիալիստների խոշոր գինված ուժերի ներկայությունը Չինաստանի տորրիտորիայում, Չինաստանի փաստական բաժանումը յերեք գոտու, թե՛ տնտեսական և թե՛ քաղաքական հարաբերությունների ծայր աստիճանի խայտառղետությունը, իմպերիալիստների ընդհանուր Ֆրոնտը և ներքին հակամարտություններն այդ Ֆրոնտում, հեղափոխության միանգամայն անհավասարաչափ հասունացումը Չինաստանի զանազան մասերում, հեղափոխության հատուկ «ռազմական» ձևերը և բանակների հակամարտությունը, ամենաձախ գոմինդանական Ֆրոնտի ներքին հակամարտությունները և

այլն, և՛ այլն, — այս բոլորը միանգամայն բացառիկ դժվարություններ են ստեղծում հեղափոխության զարգացման համար:

Կոմիտեերն Փորձկոմն այն տեսակետին է, Վոր այս դժվարությունների պայմաններում Ուխանի կառավարության համար սկզբունքորեն միանգամայն թույլատրելի չէ ոտարերկրյա իմպերիալիզմի վերաբերմամբ ճկուն ու մանյովրային տակտիկա վարելը:

Կոմիտեերն Փորձկոմը ժխտում է այն տեսակետը, ըստ Վորի փոփոխական ու մանյովրային «Բրեստի» տակտիկան սկզբունքորեն բացասվում է իշխանության վոչ-պրոլետարական բնույթի պատճառարանությամբ: Կոմիտեերն Փորձկոմն այն կարծիքին է, Վոր նման տեսակետը հիմնված է ամենակոպիտ թեորիտիկական ու քաղաքական սխալներէ վրա:

Պրոլետարական հեղափոխության հասունացման պայմաններում, յերբ պրոլետարական կուսակցությունը հեղափոխական ռադիկալիզմի դրության մեջ է գտնվում կառավարության վերաբերմամբ, նա ըստ ընդունված կանոնի, դեմ է այդ կառավարության կողմից մղվող պատերազմին, նա կողմնակից է այդ կառավարության տապալման, նա ամենեին, կողմնակից չէ, Վոր այդ կառավարության անելիքները դյուրացվեն:

Ներկայիս չինական պայմաններում չինկոմկուսակցությունը կողմնակից է այն պատերազմին, Վոր մղում է Ուխանը. նա պատասխանատու չէ Ուխանի կառավարության համար, Վորի կառավարության կազմի մեջ է մտնում նա անմիջականորեն. նա կողմնակից է, Վոր նրա անելիքներն ամեն կերպ դյուրացվեն: Այս պատճառով կոմկուսակցությունը «սկզբունքորեն» վոչինչ չի կարող ունենալ ճկուն ու դյուրաթեք տակտիկայի դեմ: Կառավարության քաղաքականության համար պատասխանատու կոմկուսակցությունն ուղղակի հիմարություն գործած կլիներ, յեթե նա ամեն տեսակի պայմաններում ժխտեր կոմպրոմիսի տակտիկան, այսինքն անպայման կռիվ մղել բոլոր Ֆրոնտներում միանգամից:

Այս պատճառով Կոմիտեերն Փորձկոմը կարծում է, Վոր այս հարցը պետք է լուծվի միանգամայն կոնկրետ կերպով և կապակցելով այն միանգամայն կոնկրետ պայմանների հետ, Վորոնց նախատեսումը նախորոք անկարելի չէ, Վորովհետև չի կարելի նախորոք ճշտությամբ նախատեսել և բացարձակ ճշտությամբ հաշվի առնել պայքարող կողմերի ուժերի փոխհարաբերությունը:

ձկունն ու դյուրաթեք տակտիկայի թույլատրումը պետք է տարածվի և կառավարութեան տնտեսական քաղաքականութեան վրա, վորի համար միազնամայն պարտավորիչ չէ բոլոր ոտարեկրյա ձեռնարկութեանները անմիջական բռնագործումը: Այտեղ ևս ճիշտ այդպես սկզբունքորեն թույլատրելի չեն կոմպրոմիսներ:

Մյուս կողմից, կոմիտեներն Գործկոմն այն կարծիքին է, վոր ազգային ու ոտարեկրյա բուրժուազիայի կողմից մի շարք ձեռնարկութեանները (արդյունաբերական, առևտրական, վարկային) վերաբերմամբ հայտաարարված պարտաժը, վորի հետևանքը յեղավ դործադրկութեանը և վորը կիրառվում էր տնտեսական քառն ու տնտեսական քայքայում առաջացնելու նպատակով. կարող է կառավարութեանն այդ տեսակի ձեռնարկութեանները բռնագործման ու ազգայնացման (պետականացման) անհրաժեշտութեան առաջ դնել: Ազգային հեղափոխական կառավարութեանը չի կարող հանդուրժել, վոր հեղափոխութեան թշնամիներն ավերեն տնտեսական կյանքը և այդ դեպքում նա պետք է վճռական միջոցներով, իր մարմինների միջոցով և պրոլետարական կազմակերպութեանները սգնութեամբ, ձեռնարկութեանները կառավարման դործն իր ձեռքն առնի:

Թե յերբ պետք է կոմպրոմիսսի դալ և յերբ հարձակման անցնել,—այս կախված է կոնկրետ պայմաններից: Մասնավորապես կոմիտեներն Գործկոմն այն տեսակետին է, վոր միանգամայն հիմարութեան էր այն տակտիկան, վոր Չան-Կայ-Շիի կողմից Շանհայում կատարված հեղաշրջման հետևանքով առաջարկեցին մի քանի ընկերներ: Այս տակտիկան ասում էր, վոր նախորոք ապստամբութեան բարձրացնենք իմպերիալիստների ու Չան-Կայ-Շիի դեմ կամ լայն ճակատով նրանց վճռական մարտ տանք: Ապստամբութեան տակտիկան թելադրում է, վոր ապստամբութեան սկսողն առաջ խաղա: Ապստամբութեան կարելի չէ սկսել միայն այն ժամանակ, յերբ հաջողութեան վորոշ շանս կա: Ինչ կերպ ել լինի ապստամբվելու տակտիկան լենինյան տակտիկա չէ: Յեթե Շանհայի բանվորները լայն ճակատով զինված հարձակման դիմեցին, նրանք կկոտորվեյին Չան-Կայ-Շիի ու իմպերիալիստների բլոկի կողմից, և Չինաստանի պրոլետարիատի լավազույն մասը Ֆիզիքապես կբնաջնջվեր մի այնպիսի կովում, վորտեղ հաղթելու վոր մի շանս չկար:

Ներկայումս Չինաստանում տիրող բնդհանուր կացութեանը

կոմկուսակցությունից պահանջում է հետևյալ ռազմաքաղաքական ստրատեգիան. կոմկուսակցությունը պետք է ոժանդակություն ցույց տա հյուսիսում ծավալվող ռազմական գործողություններին, միաժամանակ պարտադիր կերպով խորացնելով ագրարային հեղափոխությունն Ուխանի գրաված ամբողջ տերրիտորիայում և ուժեղացրած աշխատանք կատարի Չան-կայ-Շիի թիկունքն ու բանակները քայքայելու, նպատակ ունենալով նրա լիկվիդացիան, վորն, իհարկե, ամենևին չի բացասում նրա դեմ հարմար մոմենտին ուղղակի ռազմական գործողությունների դիմելը: Մասսաների վրա հույս դնելն իրեն զգալ կտա և քաղաքացիական սլատերազմում: Ճիշտ քաղաքականություն վարելու դեպքում հեղափոխության հաղթանակն ապահովված կլինի:

Կոմկուսակցությունն իրեն նպատակ պիտի դնի բանվորների, գյուղացիների և մանր բուրժուազիայի ճակատի ամեն կերպ ամրացումը: Բոլոր ուժերով դարգացնելով ագրարային շարժումը, անհրաժեշտ է միևնույն ժամանակ մանր բուրժուազիային յերաշխափորել նրա աշխատանքային սեփականության անձեռնմխելիությունը, ոժանդակելով նրան վաշխառուական կապիտալի և այլ կապանքների դեմ մղվող պայքարում: Այսպիսով ամրացնելով բանվոր դասակարգի հեգեմոնիայի տակ ընթացող իսկական հեղափոխական ուժերի բլոկը, բոլոր միջոցներով այդ դասակարգային ուժերին Ուխանի տերրիտորիայի հզոր կազմակերպություններում միաձուլելով, կոմկուսակցությունը պետք է մասսաների շարժման գլուխ անցած լինի և հեղափոխության ուժերի կողմից գրավված տերրիտորիաներում:

Տոկուն անլեզալ կազմակերպություններ ստեղծելը, սկսած կուսակցությունների կազմակերպումից և վերջացրած գյուղացիական միությունների կազմակերպություններով, գյուղացիական և բանվորական շարժումների կազմակերպումն ու ղեկավարությունը, մասսայական յելույթների կազմակերպումը, գինվորների շրջանում աշխատանք կատարելը, — բոլոր այս խնդիրները պետք է կուսակցության կարևորագույն խնդիրները լինեն:

8. ԿՈՄԻՆՏԵՐՆԻ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՅԵՎ ՉԻՆԱԿԱՆ

ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Յելնելով չինական հեղափոխության նշանակության ու դերի ընդհանուր գնահատականից, Կոմինտերնի Գործկոմն արձանագրում է, վոր —

1. Կոմիտեներն ի սեկցիաների մեծ մասը բավականաչափ չեն գիտակցել այս նշանակութիւնը և բավականաչափ ակտիվութիւն չեն հայտարարել չինական հեղափոխութեանն աջակցութիւն ցույց տալու գործում :

2. Նույնիսկ անբավարար ակտիվութիւն են հայտարարել այն կոմունիստները , վորոնք մտնում են «Հակաիմպերիալիստական յիգայի» կադմի մեջ :

Կոմիտեներն ի Գործկոմը միանգամայն անհրաժեշտ և համա-
քում այս սխալների ամենատարագ շտկումը , վորի համար իր բո-
լոր սեկցիաներին առաջարկում և մի շարք վճռական միջոցներ
ձեռք առնել այս ուղղութեամբ , այն է .—

ա) ագիտացիա ու պրոպագանդա մղել մամուլում .

բ) աշխատանք կատարել արհմիութիւններում և այլ մաս-
սայական բանվորական կադմակերպութիւններում .

գ) աշխատանք կատարել համասլատասխան յերկրների գա-
ղութներում և մետրապոլիաներից կախումն ունեցող
յերկրներում .

դ) աշխատանք կատարել Չինաստան ուղարկվող ղինվորնե-
րի շրջանում :

Կոմիտեներն ի Գործկոմն ուշադրութիւն և հրավիրում ամե-
նալուրջ պատրաստութիւն տեսնելու անհրաժեշտութեան վրա ,
վորպէսզի վոչ թէ խոսքով , այլ գործով կարելի լինի արգելք հան-
դիսանալ Չինաստան գորք ու ղինամթերք ուղարկելուն : Կոմի-
տեներն ի Գործկոմն իր սեկցիաների վրա պարտականութիւն և
դնում ամենայեռանդուն աշխատանք կատարել իմպերիալիստա-
կան գորքերի շրջանում և նրանց հրահրել ուղղակի անցնելու չին
Ժողովրդի հեղափոխական գորքերի կողմը :

Կոմիտեներն ի Գործկոմն առանձին սեկցիաների կենտկոմներին
հանձնարարում և մի շարք կոնկրետ միջոցներ մշակել վերոհիշյալ
ուղղութեամբ :

Կոմիտեներն ի Գործկոմը յեղբայրական վողջույն և ուղարկում
իր չինական սեկցիային և ամենաջերմ աջակցութիւնը խոստա-
նում նրան՝ նրա կողմից մղվող խոշոր հեղափոխական պայքա-
րում :

ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1. ԿԻԳԿ-ի պլենումը հաստատում է ԿԻԳԿ-ի նախագահության՝ ընդհանուր գործադուլի վերաբերյալ հունիսյան թեզերը, վորոնց մեջ անգլիական բանվորների 1926 թ. մայիսյան հիշատակելի օրերին մղած պայքարը գնահատվում է վորպես մի շարժադարձ անգլիական բանվորական շարժման պատմության մեջ, ինչպես և ԿԻԳԿ-ի VIII ընդլայնած պլենումի բանաձևը Անգլիայում տիրող դրության մասին, վոր ստեղծվել է հանքագործների պարտությամբ: Ընդլայնած պլենումի նախագուշակությունը, թե հանքագործների պարտությունը ռեակցիայի համար ազդանրչան կհանդիսանա, արշավանք սկսելու թե՛ ներքին Ֆրոնտում և թե բրիտանական իմպերիալիզմի արտաքին քաղաքականության ասպարիզում—լիովին արդարացավ: Հանքագործների պարտությունից հետո բրիտանական իմպերիալիզմը վո՛չ միայն ուժեղացրեց հեղափոխական Չինաստանի դեմ ուղղած ռազմական ինտերվենցիան, այլև տենդորեն նոր պատերազմ է նախապատրաստում ԽՍՀՄ-ի դեմ, միևնույն ժամանակ հարձակում կազմակերպելով տրեդյունիոնների վրա՝ Մեծ Բրիտանիայի բանվոր դասակարգին այդ հիմնական կազմակերպությունները թուլացնելու և կործանելու համար:

2. Արդյունագործության ու առևտրի աննշան և ժամանակավոր բարվոքումը, վոր տեղի ունեցավ լոկաուտը վերջանալուց հետո, հետևանք էր հանքագործների հերոսական պայքարից առւժած արդյունագործության վերականգնման: Այդ աշխուժացումն արդեն մոտենում է իր վախճանին, թողնելով յերկրի արդյունագործության հիմնական ճյուղերը առանց իսկական վերածրնունդի հեռանկարի: Բուրժուազիան հուսահատ ջանքեր է գործում այդ դրությունից դուրս գալու համար և այդ նպատակով նա նոր հարձակում է պատրաստում բանվոր դասակարգի վրա, ուժեղացնում է ռազմական ինտերվենցիան Չինաստանի դեմ և ԽՍՀՄ-ի դեմ պատերազմ է նախապատրաստում:

3. Բրիտանական կառավարութեան մի շարք պրովոկացիաները Խորհրդային Միութեան դեմ, մանավանդ ԽՍՀՄ-ի առևտրական ներկայացուցչութեան վրա գործված հարձակումը և Խորհրդային Միութեան հետ առևտրական ու դիվանագիտական հարաբերութեան ներքին խզումը մի կողմից, և՛ Ռուսաստանին սահմանամերձ պետութիւններին ԽՍՀՄ-ի դեմ հարձակման գրգռելը, Խորհուրդների դեմ սրբազան դաշնակցութեան կազմակերպելու տենդային աշխատանքը, մյուս կողմից—մերկացնում են բրիտանական իմպերիալիզմի իսկական դերը, իմպերիալիզմի, վոր ներկայումս հիմնական վտանգ է հանդիսանում ընդհանուր խաղաղութեան համար։ Այդ վտանգը մեծանում է շնորհիվ այն հանգամանքի, վոր անդլիական իմպերիալիզմի կռիվը Չինաստանի դեմ, ինչպես և համաշխարհային պատերազմի գաղափարական և տեխնիքական նախապատրաստումը բրիտանական իմպերիալիզմի կողմից՝ բացահայտ աջակցութիւն և գտնում բանվորական կուսակցութեան լիդերների կողմից, ինչպիսիք են՝ Սնոուդենը և Մակդոնալդը, և Գլխավոր Խորհրդի լիդերների կողմից, ինչպես Թոմասն և, վորոնք իրենց հերթին հենվում են այսպես կոչված պացիֆիստների և «ձախակողմյանների» վրա, վորոնք բանվոր դասակարգի գլխին որոր էյին կարգում, առասպելաբանելով, թե կապիտալիստական մամուլի հսկայական կամպանիան ԽՍՀՄ-ի դեմ, ինչպես և Չինաստանի դեմ կիրառված ռազմական ինտերվենցիան պնդաձայատների մի փոքր խմբակի գործն և միայն և խաղաղութեանը վտանգ չի սպառնում ամենեին։ Սակայն բրիտանական իմպերիալիզմի ամբողջ գործունեյութիւնը հաստատում է կոմինտերնի և Մեծ Բրիտանիայի կոմունիստական կուսակցութեան բռնած դիրքի ճշտութիւնը։ Նրանք նախադգուշացնում էյին թե Անգլիայի և թե վողջ աշխարհի բանվորութեանը, վոր բրիտանական իմպերիալիզմի ավանտյուրիստական ռազմական քաղաքականութիւնը նրա ակման շարունակվող պրոցեսի արդիւնքն է։

4. Մեծ Բրիտանիայի բյուջեն զգալի դեֆիցիտ է ցույց տալիս, վորի շնորհիվ, կառավարութիւնը, չհանդգնելով նոր հարկեր դնել իր կողմնակիցների վրա, մնացել է առանց վորեւէ միջոցի՝ Ֆինանսավորելու սոցիալիստական ռեֆորմները, վորոնք բիչ թե շատ բարվոքեցին բանվոր դասակարգի վիճակը։ Կառավարութիւնը ի վիճակի չէ հույսեր ներշնչել նաե իր մանր-բուրժուական կողմնակիցներին՝ հարկերի լուծի թեթեւացման կամ առևտրի վերածնունդի նկատմամբ, վոր այնպես վստահորեն

խոստանում էյին կառավարութեան ներկայացուցիչները վերջին
ընտրութեաններէ ժամանակ :

Վերջին ժամանակներս, ԽՍՀՄ-ի հետ հարաբերութեանները
խզվելու հետեւանքով, ամէլի ու ամէլի բարձրագոյն գանդատներ
են լսվում՝ հաճախ արդեւո՞ւնագործների և առևտրականների շըր-
ջաններից, թէ Բոլշևիկների կառավարութեանը հարված հարվածի
վրա յե հասցնում արդեւո՞ւնագործութեանն ու առևտրին : Գոր-
ծարար շրջանները ճիշտ են գնահատում ԽՍՀՄ-ի հետ տեղի ու-
նեցած խզումը, վորպէս շուկայի մի կորուստ, վոր ամէլի ևս
կուժեղացնի գեւորեստիան և գործադրկութեանը :

Կառավարութեանը վո՛չ միայն հրաժարվում է բանվոր դա-
սակարդին և մանր-բուրժուազիային վորեւէ արտոնութեաններ
տալուց, այլև ամէլի ու ամէլի յեռանդագին գրոհ է տալիս հասա-
րակական ողնութեան այն կաղմակերպութեանների վրա, վորոնք
նվաճված էյին իբրև հետեւանք բանվոր դասակարգի սլայքարի :
Աղքատախնամութեան որենքի բարենորոգումը նախատեսնող կա-
ռավարական որինագիծը և Բլենսրուրդի գեկուցումը գործադր-
կութեանից ապահովագրելու մասին ցուցանշական են կառավա-
րող դասակարգի քաղաքականութեան համար, մի դասակարգի,
վորը դուր ձգտում է ստաբիլիզացիայի յենթարկի բրիտանական
կապիտալիզմը՝ ի հաշիվ սրուլեւարիատի և մանր-բուրժուական
տարրերի :

5. Ընդհանուր գործադուլն ու ածխահատների լոկաուտը դար-
թեցրել են հարցուր հազարավոր բանվորների դիտակցութեանը և
խախտել են նրանց վստահութեանը կապիտալիզմի քաղաքական
կուսակցութեանների հանդեպ : Կառավարութեան անընդունակու-
թեանը՝ բավարարելու մանր-բուրժուազիայի կարիքներին--
դրկում է նրան իր բաղմաթիվ նախկին կողմնակիցներից նույնիսկ
ազդարնակութեան այն խավերի մեջ, վորոնք ապահովել էյին նրա
հաղթանակը 1924 թ. վերջին ընտրութեանների ժամանակ :

Ազդարնակութեան լայն մասսաների տրամադրութեանները
արտահայտութեան են գտնում վերընտրութեանների ժամանակ
կառավարութեան ստացած քվեների մշտական նվազման մեջ :
Յերկրում մղվող դասակարգային կռիւ սրվելը դրկում է իրերաւ
կուսակցութեանը բանվորների վրա իր ունեցած ազդեցութեանը
վերականգնելու հնարավորութեանից և կասեցնելու բանվորական
մասսաներին բանվորական կուսակցութեան շարքերը մտնելու
ձգտումը : Միևնույն ժամանակ, հնարավոր է, վոր հետեւյալ ընտ-
րութեանների ժամանակ իրերաւ կուսակցութեանը հաջողվի ա-

Ջակցություն գտնել մանր-բուրժուազիայի մի մասի կողմից, վորն ավելի ու ավելի յե հիասթափովում պահպանողական կուսակցության մեջ: Նույնիսկ պարլամենտական դեմոկրատիայի տեսակետից, Անգլիայի աշխարհայազան պահպանողական կառավարությունը ներկայացնում է ընտրողների մի յերրորդից վո՛չ ավելին: Իսկ այդ կառավարության քաղաքականությունը քանի զնում ավելի բացարձակ Ֆաշիզմի կերպարանք է ստանում:

6. Անգլիայի դասակարգային պայքարի սրվելը արտահայտվում է բանվորական շարժման դիֆերենցիացիայով: Բանվորական շարժման մեջ են գրավվում բանվորական նորանոր խմբեր, իսկ բանվորական մասսաներն ակնհայտորեն դեպի ձախ են ձգտում, այն ինչ բանվորական կուսակցության և պրոֆմիությունների դեկավարները բացահայտորեն տիրապետող դասակարգին մերձանալու ուղի յեն բռնում արտաքին և ներքին քաղաքականության բոլոր հրատապ հարցերի ասպարիզում, այն է՝ հանքագործների պայքարը և պրոֆմիութենական նոր օրենքը, ինտերվենցիան Չինաստանում և ԽՍՀՄ-ի դեմ պատերազմի պատրաստությունը, արդյունադործության մեջ խաղաղություն հաստատելու հարցը: ամերիկանիզացիան:

7. Պրոֆմիությունների գործկոմների հունվարի կոնֆերենցիան, վոր հաստատել էր գլխավոր խորհրդի գեկուցումը ընդհանուր գործադուլի մասին և դրանով իսկ դատապարտել էր հանքագործների հերոսական պայքարը, առաջին ընդհանուր ցույցն էր պրոֆմիութենական բյուրոկրատիայի կոնսոլիդացիայի, վորի համար պլատֆորմ է հանդիսացել աշխատավարձի կրճատման անհրաժեշտության ճանաչումը՝ հոգուտ անգլիական արդյունադործության ստարիլիզացիայի:

8. Հունվարի կոնֆերենցիան պետք է համարել մի մասն այն ընդհանուր կամպանիայի, վոր մղում են պրոֆմիությունների և բանվորական կուսակցության լիգերները ընդհանուր գործադուլի՝ վորպես դասակարգային պայքարի մի զենքի դեմ և «արդյունադործության մեջ խաղաղություն հաստատելու» համար: Այդ կամպանիան հող պատրաստեց պրոֆմիությունների վերաբերյալ նոր օրենքի համար, վորի նպատակն է օրենսդրական կարգով կենսագործել այն քաղաքականությունը, վոր օեֆորմիստներն առաջարկում էին կիրառել կամավոր կերպով: Արդյունադործության մեջ խաղաղություն հաստատելու պրոպագանդը, վոր մղում են պրոֆմիութենական բյուրոկրատները կապիտալի կատարած արշավանքի ժամանակ, մերկացնում է պրոֆմիութենա-

կան բյուրոկրատիայի և տիրապետող դասակարգերի բաղադրանքային նույնությունը: Այդ պրոպագանդը բանվոր դասակարգի համար արդեւք հանդիսացավ պատրաստվելու իր կազմակերպությունների պաշտպանության համար և արագացրեց պրոֆմիութենական նոր որենքի նախապատրաստումը:

9. Պրոֆմիութենական բյուրոկրատները և բանվորական կուսակցության լիդերները մի կողմից կոչ են անում հաշտություն կնքելու կապիտալիստների հետ, իսկ մյուս կողմից կատաղի կռիվ են մղում կոմունիստ բանվորների, փոքրամասնության շարժման կողմնակիցների և բանվորական կուսակցության ձախթևի դեմ: Բանվորական կուսակցության տեղական կազմակերպությունները փտարվում են այդ կուսակցության կազմից, յերբ նրանք հրաժարվում են կենսագործել Լիվերպուլի համագումարի՝ կոմունիստների դեմ ուղղված վորոշումները: Պրոֆմիութենական բյուրոկրատները աշխատակցում են բանվորական կուսակցության ռեֆորմիստ առաջնորդների հետ, ժխտելով պրոֆմիության անդամ կոմունիստների իրավունքը բանվորական կուսակցության մեջ մնալու. իսկ պրոֆմիություններից մեկի գործկոմը կոմունիստներին և փոքրամասնության շարժման անդամներին արգելել է իրենց թեկնածությունը դնելու պրոֆմիություններում պաշտոններ ստանձնելու համար:

10. Անկախ բանվորական կուսակցությունը փորձում է տարբերվել աջ թևի ռեֆորմիստներից ձախ Փրադեռլոգիայով: Իսկ իրականում նա աջակցություն է ցույց տալիս ակնհայտ ռեֆորմիստներին՝ բոլոր գործնական հարցերի մեջ: Անկախ բանվորական կուսակցության «սոցիալիզմը մեր ժամանակներում» լոզունգը ստեղծված է այն ժամանակի համար, յերբ բանվորական կուսակցությունը իշխանության գլուխ կանցնի: Այդ լոզունգը վո՛չ մի առնչություն չունի բանվորների առօրյա պայքարի հետ: Նա անկախ բանվորական կուսակցությանը հնարավորություն է տալիս միայն ձախ Փրադներ արտասանելու և միևնույն ժամանակ ակտիվ աջակցություն ցույց տալու աջ թևին՝ վերջինիս կոմունիստների ու ձախ թևի կողմնակիցների դեմ մղած կռիվում: Անկախ բանվորական կուսակցության վերջին կոնֆերենցիայի այն վորոշումը, վոր Մակդոնալդին չը մտցնել բանվորական կուսակցության կոնֆերենցիայի պատգամավորության, կազմի մեջ, մակդոնալդիզմի հետ քաղաքական խզում չի նշանակում (վոր, ի միջի այլոց, հաստատվում է կոնֆերենցիայի նախագահի հայտարարությամբ, թե կուսակցությունը աջակցություն ցույց

կտա Մակդոնայիին, վորպես բանվորական կուսակցութեան լի-
դերի), այլ անկախ բանվորական կուսակցութեան լիդերներին
կողմից մի փորձ և միայն հանգստացնելու կուսակցութեան պրո-
լետարական տարրերին: Դասակարգային պայքարի շարունակ
սրագացող զարգացումը և բանվորական շարժման ներսում տեղի
ունեցող դիֆերենցիացիան այն հետևանքն են ունենում, վոր
անկախ բանվորական կուսակցութեան համար ավելի ու ավելի
դժվար և դառում կոմունիստների ու ռեֆորմիստների միջև իր
վրա վերցրած միջանկյալ դերը կատարել: Փորձը ցույց և տա-
լիս, վոր նա անկարող և պրոֆմիություններում և բանվորական
կուսակցութեան մեջ պատասխանատու պաշտոն վարող իր անդամ-
ների իսկ համաձայնությունը ստանալ այն ձախ լողունդների
համար, վորոնք նա ժամանակ առ ժամանակ առաջադրում և:

Բանվորական կուսակցութեան և պրոֆմիությունների մեջ
պատասխանատու պաշտոններ վարող անկախ բանվորական կու-
սակցութեան անդամները բացահայտ մակդոնայիզմը գերադա-
սում են ձախ ֆրազներով սքողված մակդոնայիզմից:

Անգլիայի դասակարգային պայքարի վողջ զարգացումը հա-
մոզեցուցիչ կերպով ցույց և տալիս, վոր թեև անկախ բանվորա-
կան կուսակցությունը ձախ լողունդներ և առաջադրում, նա
գործնականում իր գործունեությունն առաջ և տանում աջ թևի
վողով, միանալով պրոֆմիութենական բյուրոկրատներին և բան-
վորական կուսակցութեան ռեֆորմիստական լիդերներին հետ՝ դա-
սակարգային պայքարի բոլոր կարևորագույն հարցերում, այն և՛
ընդհանուր գործադուլի և հանքագործների պարտության պա-
տասխանատվության հարցը, Չինաստանում տեղի ունեցած ին-
տերվենցիայի դեմ կամպանիա մղելու հարցը, կոմունիստների
դեմ ուղղված պայքարը և այլն: Դասակարգային պայքարի սրվելը
անկախ բանվորական կուսակցութեան համար ավելի ու ավելի
դժվար և դարձնում այն անկախ դերի պահպանումը, վոր նա
առաջ կատարում էր բանվորական շարժման մեջ և ավելի ու ավե-
լի մտցնում և նրան ռեֆորմիստական բյուրոկրատիայի ձախ լա-
կեյի դերի մեջ: Անկախ բանվորական կուսակցութեան պացիֆիս-
տական ձախ ֆրազները, ինչպես և ձախ ֆրազները պրոֆմիութե-
նական այնպիսի «ձախ» լիդերներին, ինչպես Հիքսը, Պերսելը և
նմաններն են, դեռ մնում են վորպես մոլորություն մի աղբյուր այն
բանվորների համար, վորոնք զղվանք են զգում Թոմասի իմպե-
րիալիստական ֆրազեոլոգիայի հանդեպ, սակայն չեն բմբռնում,
վոր իմպերիալիզմի դեմ իրական պայքարով չչաղկապված ձախ

Ֆրազները միմիայն խոչընդոտ են հանդիսանում պատերազմի դեմ խակական պայքար մղելու: Կոմունիստական կուսակցությունը պետք է մերկացնի ձախ ֆրազների և ռեֆորմիստական դործողությունների այդ համադրությունը, ապացուցելով բանվորներին՝ նրանց առորյա փորձի հիման վրա, թե կոմունիստական կուսակցության և բանվորական բյուրոկրատիայի միջև կանդնած բնական բանվորական կուսակցությունը, Մեծ Բրիտանիայում մղվող դասակարգային պայքարի ներկա աստիճանում, չի կարող իրոք անկախ դեր կատարել և նա, ըստ եյության, ռեֆորմիստական բյուրոկրատիայի դործակատարի ֆունկցիաներ և կատարում:

11. Չինական հեղափոխության զարգացումը, վորը ստանում է Մեծ Բրիտանիայի իմպերիալիստական հզորության հիմքերին վո՛չ միայն Չինաստանում, այլև Հնդկաստանում և այլ պաղութներում, վորը տեղիք տվեց բրիտանական իմպերիալիզմի ազդման ինտերվենցիային, մերկացրեց ռեֆորմիստական լիզերներին՝ վորպես բրիտանական կառավարության դաշնակիցներին: Ռեֆորմիստները հավանություն տվին ոժանդակ ուժեր ուղարկվելուն, հրաժարվեցին դորքերը հետ կանչելուց, դեմ էյին «Չեռներդ հեռու Չինաստանից» կոմիտեներ ստեղծելուն և հնարավոր բոլոր միջոցներն էյին գործադրում կաշկանդելու բանվորական մասսայական այն շարժումը, վոր ուղղված էր Չինաստանի դեմ սարքված ինտերվենցիայի դեմ: Յերբ բանվոր դասակարգի գործադրած ճնշումը վեր ի վերջո ստիպեց նրանց, վոր դորքերին Չինաստանից հետ քաշելու պահանջը դնեն, նրանք ողտվեցին առաջին իսկ հնարավորությունից՝ հետաձգելու այդ պահանջը անորոշ ժամանակով: Ռեֆորմիստական լիզերները Չեմբերլենի ջրաղացին ջուր ածեցին, «բանակցությունների» պահանջն առաջադրելով, փոխանակ պահանջելու և հետապնդելու, վոր բոլոր դորքերն ու ռազմականները լիակատար եվակուացիայի յենթարկվեն: Բանակցություններ վարելու «պահանջն» առաջադրելով, նրանք նպատակ ունեյին պաշտպանել իմպերիալիստների այն պնդումները, թե բրիտանական իմպերիալիզմը Չինաստանում վորոշ իրավունքներ ունի, վորոնք պետք է սակարգության առարկա լինեն: Նրանք թաղցրին այն փաստը, վոր բրիտանական իմպերիալիստները գտնվում են Չինաստանում՝ վորպես հետևանք բոնի ուժով այդ յերկիրը իրենց ներխուժելուն, և վոր անգլիական բանվորների առաջ դրված էր վո՛չ թե այն հարցը, թե պետք է բրիտանական կառավարությանը ստիպել բանակցություններ վա-

բելու, այլ Չինաստանից զորքերը հետ քաշելու հարցը: Անկախ բանվորական կուսակցությունը և բանվորական կուսակցության ու պրոֆմիությունների պացիֆիստական այլ խմբավորումները, խոսքով զորքերի եվակուացիան պահանջելով, վո՛չ մի քայլ չարեցին այդ պահանջն իրականացնելու համար: Նրանք հրաժարվում էին կոմունիստների հետ միասնական ֆրոնտ կազմելուց՝ ինտերվենցիայի դեմ պայքարելու համար և պացիֆիստական իլյուզաներ էին սփռում, թե հնարավոր և պայքար մղել զինվորական ծառայությունից, զինագործարաններում աշխատելուց և դեմքեր փոխադրելուց անհատապես հրաժարվելով:

12. Մեծ Բրիտանիայի կոմունիստական կուսակցությունը յեռանդուն պայքար և մղել բանվորական կուսակցության իմպերիալիստական քաղաքականության և անկախ բանվորական կուսակցության տարածած պացիֆիստական սոփեստությունների դեմ: Մի շարք լողունդներ, ինչպես՝ «Ողնեցեք Չինաստանին՝ հաղթահարելու Բոլդվինին», «Բրիտանական իմպերիալիզմի պարտությունը Բրիտանիայի բանվոր դասակարգի հաղթանակն է», «Եվակուացիայի յենթարկեցեք բոլոր զորքերն ու ռազմանավերը Չինաստանից»—ճշտորեն շաղկապում էին չինական հեղափոխության պաշտպանությունը բրիտանական բանվորների պայքարի հետ, վոր ուղղված է Բոլդվինի կառավարության դեմ: Կուսակցությանը հաջողվեց բաղձաթիվ «Ձեռներդ հեռու Չինաստանից» կոմիտեներ ստեղծել, զորքերի մեջ թուլցիկներ տարածել և նավահանգստներում յեռանդուն կամպանիա մղել:

13. Մի բեկում մենք տեսնում ենք բրիտանական իմպերիալիզմի անընդունակությունը՝ լուծելու իր առաջ դրված խնդիրները և այդպիսով դադարեցնել իր անկումը, յեթե չհաշվենք այն մասնակի «հաջողությունները», վորոնք նա ձեռք և բերել Մեծ Բրիտանիայի բանվորների աշխատավարձի և նրանց աշխատանքի պայմանների վրա անմիջական հարձակումներ գործելով և դադութային ժողովուրդների շահագործումն ուժեղացնելով, իսկ մյուս բեկում մենք տեսնում ենք ԽՍՀՄ-ի դրության անընդհատ բարվոքումն ու ուժեղացումը: Այդ կոնարատը խորացնում է բրիտանական իմպերիալիզմի թշնամանքը ԽՍՀՄ-ի դեմ, մի թրչնամանք, վոր սնվում է անդլիական իմպերիալիզմի յերկյուղով՝ հանդես Մեծ Բրիտանիայի բանվորների հեղափոխության աճումի և դադութային ժողովուրդների, մանավանդ Չինաստանի ապստամբությունների հետդհետե աճող ալիքների: Այդ թշնամությունն ուժեղացավ մանավանդ այն իրական ոժանդակության

հետեանքով, վոր խորհրդային բանվորները ցույց տվին բրիտանական հանքագործներին և այն ակտիվ համակրության շնորհիվ, վոր ԽՍՀՄ հայտարարեց չինական հեղափոխության հանդեպ: Այդ թշնամությունը արտահայտվեց ԽՍՀՄ-ի վրա գործված մի շարք հարձակումներով, վորոնք վերացան ԽՍՀՄ-ի հանդեպ Անգլիայի ունեցած պայմանագրական բոլոր պարտականությունների խախտումով և դիվանագիտական հարաբերությունների խզումով: Բանվորական կուսակցության լիդերներն ըստ ելության պաշտպանում էին ԽՍՀՄ-ի նկատմամբ Բոլշևիկների կառավարության վարած ամբողջ քաղաքականությունը, սահմանափակվելով միայն պահպանողական կառավարության մեթոդներն ու յեղանակները քննադատելով:

14. Այն ժամանակամիջոցում, վոր անցել և հանքագործների յոկառուտից մինչև տրեղյունիոնների վերաբերյալ որինագիծը, մենք վկա էյինք, մի կողմից մասսաների շարժման ավելի ու ավելի ձախանալուն և մյուս կողմից տրեղյունիոնական բյուրոկրատիայի՝ ձեռնարկատերերին ավելի ևս մերձենալուն: Շարքային տարրերից բաղկացած ձախ թևի աճումը բանվորական կուսակցության ներսում, փոքրամասնության շարժումի կոնֆերենցիաների կոչերի գտած յեռանդադին արձագանքը և կուսակցության ու փոքրամասնության շարժման ձեռք բերած հաջողությունները ածխային շրջանների պրոֆմիություններում կատարված ընտրությունների ժամանակ—վկայում են բանվորների շրջաններում ձախ շարժման ունեցած աճման մասին:

Սակայն բանվորական կուսակցության ձախ թևի և պրոֆմիութենական փոքրամասնության շարժումի այդ անվիճելի հաջողությունները չպետք է ծածկեն մեր առաջ այն փաստը, վոր այդ յերկու շարժումներն էլ համեմատաբար դեռ թույլ են պրոֆմիությունների և բանվորական կուսակցության բյուրոկրատիայի հզորության հանդեպ: Պրոֆմիութենական փոքրամասնության շարժումը, թեև քաղաքականորեն զգալի ազդեցություն ունի ազգային մասշտաբով, մանավանդ հանքագործների միջև և մի քանի հանրաճանաչ լիդերներ ունի,—այնուամենայնիվ դեռ յերևան է բերում, վոր նրա կազմակերպչական ունակությունը զգալի չափով հետ և մնում նրա ընդհանուր ազդեցությունից:

Ձախ թևի շարժումը—վոր զարգանում էր բանվորական կուսակցության տեղական կազմակերպչություններում իբրև հետևանք բանվորների պայքարի ընդդեմ այն փորձերի, վոր կատարում էր բյուրոկրատիան՝ բանվորական կուսակցությունը

բուրժուական լիբերալ մի կուսակցության վերածելու ուղղու-
թյամբ—կենսունակության և առաջադիմության նշաններ հայ-
տաբերեց։ Բանվորական կուսակցության ձախ թեւը պարզորոշ
ծրագրի և վոչ թե խավարման «ձախ» ֆրազների շուրջը կազմա-
կերպելու փորձերը միացրին ձախ թեւի ակտիվ աշխատավորնե-
րին, չնայած վոր այդ շարժման հանդեպ բյուրոկրատիայի տա-
ծած թշնամությունը հետ վանեց այդ շարժումից պարլամենտա-
կան ձախ ֆրազների սիրահարներին, ինչպես Լենսբերին և ընկե-
րությունն է։ Այն փորձերը, վորոնցով ռեֆորմիստները ջանում
էին այդ շարժումը պատկերացնել վորպես կոմունիստական մի
ինտրիգ, չնչին ազդեցություն ունեցան ձախ բանվորների վրա,
վորոնք շարունակում են աշխատակցել կոմունիստների հետ այդ
շարժման ներսում։ Սակայն դեռ շատ անելիք կա։

1. Անհրաժեշտ է շարժման մեջ քաղաքական պարզորոշու-
թյուն մտցնել։

2. Պետք է աջակցել նրա ամբողջ յերկրում զարգանալուն։

Կոմունիստական կուսակցությունը ամեն կերպ կաջակցի այդ
անհրաժեշտ աշխատանքին և գործնականում կապացուցի, թե
նա բանվորների իսկական առաջնորդն է այն պայքարի ասպարի-
զում, վոր ուղղված է բանվորական կուսակցության իմպերիա-
լիստական ու բյուրոկրատական կորրուպցիայի (փչացման) դեմ։

15. Արհմիությունների դեմ ուղղված որենադիժը, ցույց և
տալիս, վոր բրիտանական կապիտալիստները արհմիության
շարժման վերաբերմամբ մինչև այժմ գործադրված մեթոդներից
վճռապես նահանջել են։ Այս որինադիժը կապված է ձեռք առած
մի շարք այլ միջոցների հետ, վորպիսիք են Բլենսբուրդի գեկու-
ցումը, վոր ուղղված է գործադուրկների, և կառավարության
կողմից նախադժվող արժեքը աղքատների մասին, վոր նպատակ
ունի վերացնել այնպիսի բուրժուական—դեմոկրատական հիմնար-
կություններ, ինչպիսին է չքավորների հոգաբարձությունը, ու
դրանց գործունեյությունները հանձնել գրաֆությունների խոր-
հրդի պես կազմակերպություններին, վորոնք քիչ են յենթակա
բանվոր դասակարգի կոնտրոլին ու ճնշման։ Բանվորական կու-
սակցության և պրոֆմիությունների բյուրոկրատները վճռապես
հրաժարվեցին դեմ գնալ կառավարության ձեռք առած վերոհիշ-
յալ միջոցներին, այլ միայն աշխատեցին պահպանողական կառու-
վարության հետ համաձայնության գալով մեղմացնել այն։

Այսպիսով նրանք ոգնեցին պահպանողականների կառավա-

րությանը բանվորական շարժման դեմ անողոք կռիվ մղելու գործում :

16. Արհմիությունների որենազիծը կապիտալի կողմից բանվոր դասակարգի վրա հարձակվելու կուլմինացիոն կետն է և , վորպես այդպիսին , աշխատավարձի հետագա իջեցման , բանվորական որվա յերկարացման , աշխատանքի պայմանների վատթարացման , Չինաստանի դեմ հարձակման ուժեղացման և Սորհրդային Միության դեմ ռազմական հարձակում նախապատրաստելու նախաբանն է : Այն ժամանակ , յերբ կապիտալիստները հսկայական , արդյունադործության տարրեր ճյուղերն ընդգրկող կոմբինատներ են կազմում , յերբ կապիտալիստական պետությունը տրեստի ղեկավարների և ֆինանսիստների ձեռքին բանվորների դեմ պայքարելու բացորոշ գործիք է դառնում , տիրաբար թելադրելով իր բոլոր ուժերի ծայր աստիճան կենտրոնացման ու ուժեղացման անհրաժեշտությունը , — ահա այդ ժամանակ արհմիություններին արգելում են ոգտվելու այն միակ պետքական ղենքից , վորով կարելի չէ կռվել տրեստավորված ձեռնարկատերերի և կապիտալիստական պետության հզորության դեմ : Այն մոմենտին , յերբ զարգանում են հսկայական միջոցների տեր միջազգային կարտելները և յերբ բրիտանական կապիտալիստները բացորոշ ձգտում են այդ կարտելներին միանալու , անգլիական արհմիություններին արգելում են պայքարել կապիտալի այդ հսկայական կազմակերպությունների դեմ ավելի ազդեցիկ մեթոդներով , քան այն մեթոդները , վոր գործադրում էին XIX դարու արհշարժման մեջ :

Ընդհանուր գործադուլը ապորինի չէ հայտարարված , համակրանքի մասսայական գործադուլները ապորինի չեն հայտարարված , պատերազմի դեմ բողոքի գործադուլները , ինչ չափի յել ուղղում է լինի , ապորինի չեն հայտարարված , կառավարությունը փորձում է խախտել արհմիությունների իրավունքը՝ ձեռնարկատերերի հետ պայքարելու ժամանակ համերաշխություն ու դիտցիպլինա հաստատելու գործում : Նա ուժաթափ է անում մունիցիպալ և պետ . ծառայողների արհեստակցական կազմակերպությունը և փորձում է պետական ծառայողներին անջատել բանվոր դասակարգից , արգելում է արհմիություններին մուծումներ ընդունել քաղաքական նպատակների համար , այս կերպ հարված հասցնելով պարլամենտական պայքարին , վոր ռեֆորմիստները հակադրում էին արտասպարլամենտական գործողություններին , կառավարությունն անսահմանափակ իրավունք է վերապահում գե-

բազում ղափափակներն արհաւիրած ման վրա հսկելու գործում, վորպէսզի ասպահովի արհմիութեաններին վերաբերմամբ յեղած որեւէ չի կիրառումը:

Այս որինագծի նպատակն է, կաթմածահար անել արհեստակցական կազմակերպութեանները, արձակել կառավարութեան ձեռքերը, վորպէսզի նա կարողանա իրականացնել իր քաղաքականութեանը յերեք գլխավոր ճակատներում:

1. Արշավանք անգլիական բանվորներին աշխատավարձի, բանվորական որվա և աշխատանքի պայաններին դեմ:

2. Պայքարի հետագա ծավալումը չինական հեղափոխութեան դեմ:

3. Սորհրդային Միութեան դեմ պատերազմի նախապատրաստելը:

Բոլգովինի կառավարութեանը դեռ համարձակվում է հասարակութեան շահերի ներկայացուցչի դիրքն ընդունել այն ժամանակ, յերբ նա բնակչութեան մեծամասնութեան դեմ, բանվոր դասակարգի դեմ է արշավում, ցրելով այն արհմիութեանները, վորոնց վրա յեն հենվում բանվորները իրենց շահերի համար պայքարելիս: Նա ազատութեան և խաղաղութեան բարեկամի պաշտպան է ձեռնում, միեւնոյն ժամանակ կռիւնով չինական հեղափոխութեան դեմ և պատերազմ նախապատրաստելով ՍԽՀՄ դեմ:

17. Որինագիծը պահպանողական կառավարութեան անկեղծ ֆաշիստական քաղաքականութեան նոր արտահայտութեանն է: Մինչև ամենավերջին ժամանակները Անգլիայի կապիտալիստ դասակարգը դեռ հույս ուներ, վոր հնարավոր կլինի կառավարել արհմիութեանները ներսից՝ կապիտալիստական հոգեբանութեամբ տողորված և հիմնականում՝ կապիտալիզմի տեսակետը պաշտպանող բյուրոկրատիայի աջակցութեամբ: Սակայն արհմիութեաններին փոքրամասնութեան շարժումը ղեկավարող ձախթելի առաջացումը, վոր ամենաբարձր մակարդակին հասավ ընդհանուր գործադուլի ժամանակ, — կառավարութեանն համոզեց նրանում, վոր նա չի կարող հույս դնել բյուրոկրատիայի միջոցով արհմիութեաններում լիակատար կոնտրոլ ունենալու հնարավորութեան վրա, և վոր նա պիտի դիմի ճնշումների բարդ սխտեմին, վորպէսզի հնարավոր լինի կապել արհմիութեաններին վտանքներն ու ձեռքերը: Բոլգովինի հայտարարութեանը, վոր իբր թե որինագիծն անհրաժեշտ է, վորովհետև արհմիութեաններին մեջ փոքրամասնական շարժման ազդեցութեանն աճել է, յերևան է բերում կառավար-

բության իսկական հոգեբանությունը : Գիտակցաբար չափազան-
ցնելով արհարծման մեջ փոքրամասնության դերը , վորպեսզի վա-
խեցնի խանութպաններին և ռեֆորմիստական լիդերներին և ստիպի
նրանց շարունակելու իրենց արշավանքը կոմունիստների և ձախ-
բանվորների դեմ , Բոլշևիկներ , սակայն , ճիշտ էր , յերբ պնդում էր
վոր փոքրամասնության շարժման ազդեցությունն աճում է և ան-
խուսափելիորեն Անգլիայի տնտեսական վիճակի վատթարացման
գուգրնթաց կշարունակվի աճել , վորն ավելի պարզորոշ կերպով
յերևան կրերի արհարծման ռեֆորմիստական լիդերների սնանկու-
թյունը :

18. Արհմիությունների դեմ ուղղված որինազիծը կառավա-
րության դեմ գրգռեց ամբողջ բանվոր դասակարգին , հակառակ
ռեֆորմիստների այն բոլոր ջանքին , վորով աշխատում էյին նրանք
խեղդել պրոլետարիատի նախաձեռնությունը և ուղղել նրա վրդով-
մունքը դեպի անվտանգ ռեյլսներ : Այդ մասին վկայում են այս
տարվա մայիս մեկյան ցույցերի չափերը , վոր ավելի յեր անցյալ
տարվա՝ ընդհանուր գործադուլի նախորդակին տեղի ունեցած ցույ-
ցերի չափերից : Բանվորները հանդես են բերում ուժեղ ձգտում
որինազծի դեմ միասնաբար պայքարելու համար : Բանվորական
կուսակցությունից դուրս արված մի քանի կազմակերպություններ
ու արհսորհուրդներ տեղերում իրենց հեղինակությունը բարձրա-
ցրին որինազծի դեմ յեռանդուն պայքար կազմակերպելու շնորհիվ :
Բանվորները պաշտպանում են կոմունիստների առաջարկը՝ որենքի
դեմ գործադուլային պայքարի անհրաժեշտության մասին : Յեթե
արհմիությունները գիջեին նրանց ճնշմանը և հայտարարեյին ընդ-
հանուր գործադուլ , այդ դեպքում բանվորները 1926 թվի մայիսից
ավելի համերաշխություն յերևան կրերեյին : Որինազծի դեմ ռե-
ֆորմիստական լիդերների վարած պայքարի բնույթը յերևում է
վո՛չ միայն դեպի ընդհանուր գործադուլը նրանց ունեցած վերա-
բերմունքից , այլ նաև այն հանդամանքից , վոր նրանք հրաժարվում
են այդ պայքարը կապել Չինաստանի պատերազմի դեմ վարած
պայքարի հետ , մի հանդամանք , վոր արձակում է իմպերիալիստ-
ների ձեռքերը ռազմական քաղաքականության ասպարիզում և
թուլացնում է որինազծի դեմ վարած ռեալ պայքարը :

Արհմիության բյուրոկրատների ռապոզիցիան որինազծի վե-
րաբերմամբ ազմուկ է բարձրացնում , բայց այդ անկեղծ չի : Որին-
ազծով նախատեսնված միջոցները քիչ բացառությամբ , համա-
պատասխան են այն քաղաքականության , վոր վարում էր արհմիու-
թյան բյուրոկրատիան դեռ մինչև որինազիծը :

Տրեգյունյունների դործկոմների կոնֆերենցիան ցույց տվեց, Վոր արհմիության ղեկավար բյուրոկրատները մտադիր չեն գիմել ընդհանուր դործադուլի, կամ թե որինազի գեմ ուղղված յեւույթի մի այլ ձևի, այլ բավականացան նրանով, Վոր որենքին ուղղողիցիա ձեացան, Վորպեսզի ապագա ընտրություններին չկորցնեն բանվորների ձայները: Բանվորական կուսակցության լիդերները հրաժարվեցին պարլամենտում որսարուկիցիան այնքան ժամանակ շարունակել, մինչև Վոր կամ որինազի՞՞ը հետ կվերցվեր, կամ եւ համայնքների պալատից իրար հետեից դուրս կարվեյին բանվորական կուսակցության բոլոր պատգամավորները: Նրանք բավարարվեցին որինազի գեմ սովորական պարլամենտական ուղղողիցիայով: Նրանք սովանսով հայտնեցին բանվորներին, Վոր որինազի՞՞ը հավանաբար կանցնի պարլամենտում, բայց թե բանվորները կարող են տապալեալն հերթական ընդհանուր ընտրություններից հետո: Նրանք սակայն հհայտնեցին բանվորներին, Վոր այդ որինազի՞՞ը միմիայն մի ողակ ե այն մի շարք միջոցների շղթայի մեջ (ներառյալ նաև լորդերի սպալատի բարենորոգումը), Վորի նպատակն ե բանվորական կուսակցության հաղթանակն անկարելի դարձնել: Բանվորական կուսակցությունը խաբում ե բանվորներին հայտարարելով, Վոր նրանք հեշտությամբ կտապալեն որինազի՞՞ը հերթական ընդհանուր ընտրություններից հետո: Դիմելով այդ խաբերալության բանվորական կուսակցության և արհմիությունների լիդերները յերևան են հանում իրենց հակահեղափոխական դերը:

Արհմիությունների որինազի՞՞ և Ջինաստանի ինտերվենցիայի գեմ պայքարելու փորձը լրիվ չափով հաստատեց VՄ ընդլայնված պլենումի թեզիսների ճշտությունը, Վոր նշում եր արհմիության բյուրոկրատիայի համախմբվածության և մի շարք նախկին «ձախերի» աջ ղեկավարների մոտ անկեղծ ծառայության անցնելը: Մի քանի այդպիսի լիդերներ, ինչպես Հիքսն ու Պերսելը, գեո շարունակում են ձախ թեի կարծեցյալ դերը խաղալ միայն խոսքերով, գիմելով ձախ Փրադեոլոգիայի, բայց նրանք բոլոր եյական ու կարեոր հարցերում դործում են Վորպես աջ թեի կամակատարներ:

19. Ինչպես արհմիությունների լիդերները նույնպես և բանվորական կուսակցության ղեկավարները հրաժարվեցին կոմկուսակցության հետ միասին իրականացնել միասնական ճակատ արհմիությունների որինազի՞՞ գեմ պայքարելու համար:

Նրանք այդ բիլլի գեմ պայքարելու ժամանակ նույնիսկ շարունակում են իրենց պատակառողական քաղաքականությունը բանվոր-

բաղան շարժման շարքերում, արտաքսելով բանվորական կուսակցության շարքերից ձախ կազմակերպություններին: Ընդհանուր գործադուլին նախորդող ամիսներին կուսակիլած փորձը նրանք հաշվի առան և հակառակեցին գործողութայն խորհուրդներ կազմելուն, հիշելով, Վոր այդ խորհուրդներն անխուսափելիորեն կը դառնան բանվորներին մորիլիզացիայի յենթարկելու մի միջոց՝ ղեկավարների վրա ճնշում գործադրելու համար: Նրանք խեղդեցին տեղերի նախաձեռնությունը կամպանիայի ժամանակ, դրա ղեկավարությունը հանձնելով արհմիությունների և բանվորական կուսակցության վճարովի պաշտոնարար անձանց, վորոնք հրաժարվում էին ստորին խավերի կարծիքները հաշվի առնել: Բանվորներին որինազդի նշանակությունը բացադրելու համար գումարված տեղական կոնֆերենցիաները կազմվում էին այնպես, Վոր ստորին խավերը հնարավորություն չունենան արտահայտել իրենց հայացքները: Այդ որինազդի դեմ պայքարելու համար պրոֆմիությունների և բանվորական կուսակցության լիդերների ձեռքով ստեղծված կազմակերպությունները նպատակ ունենին բանվորների նախաձեռնությունը խեղդել և հեռու պահել նրանց ակտիվ գործողություններից:

20. Գործկումը հաստատում է այն քաղաքական ճշտությունը, Վոր ընդունել և Մեծ Բրիտանիայի կոմկուսակցությունը կկ Պլենումի ապրիլի 12-ի արտակարգ նիստում: Պլենումի այդ նիստին կկ հետևյալ կերպ ձևակերպեց կուսակցության խնդիրները որինազդի վերաբերմամբ:

1) Մեծ Բրիտանիայի բանվորներին պարզաբանել որինազդի նշանակությունը, Վորպես արշավանք բանվորների վրա և նոր պատերազմների նախապատրաստման մի ետապ:

2) Կամպանիային խանգարող բյուրոկրատական պատվարները ձեղքել և բանվորներին տեղերում մորիլիզացիա անել, աշխատել գործողութայն խորհուրդներում, Վորոնցում ներկայացվելու յեն բանվորական շարժման բոլոր խավերը, Վորպեսզի յեռանդուն պայքար մղվի որինազդի դեմ:

3) Մասնաների ճնշում կազմակերպել բանվորական կուսակցության վրա, Վորպեսզի վերջինս որինազդի դեմ պայքարելու համար պարլամենտական որսորուկցիայի դիմի:

4) Կազմակերպել իսկական մասսայական ցույցեր, այսինքն բանվորների յերթեր:

5) Դիմակադերձ անել նրանց, ովքեր պնդում են, իբր թե որին-

նագիծը պիտի անցնի և իբր թե բանվորների միակ հույսը հերթա-
կան ընդհանուր ընտրությունները պիտի լինեն :

6) Ուժեղացնել պրոպագանդան բանվորական ինքնապաշտպա-
նության խմբի կազմակերպելու ուղիին :

7) Որինազծի դեմ ամբողջ ազխտացիան ուղղել նրան , վոր պա-
հանջվի բոլոր բանվորների իսկական ընդհանուր դործադուլ , վոր-
պեսզի դրանով պարլամենտի կողմից որինազծի ընդունման առաջն
առնվի և կառավարությունն ստիպվի հրաժարական տալ :

Ընդհանուր դործադուլը պետք և կազմակերպվի տրեդյունյունների
դործկոմների և ստորին խավերի ներկայացուցիչների արտակար-
գոնֆերենցիայում , ըստ վորում այդ կոնֆերենցիայի գումարումը
պիտի հաջողեցնել՝ կազմակերպելով բանվորների մասսայական
ճնշում՝ ձեռնարկությունների , արհմիությունների , բանվորական
կուսակցության տեղական կազմակերպությունների մեջ և այլն :

21. Որինազծի դեմ սլայքարը բանվորական շարժման շարքե-
րում կուժեղացնի շերտավորման պրոցեսը , վորը ել ավելի սերտ
կմիացնի բյուրոկրատների մեծամասնությունը կոմունիստների և
ձախ բանվորների դեմ : Դա տեղի կունենա ինչպես բանվորական
կուսակցության , այնպես ել արհմիության շարքերում : Մյուս
կողմից ձախ բանվորների և նույնիսկ պրոֆմիության և բանվորա-
կան կուսակցության բազմաթիվ ստորին սլաշտոնարար անձանց
ձգտումը դեպի կոմունիստական կուսակցությունը ստանում և բա-
ցորոչ ձև : Մեծ Բրիտանիայի կոմունիստական կուսակցության
առջև բացվում են լայն հնարավորություններ , յեթե նա կարողա-
նա իր առաջ ծառացած բարդ ու դժվարին խնդիրները լուծել : Այն
խնդիրները մանրակրկիտ քննության առարկա յեն յեղել Անգլ . կկկկ
մի շարք պլենար նիստերում և շրջանային կոնֆերենցիաներում :

22. Արհմիությունների որենազծի վերաբերմամբ իր քաղաքա-
կանությունը վորոշելիս Անգլիայի ԿԿ ճիշտ կերպով առաջ և քաշել
իսկական ընդհանուր դործադուլի պահանջը՝ որենագրքի դեմ պայ-
քարելու և կառավարության հրաժարման համար :

23. Գործկոմն ընդունում և , վոր բանվորական կուսակցու-
թյունից դուրս արված կազմակերպությունների և տեղերում ,
նրանց դիրքերի պահպանման համար մղած պայտրի հարցը մեր
կուսակցության վրա պարտք և դնում յեռանդուն դործակցել ձախ
բանվորների հետ , աջակցելով դուրս արված տեղական կազմա-
կերպությունների վարած պայքարին : Գործկոմը հավանություն և
տալիս այն դիրքին , վոր բռնել և կուսակցության ԿԿ Լեյբոր Պարտի
դուրս արված կազմակերպությունների վերաբերմամբ , վոր բեր-

ված և Մեծ Բրիտանիայի ԿԿ ԿԿ փետրվարի 2-ի բանաձևում և հետագայում հաստատվել և ԿԻ քաղ-քարտուղարության բանաձևով :

24. Գործկոմը հաստատում և այն պիժը , վորը վարում և կուսակցությունը հակամիլիտարիստական աշխատանքի հարցում : Գործկոմը զգուշացնում և բրիտանական կուսակցությանը , նրա ուշադրությունը հրավիրելով պացիֆիստական և կիսապացիֆիստական տրադիցիաների և տենդենցների վտանգավոր լինելու վրա , դորոնք առանձնապես վտանգավոր են Անգլիայում տիրող ներկա դրության պայմաններում , յերբ պահպանողական կառավարությունը բացահայտ կերպով նոր պատերազմներ և պատրաստում :

25. Գլխավոր խորհրդի մարտի 25-ի շրջաբերականը , վորը պարունակում և ուղտիմատիվ պահանջ փոքրամասնության շարժման հետ բոլոր հարաբերությունները խղելու վերաբերյալ դուկումենտ ստորագրելու մասին , գործկոմի պլենումը ընդունում և մի կողմից , վորպես մի փորձ խստությունների միջոցով կազմայուծման ու բարոյալքման յենթարկելու արհմիությունական խորհուրդները հանքագործների ընդհանուր գործադուլի և չոկաուտի ժամանակ նրանց ցույց տված գործնեության համար , և մյուս կողմից՝ վորպես մի ողակր ուժգործիստական բյուրոկրատիայի այն կամպանիայի , վորի նպատակն և մեկուսացնել կոմունիստներին և փոքրամասնության շարժման կողմնակիցներին , մի կամպանյա , վորն ուղնում և Բոլդվինի կառավարությանը կիրառելու կյանքում արհմիությունների վերաբերյալ որինազիժը , ինչպես և իրականացնելու նրա իմպերիալիստական քաղաքականությունը , պատերազմելու Չինաստանի դեմ , և պատերազմ պատրաստելու ԽՍՀՄ դեմ : Պլենումը առաջարկում և Մեծ Բրիտանյայի կոմունիստական կուսակցությանն ավելի մեծ յեռանդով շարունակել Գլխավոր Խորհրդի մերկացման կամպանիան , կապակցելով այն նրա անարդ և մինչև այժմս չլսված ուղտիմատումի հետ և արհխորհուրդներում ու արհմիություններում սկսել կամպանյա , վորի նպատակը պետք և լինի ձգտել այդ դեկումենտն առաջին իսկ հնարավորության դեպքում վոչնչացնելուն :

Գործկոմը հայտարարում և , վոր ներկա ժամանակաշրջանում բրիտանական կուսակցության բոլոր խնդիրները պետք և յենթարկվեն բրիտանական իմպերիալիզմի ագրեսիվ քաղաքականության դեմ ակտիվ պայքար մղելու անհրաժեշտությունը , վորպիսի քաղաքականությունն իր արտահայտությունն և գտնում արհմիությունների դեմ ուղղված որինազիժի մեջ Չինաստանի դեմ

մղվող պատերազմի մեջ, նոր պատերազմի պատրաստութեան մեջ
և այն պաշտպանութեան մեջ, վոր ռեֆորմիստ լիդերները ցույց
են տալիս այդ քաղաքականութեանը:

Բանվորներին Բուլգիինի կառավարութեան հետ պայքարելու
համար ավելի հաջող կերպով մորլիդացիայի յենթարկելու համար,
Մեծ Բրիտանիայի կոմունիստական կուսակցութեանը պետք է յա-
ռանդուն պայքար մղի ռեֆորմիստներին, բանվորական կուսակցու-
թեան, արհմիութեաններին քաղաքականութեան և հակակոմունիս-
տական պատակաստղական վորոշումներին դեմ:

26. Հերթական խնդիրները սրանք են. — Ինտենսիվ պայքարել հա-
կակոմունիստական վորոշումներին դեմ հատկապես արհեստակցու-
կան միութեաններին շարքերում և ուժեղ կամպանիա ծավալել բան-
վորական կուսակցութեան տեղական կադմակերպութեաններում,
արհմիութեաններում և այլն, նրա համար, վորպեսզի վերացվեն
հակակոմունիստական վորոշումները, մաքրելով, այդպեսով, բան-
վորական կուսակցութեան իմպերիալիստական քայքայման դեմ
պայքարելու ճանապարհը, նպատակ ունենալով բանվորական կու-
սակցութեանը դարձնել բանվոր դասակարգի պայքարի իսկական
մի զենք:

Ավելի ակտիվ համադործակցութեան ստեղծել կոմունիստա-
կան կուսակցութեան անդամներին և ակտիվ ձախ բանվորներին միջև:

27. Պետք է հակահարված տալ արհմիութենական բյուրոկրատ-
ներին կողմից արհմիութենական խորհրդների, կոմունիստներին ի-
րավունքների և փոքրամասնութեան կողմնակիցների դեմ սկսված
արշավանքին, աջակցելով փոքրամասնութեան մասսայական շար-
ժում առաջացնելու գործին. դիտելով այդ բանը վորպես հիմնա-
կան միջոց արհմիութեաններին վերակազմութեան և ռեֆորմիս-
տական լիդերներին հեղափոխական բանվորներով փոխարինելու
համար:

Ընդ սմին պլենումը նշում, վոր մինչև այժմ կուսակցութեանը
փոքրամասնութեան շարժման բավարար չստիով պաշտպանու-
թեան ցույց չի տրվել:

Պատերազմի սպառնալիքի հանդեպ Մեծ Բրիտանիայի կ. կ.
պետք է անի հետևյալը.

1) Իր մամուլի և գրականութեան մեջ ավելի համակողմանի
կերպով մերկացնի բրիտանական իմպերիալիստի միտումները
ուղղված Խորհրդային Միութեան դեմ, ցույց տալով, վոր Անգ-
լիայի կողմից ԽՍՀՄ հետ իր հարաբերութեանները խղելը մի մա-

սըն և այն պրովակացիոն կամպանյայի, վորը տանում և դեպի պատերազմ Սորհրդային Միության դեմ:

2) Դրդել բանվորական շարժմանը, վորպեսզի նա չաղկապի արհմիությունների որինազծի դեմ ուղղված կամպանյան այն կամպանիաների հետ, վոր մղում և նա Չինաստանում պատերազմ մղելու և ԽՍՀՄ վերաբերմամբ բրիտանական կառավարության ռազմաչունչ դիրքի դեմ, առաջադրելով հետևյալ լողունները «Պատերազմել Սորհրդային Ռուսաստանի դեմ, կը նշանակե պատերազմել անգլիական բանվորների դեմ», «Բոլորիների պարտությունը անգլիական Ժողովրդի հաղթությունն և», «պատերազմ աշխատավարձը պակասեցնող, արհմիությունները ափերմունքի յենթարկող և պատերազմ պատրաստող կառավարության դեմ», «պատրաստվեցեք մասսայական յեկույթների ջախջախելու պատերազմ պատրաստողներին», «աշխատեք հասնել այնպիսի դրության, վորպեսզի վերակալեն դիվանագիտական հարաբերությունները Սորհրդային Միության հետ»: 3) Կուսակցուներ պետք և ավելի մանրամասն, քան առաջ, բացատրի իր անդամներին կի դերը պատերազմի դեմ պայքարելու գործում, 4) Կուսակցությունը պետք և մերկացնի պացիֆիստական լողունները, առանձնապես նա պետք և մերկացնի անկախ բանվորական կուսակցության և արհմիությունների այսպես կոչված ձախ լիզերների բռնած դիրքը, 5) նա պետք և պարզաբանի բանվորների համար պատերազմի սպառնալիքի դեմ տարվող պայքարի հիմնական մեթոդները:

29. Կոմունիստական կուսակցությունը, առաջվա նման, բանվորներին պետք և պարզաբանի Մեծ Բրիտանիայի բանվորների և Սորհրդային Միության պրոլետարիատի դաշնակցելու կարևոր նշանակությունը, վորպիսի միասնականությունը բացարձակապես անհրաժեշտ և դառնում բրիտանական կառավարության վարած միլիտարիստական քաղաքականության հետևանքով: Կուսակցությունը պետք և բացատրի բանվորներին, վոր ամբողջ Գլխավոր Սորհրդի սարսափի ջորհիվ, սկսած Հիթլերից և Պերսելից մինչև Թոմասը, անգլո-ռուսական կոմիտեն դեռ ևս չի իրականացրել իր մեծ խնդիրը: Գլխավոր Սորհրդերը ոուս բանվորների հետ միասնականություն հաստատելու հարցում միշտ յերկդիմի խաղ և խաղացել: Միասնականությունը նա խոսքերով և պաշտպանել, բայց յերկու կողմերի բանվորների միջև իսկական միություն սահմանելու դեմ միշտ խոչնդոտներ և հարուցել:

Գլխավոր խորհրդի այդ քաղաքականությունը հստակ կերպով յերևան յեկան անդլո-ռուսական կոմիտեյի վերջին նիստերում, առանձնապես ընդհանուր գործադուլի, հանքագործ բանվորների պայքարի և Չինաստանի ինտերվենցիայի դեմ պայքարելու հարցերում: Կոմունիստական կուսակցությունը պարտավոր է առանձնապես բացատրել իսկական նշանակությունը Բերլինում տեղի ունեցած վերջին կոնֆերենցիայի, վորտեղ Գլխավոր խորհրդի անդլո-ռուսական կոմիտեյի իրավունքները ընդլայնելու փոխարեն, պընդում ել կոմիտեյի կանոնադրության կիրառման վրա, վորին և հաստատվ: Կոմիտեյներ իր հավանությունն և տալիս բրիտանական կուսակցության հայտարարությանը, վորով նա Գլխավոր խորհրդի վրա յե դնում Բերլինի վերջին կոնֆերենցիայի հետևանքների սխառասխանատվությունը: Անդլո-ռուսական կոմիտեյի վերջին տարվա պատմությունը լիովին արդարացնում է Բրիտանական կոմունիստական կուսակցության դիրքը, վորը բանվորներին բացատրում էր, վոր Գլխավոր խորհուրդը պատասխանատու չէ այն զիջումների համար, վորոնք արվել են ռուսական արհմիությունների կողմից և վորոնք ծառայում են վորպես նոր ապացույց այն բանի, վոր խորհրդային արհմիությունները անկեղծ կերպով ձգտում են իսկական միասնականության:

Միաժամանակ պլենումը հավանություն և տալիս կոմունիստական կուսակցության կողմից—հանքագործ բանվորների միջև—տարվող կամպանիան՝ վորի նպատակն է միասնականություն հաստատել բրիտանական հանքագործ բանվորների և խորհրդային հանքագործների միջև:

Միանգամայն հիմնավորված է այն քննադատությունը, վորին յենթարկում է կուսակցությունը հանքագործ բանվորների լիդերներին, վորոնք գործնականապես արդելք են հանդիսանում հանքագործների անդլո-ռուսական կոմիտե ստեղծելու գործին: Այդ լիդերները վոչ միայն հրաժարվեցին հանքագործների միացյալ կոմիտե կազմելուց, այլ և Բրիտանական հանքագործների թագցնում են այդ մտքով խորհրդային հանքագործ բանվորների կողմից արված առաջարկությունը:

30. Բրիտանական իմպերիալիզմի ռադիկալիզմը քաղաքականությունը, ՍՍՀՄ նկատմամբ, նրա ռադիկալ ինտերվենցիան Չինաստանում, նրա կողմից իր իշխանության ներքո դնված գաղութային ժողովուրդների գաղանային ճնշումը—Մեծ Բրիտանիայի կոմունիստական կուսակցությանը դնում էր իմպերիալիզմի դեմ մղվող պայքարի ուժեղացման անհրաժեշտության առաջ,

ստիպում եր մերկացնել բրիտանական խմայերիալիզմի քաղաքականությունը, բանվորական շարժման պայքարել խմայերիալիստական տենդենցների դեմ, բացորոշ կերպով ցույց տալ բանվորներին, վոր դադութային ժողովուրդները պայքարում են նույն կապիտալիստական թշնամու դեմ, ինչպես և իրենք, և վոր բանվորական շարժման ու դադութային պայքարող ժողովուրդներին միասնականությունը կապահովի թե մեկ և թե մյուս կողմի հաղթանակը:

Մեծ Բրիտանիայի կոմունիստական կուսակցությունը առաջվա նման պետք և իր բոլոր ջանքերը դործ դնի այն բանի վրա, վորպեսզի ամենա սերտ փոխհարաբերություններ հաստատուեն Մեծ Բրիտանիայի բանվորների և դադութային յերկրների բանվորների, գյուղացիների ու ազգային շարժման մեջ, նմանապես և ամեն կերպ աջակցի դադութային ժողովուրդներին՝ այն պայքարում, վոր մրդում են նրանք իրենց անկախության համար:

Նկատի ունենալով այն խոշոր դերը, վոր յերիտասարգությունը պետք և խաղա խմայերիալիզմի, պատերազմի և միլիտարիզմի դեմ մղվող պայքարում, կուսակցությունը յերիտասարգության կոմունիստական միությանն ամելի ակտիվ պաշտպանություն պետք և ցույց տա և ոգնի նրան նրա առաջադրած խնդիրները լուծելու հարցում:

Կազմակերպչական առպարիզում Մեծ Բրիտանիայի ԿԿ գլխավոր խնդիրը կայանում և նրանում, վոր վերացնի այն անհամապատասխանությունը, վոր գոյություն ունի նրա անդամների թվի միջև լեռնային արդյունաբերության և արդյունաբերություն ալլ հիմնական ճյուղերի մեջ, ինչպես և կոմունիստական կուսակցությունը բանվորների մասսայական կազմակերպության վերածելու մեջ:

Գործկոմի պլենումը հաստատում և կազմակերպչական այն խնդիրները, վորոնք ձևակերպվել են 7-րդ ընդլայնած պլենումի բանաձևում՝ կանանց, կոմսոմոլի մեջ և գործարանային բջիջներում տարվելիք աշխատանքի վերաբերյալ: Հատուկ ջանքեր պետք և գործ դնել գործարանային բջիջների և գործարանային լրացրերի թիվն ամելացնելու համար: Կուսակցությունը պետք և ամենայեռանդուն կերպով ձեռնարկի նոր անդամների քաղաքական պատրաստականության աշխատանքին, նոր անդամագրված բանվորներին կուսակցության մեջ ամրապես հաստատելու նպատակով:

Արհմիությունների օրինադի և պատերազմի սպարնալիքի

դեմ մղվող պայքարը պետք է ամենայնուհետև կերպով հիմք ծա-
ռայի նոր անդամներ դրավելու գործին :

Գործկոմը գտնում է , վոր դիվանագիտական հարաբերություն-
ների խզման հետևանքով ստեղծված դրությունը լուրջ պատա-
խանատվություն է դնում փոքրաթիվ կոմունիստական կուսակ-
ցության վրա : Նա հավատացած է , վոր անգլիական կուսակցու-
թյունը ի վիճակի կլինի պահպանել և ել ավելի լայնացնել բան-
վորական մասսաների հետ ունեցած իր կապը , և ինչպես անցած
ճգնաժամի ժամանակ , կարող կլինի յեռանդուն կոմունիստական
քաղաքականություն տանել , առաջնորդելով մասսաներին դեպի
պայքար՝ Բոլշևիկների կառավարության դեմ , վորպեսզի ստիպի նրան
հրաժարական տալ :


Վերև թված լողունները հետևանքով կուսակցությունը պետք
է հետևյալ աշխատանքը տանի . 1) ուշի ուշով մերկացնի անգլիա-
կան կառավարության կողմից Խորհրդային Միության դեմ ուղղ-
ված կեղծիքների և սլոպոկայականների կամպանիան և պարզաբա-
նի այն ռազմական և դիվանագիտական միջոցները , վոր արդեն
ձեռք են առնված Մեծ Բրիտանիայի կողմից՝ ԽՍՀՄ ողակելու նրա
քաղաքականության հետևանքով , 2) պարզաբանի Խորհրդային
Միության նվաճումները սոցիալիզմի շինարարության ասպարի-
զում և դրանից բխող ԽՍՀՄ բանվոր դասակարգի ույթի աճման
կարևորությունը , վոր հնարավորություն է տալիս Խորհրդային
բանվորներին ոգնել մյուս բոլոր յերկրների բանվորներին այն
պայքարում , վոր մղում են նրանց ճնշման դեմ :

3. Առարկայական պարզաբանումն այն փաստի , վոր աջակ-
ցելով ձեռնարկատերերի՝ աշխատավարձի վրա կատարած հարձակ-
մանը , և մտցնելով այնպիսի որինազիծ , վորի նպատակն է ջախ-
ջախել արհմիությունները , կառավարությունն այժմ անցնում է
յերկրի առևտրի կազմալուծմանը , առաջ բերելով գործադրկու-
թյուն :

4. Դիվանագիտական հարաբերությունների խզման և պատե-
րադմի սպառնալիքի դեմ տարվող կամպանիան կուսակցությունը
պետք է չադկապի արհմիությունների որինազիծի դեմ տարվող
կամպանիայի հետ , պնդելով այն բանի վրա , վոր բանվորական
կուսակցությունը և տրեդյունիոնների կոնգրեսն ընդհանուր կամ-
պանիա տանեն ինչպես արհմիությունների որինազիծի , այնպես ել
ԽՍՀՄ հետ հարաբերությունները խզելու դեմ . 5. Արհմիություն-
ների որինազիծի և պատերազմի սպառնալիքի դեմ պայքար պատ-
րաստելու համար կուսակցությունը պետք է ընդգծի բանվորների

կողմից տեղերում գործողութեան խորհուրդներ ստեղծելու անհրաժեշտութեանը: Նա պետք է հսկուա ընդհանուր գործադուլի իր տարած ազխտացիան ուժեղացնի նրա համար, վորպեսզի կառավարութեանը ստիպի հրաժարական տալ:

Պլենումը համապատասխան է, վոր Անգլիայի կոմունիստական կուսակցութեանն ի վիճակի կլինի անգլիական պրոլետարների և բոլոր աշխարհի պրոլետարների համար վորձութեան այս ծանր ժամին մասսաները մորիլիդացիայի յենթարկել ռեակցիան կառավարութեան դեմ իրական պայքար մղելու համար, վորը ներկայումս իր արչաւանքն է իրագործում անգլիական բանվորների դեմ, չինական ժողովրդի դեմ և պատրաստում է նոր ահուկի պատերազմներ և առաջի հերթին պատերազմ և պատրաստում ԽՍՀՄ դեմ:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ԵՐԵՎԱՆ
ՀԱՅԿԻՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0003771

A^{II}23275

ጥቅምት 15 ሐምሌ

[224.